**Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ**
**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց**

**9 նոյեմբերի 2017 թվականի N 47**

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
----------------------------------------------------------------------------------------------

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործառնական ծրագրին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 30
Երևան

35004c67e1ad8e95e679de964e8de90d

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
նոյեմբերի 9-ի նիստի N 47
արձանագրային որոշման

# Գ Ո Ր Ծ Ա Ռ Ն Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ........ 2

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ........ 5

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ ........ 5

ՔԱՐՏԵԶՆԵՐ ........ 7

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ ........ 7

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 8

II. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ........ 8

2.1.ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ........ 8

2.2.ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ ........ 10

2.3. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ........ 14

2.4. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 16

2.5. ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ........ 19

2.6. ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ........ 23

2.7. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 28

2.8. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ ........ 31

2.9. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ ........ 42

2.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ ........ 46

2.11. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ........ 54

2.12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ........ 56

III. ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT) ........ 58

IV. ՄԱՐԶԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 67

V. ՏԶԳԾ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ........ 69

1–ԻՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ........ 751

1-ԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ – ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ (ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՋՈՒՐ, ԳԱԶ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (ՏՀՏ), ԵՎ ԱՅԼՆ) ........ 762

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.1 – ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ........ 762

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2 – ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ........ 784

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.3 – ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ..................... 796

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.4 – ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ................ 807

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.5 – ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԿԱՊԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ (ՏՀՏ) ԶԱՐԳԱՑՈՒՄ ........ 82

2 –ՐԴ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ (ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՍՊՈՐՏ ԵՎ ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ) ........ 84

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.1 – ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ........ 84

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.2 – ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ........................... 863

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.3 – ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ........ 88

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.4 – ՍՊՈՐՏԱՅԻՆ, ԺԱՄԱՆՑԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ........ 90

3-ՐԴ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ – ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ (ՊԱՇՏՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ, ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ ԵՎ ԱՅԼՆ)...................... 92

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.1 – ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ........ 92

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.2 – ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԱՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ........ 94

2-ՐԴ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ – ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ - ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ…………………………….97

4-ՐԴ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ – ԲԻԶՆԵՍ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱՐԿԵՐ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐ, ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԵՐ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ, ՖԵՐՄԱՆԵՐ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ)99

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4.1 – ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱՐԿԵՐ ԵՎ ՆՄԱՆԱՏԻՊ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ........ 99

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4.2 – ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ........ 101

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4.3 – ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ........ 103

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4.4 – ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԴԵՊԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ, ՖԵՐՄԱՆԵՐ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՄԻԱՎՈՐՆԵՐ........ 104

5-ՐԴ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ – ԽԹԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆԸ, ԲԻԶՆԵՍԻՆ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ (ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՍԵԿՏՈՐՆԵՐ՝ ԱԳՌ-ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ, ՏՀՏ ՈԼՈՐՏ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ-ԶԱՐԳԱՑՈՒՄ-ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ) .... 106

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 5.1 – ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ, ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ............................. 106

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 5.2 – ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻԿՐՈ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.......... 108

6-ՐԴ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ – ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՔԱՂԱՔԻ/ ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ) ........ 111

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6.1 – ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ........ 111

3-ՐԴ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ – ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ........ 1134

7-ՐԴ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ – ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ)........ 1145

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 7.1 – ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ............................................................... 1145

8-ՐԴ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ – ԽԹԱՆՆԵՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐ ԱՄԵՆԱԼԱՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐԶԵՐԻՆ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՅԼՆ) ........................................................................................................ 1167

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 8.1 – ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐ ........................................................................... 1167

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 8.2 – ՀԱՏՈՒԿ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ .................................................... 1178

VI. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ………………………………………………..129

VII. ԲՅՈՒՋԵ………………………………………………………………………………………………………..133

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Հիմնական հապավումները տրամադրվում են ստորև, իսկ մնացածը՝ փաստաթղթի տեքստում:

| | |
|---|---|
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ԱԶԲ | Ասիական զարգացման բանկ |
| ՀԶՌ | Հայաստանի զարգացման ռազմավարություն |
| ՀՏԶՌ | Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն |
| ՀՏԶՀ | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| ՀԱԷԿ | Հայկական ատոմային էլեկտրակայան |
| ՓԲԸ | Փակ բաժնետիրական ընկերություն |
| ՎԶԵԲ | Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ |
| ԵՄ | Եվրոպական Միություն |
| ՀՆԱ | Համախառն ներքին արդյունք |
| ՀԱԱ | Համախառն ավելացված արժեք |
| ՏՀՏ | Տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաներ |
| ՏԿԶՆ | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմին |
| ՄԳ | Մոնիտորինգ և գնահատում |
| ԶԼՄ | Զանգվածային լրատվության միջոցներ |
| ՈԿԿ | Ոչ կառավարական կազմակերպություն |
| ԱՎԾ | Ազգային վիճակագրական ծառայություն |
| ՍՊԸ | Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմիններ |
| ՆՈՒՀ | Նախադպրոցական ուսումնական հաստատություն |
| ՏԶ | Տարածքային զարգացում |
| ՏԶԳԾ | Տարածքային զարգացման գործառնական ծրագիր |
| ՏԶՌ | Տարածքային զարգացման ռազմավարություն |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՈՒԹԿՀՎ | Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ |
| ՀՎԷԷՀ | Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի |

# ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ Ք. ԵՐԵՎԱՆԻ ....... 12
ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ, ԸՍՏ ՍԵՌԻ ....... 135
ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՍՏ ԱԶԳՈՒԹՅԱՆ ....... 13

Աղյուսակ 4. ՀՀ քաղաքային բնակավայրերի բնակչությունը ... 16
Աղյուսակ 5.ՀՀ ճանապարհային ցանցի խտությունը ... 20
Աղյուսակ 6. ՀՀ մարզերի քաղաքային բնակավայրերի ճանապարհային ցանցի վիճակը 2016թ., կմ ... 20
Աղյուսակ 7. ՀՀ երկաթուղային ցանցի խտությունը ... 21
Աղյուսակ 8. ՀՀ էլեկտրաարտադրող հզորությունները ... 21
Աղյուսակ 9. ՀՀ մարզերի բնակչության ջրամատակարարման միջին տևողությունը 2016 թ. ... 22
Աղյուսակ 10. Տնային տնտեսությունների մեկ շնչին ընկնող դրամական եկամուտները և սեփական եկամուտները, 2015թ. ... 25
Աղյուսակ 11. Տնային տնտեսությունների մեկ շնչին ընկնող դրամական եկամուտները, ըստ աղբյուրների, 2015թ. ... 26
Աղյուսակ 12. Միջին անվանական ամսական աշխատավարձ ... 26
Աղյուսակ 13. Միջին ամսական անվանական աշխատավարձը, ըստ տնտեսության հատվածների, 2013-2015թթ. ... 27
Աղյուսակ 14. Տնտեսական ակտիվության մակարդակը, % ... 28
Աղյուսակ 15. Տնտեսական ակտիվության մակարդակը, ըստ բնակավայրերի % ... 28
Աղյուսակ 16. Զբաղվածության բաշխումը % ... 29
Աղյուսակ 17. Ոչ ֆորմալ զբաղվածությունն ըստ տնտեսության ոլորտների ... 29
Աղյուսակ 18. Գործազրկության մակարդակը, ըստ սեռերի ... 30
Աղյուսակ 19. Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը՝ ըստ աշխատանք փնտրելու տևողության ... 30
Աղյուսակ 20. Աշխատուժի առաջարկը, 2015թ. դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ ... 30
Աղյուսակ 21. Աշխատանք փնտրողներ ԵՎ աշխատանքով ապահովածներ, 2015թ. ... 31
Աղյուսակ 22. 2016թ. արդյունքներով յուրաքանչյուր մարզին բաժին ընկնող եկամտային հարկի չափը ... 32
Աղյուսակ 23. 2016թ. 1000 խոշոր հարկ վճարողները, ըստ վճարված հարկերի ԵՎ գրանցման վայրի ... 32
Աղյուսակ 24. ՀՀ մարզերի և Երևանի տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետությունում, 2015թ. ... 33
Աղյուսակ 25. ՀՀ մարզերի և Երևանի բնակչության 1 շնչին ընկնող արդյունքը, ըստ տնտեսության ճյուղերի 2015թ ... 33
Աղյուսակ 26. Արդյունաբերական արտադրանքի ծավալը ընթացիկ գներով, մլն ՀՀ դրամ 2011-2015թթ. ... 34
Աղյուսակ 27. Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը ընթացիկ գներով, մլն ՀՀ դրամ 2011-2015թթ ... 34
Աղյուսակ 28. Արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ արտադրության բաժինների, 2015 թ. ... 35
Աղյուսակ 29. Գյուղատնտեսության համախառն արտադրանք, ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ 2011-2015թթ. 35
Աղյուսակ 30. Գյուղատնտեսական արտադրանքի ծավալի աճը ընթացիկ գներով, մլն ՀՀ դրամ 2011-2015թթ. ... 36
Աղյուսակ 31. Գյուղատնտեսական համախառն արտադրանքը, ըստ ճյուղերի 2011-2015թթ. ... 36
Աղյուսակ 32. Շինարարություն, 2011-2015թթ. մլն.դրամ (ընթացիկ գներով) ... 37
Աղյուսակ 33. Մանրածախ առևտրի շրջանառությունը (մլն. դրամ) ... 38
Աղյուսակ 34. Մանրածախ առևտրի շրջանառությունը (հազ. դրամ) 1 շնչի հաշվով ... 38
Աղյուսակ 35. Արտահանման ծավալները, 2011-2015թթ. (հազ.ԱՄՆ դոլար) ... 39
Աղյուսակ 36. Արտահանման ծավալները 1 շնչի հաշվով, 2011-2015թթ. (ԱՄՆ դոլար) ... 39
Աղյուսակ 37. Ներմուծման ծավալները, 2011-2015թթ. (հազ.ԱՄՆ դոլար) ... 39
Աղյուսակ 38. Ներմուծման ծավալներ 1 շնչի հաշվով, 2011-2015թթ. (ԱՄՆ դոլար) ... 40
Աղյուսակ 39. Ծառայությունների ծավալը (մլն. դրամ) ... 40
Աղյուսակ 40. Ծառայությունների ծավալը 1 շնչի հաշվով (մլն. դրամ) ... **Error! Bookmark not defined.**
Աղյուսակ 41. ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների վիճակագրությունը, 2011-2015թթ ... 42
Աղյուսակ 42. ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերլուծություն, 2011-2015թթ ... 42
Աղյուսակ 43. ՀՀ դպրոցական հաստատություններ 2015/2016 ուս. տարի ... 43
Աղյուսակ 44. ՀՀ դպրոցական հաստատություններ համեմատություն 2015/2016 ուս. տարի 2013/2014 ուս. տարվա հետ ... 448
Աղյուսակ 45. ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հաստատությունների ուսանողների թվաքանակը ... 44
Աղյուսակ 46. ՀՀ միջին մասնագիտական կրթության հաստատությունների ընդունվածների թվաքանակը ... 49
Աղյուսակ 47. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակԸ ... 45
Աղյուսակ 48. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների թվաքանակը ... 460
Աղյուսակ 49. ՀՀ տնային տնտեսությունների թիվը ըստ բնակվելու պայմանների, 2016թ. ... 461
Աղյուսակ 50. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, հունվարի 1-ի դրությամբ ... 47
Աղյուսակ 51. ՀՀ մարզերում վթարային շենքերում բնակվողների թվաքանակը 2016թ. ... 48
Աղյուսակ 52. Աղքատության մակարդակը (%) ... 483
Աղյուսակ 53. Նպաստ ստացող ընտանիքների քանակը ... 49

Աղյուսակ 54. Նպաստ ստացող ընտանիքների քանակը 1000 բնակչի հաշվով ........ 494
Աղյուսակ 55. Կենսաթոշակառուներ ........ 505
Աղյուսակ 56. Անվանական սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, միջին ամսական (դրամ) ........ 50
Աղյուսակ 57. Թատրոնների քանակը ՀՀ-ում ........ 51
Աղյուսակ 58. Թատրոնների հանդիսատեսի քանակը ՀՀ-ում ........ 52
Աղյուսակ 59. Թանգարանների և գրադարանների մատչելիությունը ՀՀ-ում ........ 52
Աղյուսակ 60. Սպորտի մատչելիությունը ՀՀ-ում ........ 538
Աղյուսակ 61. Առողջապահության հիմնական ցուցանիշները ........ 53
Աղյուսակ 62. Ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկների հիմնական ցուցանիշները ........ 59
Աղյուսակ 63. Մթնոլորտային տեսակարար արտանետումները ........ 540
Աղյուսակ 64. Կեղտաջրերի հեռացում ........ 551
Աղյուսակ 65. Ուժեղ ԵՎ թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն (SWOT) ........ 583
Աղյուսակ 66. ՀՀ մարզերի մարզի գերակայություններ ........ 673

## Քարտեզներ

Քարտեզ 1. ՀՀ Վարչատարածքային բաժանումը ........ 9
Քարտեզ 2. ՀՀ կլիմայական գոտիները ........ 9
Քարտեզ 3. ՀՀ սեյսմիկ գոտիները ........ 10
Քարտեզ 4. ՀՀ ճանապարհային քարտեզ ........ 19

## Գծապատկերներ

Գծապատկեր 1. ՀՀ բնակչության տարիքային բուրգը , 2006 և 2016թթ. տարեսկզբին /տոկոսով ընդամենի նկատմամբ / ........ 11
Գծապատկեր 2. ՀՀ բնակչությունը ըստ տարիքային խմբերի, գյուղական ԵՎ քաղաքային բնակավայրերի, 2006 ԵՎ 2016թթ. ........ 12
Գծապատկեր 3. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալները. 19
Գծապատկեր 4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալները ........ 180
Գծապատկեր 5. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2009 ԵՎ 2015թթ. ........ 24
Գծապատկեր 6. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը 2009 ԵՎ 2015թթ. ........ 24
Գծապատկեր 7. Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի տարածքային մասնաբաժինները, 2009 ԵՎ 2015թ. ........ 24
Գծապատկեր 8. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն որպես ազգային միջինի %, 2015թ. ........ 25
Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճ 2013-2015թթ, դրամ ........ 27

# I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. 2018-2020թթ. Տարածքային զարգացման գործառնական ծրագիրը մշակվել է որպես հետևողական բարեփոխումների տարր՝ Հայաստանի Հանրապետության ավելի արդյունավետ և հավասարակշռված տարածքային զարգացման համար:

2.Փաստաթուղթը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից՝ ԵՄ Տեխնիկական աջակցության թիմի հետ սերտ համագործակցությամբ և ավելի վաղ ընդունված կամ ընդունման փուլում գտնվող որոշումների և փաստաթղթերի հաջորդականությամբ.

1) 2016-2025թթ. Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն (ընդունվել է 2016թ. հուլիսին),
2) Մարզերի տարածքային զարգացման ռազմավարություններ (ընդունվել են 2017թ. հուլիսին),
3) Տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմ (ընդունման փուլում է):

3.2018-2020թթ. Տարածքային զարգացման գործառնական ծրագիրը համարվում է Հայաստանում տարածքային զարգացման համար առաջին համախմբված ծրագիր՝ նպատակ ունենալով բոլոր միջամտությունները համախմբել 2016-2025թթ. ՀՏԶՌ ռազմավարական ուղղությունների ներքո: ՏԶԳԾ մյուս կարևոր նշանակությունն այն է, որ այն նախատեսում է տարածքային և տեղական մակարդակի ներդրումների և զարգացման ծրագրերում ներգրավել ու ակտիվացնել տեղական դերակատարներին, առաջին հերթին տեղական ինքնակառավարման մարմիններին՝ որպես ծրագրի առաջարկողներ և իրականացնողներ՝ ծրագրերի մրցունակ հայտադիմումների ներքո: Այսպես, ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի պայմանների բարելավման տեղական գաղափարները կարող են առաջընթաց գրանցել, ֆինանսավորվել և իրականացվել ռազմավարական համապատասխանության մակարդակում:

4.Փաստաթղթում պարզորեն ցույց է տրված, թե ինչպես ՏԶԳԾ-ը կնպաստի տարածքային զարգացման ընդհանուր նպատակների իրականացմանը, ինչպես նշված է 2016-2025թթ. ՀՏԶՌ մեջ, ինչ նյութական արդյունքներ կնկատվեն հասարակության և տնտեսության մեջ ՏԶԳԾ առաջարկված միջամտությունների միջոցով, և թե ինչպես ընթացիկ ծրագրերը պետք է հետագայում համախմբվեն, և անցում կատարեն դեպի ՏԶ առանձին Գործառնական ծրագիր:

5.ՏԶԳԾ-ը բաղկացած է հետևյալ հիմնական տարրերից.

1) Իրավիճակի վերլուծություն – բացատրելով՝ ինչ թեմատիկ ուղղություններ և տարածաշրջանային կոնկրետ խնդիրներ ու հնարավորություններ պետք է հաշվի առնվեն;
2) Մարզերի ՈւԹՀՍ վերլուծություն և ռազմավարական գերակայություններ՝ ավելացնելով վիճակագրական տեղեկատվությանը;
3) Որոշակի կառուցվածքով ներկայացված ՏԶԳԾ գերակայություններ և միջոցառումներ, որը թույլ է տալիս ներկայացնել գործընթացը և իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը;
4) Ինստիտուցիոնալ պայմանավորվածություններ ՏԶԳԾ իրականացման համար;
5) Բյուջե:

6.ՏԶԳԾ իրականացման կառուցվածքը ներկայացված է հետևյալ մակարդակներում.

1)Ծրագիր (ծրագրի մակարդակի ցուցանիշներ);
2)Առանցքային խնդիրներ և գերակայություններ;
3)Միջոցառումներ (մանրամասն տեղեկատվությամբ) :

7.ՀՀ կառավարության կողմից 2018-2020թթ. ՏԶԳԾ-ի ընդունումից հետո պատասխանատու մարմինները, առաջին հերթին՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը (ՏԶԳԾ Կկռավարող մարմին) կձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերը Ծրագիրն իրականացնելու համար:

# II. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 2.1. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8. Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Ասիայի արևմտյան մասում: Գրավում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածը՝ Կովկասի և Առաջավոր Ասիայի միջև (Կուր և Արաքս գետերի միջին հոսանքների միջգետային տարածքը): Սահմանակից է Վրաստանին, Ադրբեջանին, Թուրքիային և Իրանին: Ընդհանուր սահմանի երկարության շուրջ 50%-ը բաժին է ընկնում Ադրբեջանի հետ **սահմանին**, որի 50%-ը գտնվում է ՀՀ Տավուշի մարզում, մնացածը ՀՀ Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերում է: Հայաստանի մարզերից միայն ՀՀ Կոտայքի մարզն է, որ չունի արտաքին սահման:

9.Երկրի ամենաբարձր կետը Արագած լեռնազագաթն է (4 090 մ), ամենացածր կետը՝ Դեբետ գետի ստորին հոսանքի շրջանը (375 մ): Ամենաերկար ձգվածությունը հյուսիս - արևմուտքից հարավ-արևելք 360 կմ է, իսկ արևմուտքից արևելք՝ 200 կմ:

10.Երկրի տարածքը կազմում է 29 743 կմ□, որի 68.8%-ը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը, 11.2%-ը՝ անտառային, 11.3%-ը՝ հատուկ պահպանվող տարածքների և 8.7%-ը՝ այլ հողերը: ՀՀ տարածքի 36.4%-ը լեռներն են, բարձրավանդակներն ու այլ հողերը: Գյուղատնտեսական հողերը նույնպես հավասարաչափ չեն բաշխված ըստ մարզերի, մարզերի տարածքի գյուղատնտեսական հողերի նվազագույն տեսակարար կշիռը կազմում է 41%՝ ՀՀ Տավուշի մարզում և 82.5% ՀՀ Վայոց ձորի մարզում (սակայն այստեղ վարելահողերը կազմում են գյուղատնտեսական հողերի միայն շուրջ 8.4%): Առավել անհամաչափ են բաշխված անտառային տարածքները՝ ՀՀ Արմավիրի մազում դրանք բացակայում են, իսկ ՀՀ Տավուշի մարզում՝ շուրջ 54%:

ՔԱՐՏԵԶ 1. ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ




Աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 (http://armstat.am/file/article/marz_2016_1.pdf)

ՔԱՐՏԵԶ 2. ՀՀ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ



Աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 (http://armstat.am/file/article/marz_2016_4.pdf)

11. Հայաստանը լեռնային երկիր է: Տարածքի 76.5%-ը գտնվում է ծովի մակերևույթից 1 000-2 500 մ բարձրության վրա: Լեռնաշղթաները զբաղեցնում են երկրի ընդհանուր մակերեսի 47.0%-ը: Բարձրավանդակները կազմում են երկրի մակերեսի ավելի քան 1/3-ը (11 հազ. կմ$^2$): Հայաստանի միայն 2 մարզերի տարածքներում լեռնային և նախալեռնային գոտիները գերակշռող չեն:

12. Հայաստանի կլիման արտահայտված է 7 գոտիներով, չոր մերձարևադարձային, չոր ցամաքային, չափավոր տաք - չոր, չափավոր տաք – համեմատաբար խոնավ, բարեխառն – տաք ամառով, չափավոր ցուրտ, ցուրտ գոտիներով:

13. Հայաստանի ընդերքը հարուստ է բազմազան օգտակար հանածոներով: Սակայն այդ հանածոները նույնպես հավասարաչափ չեն տեղաբաշխված հանրապետության ողջ տարածքով: Իր բնական պաշարներով առավել աչքի են ընկնում ՀՀ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերը, ՀՀ Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերի որոշ տարածաշրջաններ: Արագած լեռան ստորոտում գտնվող ՀՀ Արագածոտնի

և Շիրակի մարզերը հարուստ են հրաբխային ապարատեսակներով՝ բազմագույն տուֆերով, բազալտի, պեռլիտի և հրաբխային խարամի պաշարներով: 2017 թ.-ի սկզբի դրությամբ ՀՀ-ում առկա էր 670 հանքավայր, այդ թվում՝ 30 մետաղական: Նշված հանքավայրերից շահագործվում են շուրջ 400-ը՝ այդ թվում՝ 27 մետաղական, որոնցից՝ 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային: Բացի գնահատված և պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերից, Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են տարբեր մետաղների 115 երևակումներ (աղբյուր՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն http://www.minenergy.am/page/472 ):

14. Հայաստանը հարուստ է նաև ջրային պաշարներով, գետերի համախառն հոսքը կազմում է շուրջ 8.5 մլրդ մ$^3$, Հայաստանում է գտնվում Կովկասի ամենամեծ լիճը՝ Սևանա լիճը (2015թ. միջին տարեկան մակերեսը 276.5 կմ$^2$), ամենաերկար գետն՝ Արաքսը, 192 կմ (ընդհանուր երկարությունը՝ 1 072 կմ): Հանրապետության վերականգնվող քաղցրահամ ջրային պաշարները կազմել են 5 532.0 մլն. մ$^3$: Հայաստանի գետերը հիմնականում լեռնային են, խիստ արտահայտված մեժենային (սակավաջուր) հոսքերով:

15. Հայաստանը գտնվում է 5 տարբեր սեյսմիկ վտանգ ունեցող գոտիներում, 0.2-0.5 g առավելագույն հորիզոնական արագացումներով: Միևնույն ժամանակ Հայաստանի քաղաքային բնակչության գերակշռող մեծամասնությունը (մասնավորապես ք. Երևանի մի մասը, ք. Գյումրի և ք. Վանաձոր) գտնվում են 0.4-0.5g առավելապես սեյսմավտանգ գոտիներում:

ՔԱՐՏԵԶ 3. ՀՀ ՍԵՅՍՄԻԿ ԳՈՏԻՆԵՐԸ




Աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 (http://armstat.am/file/article/marz_2016_7.pdf)

16. Առավել վտանգավոր 0.5 g արագացման գոտում են գտնվում Սպիտակ, Վանաձոր (Լոռու մարզ) և Դիլիջան (Տավուշի մարզ) քաղաքները: Վտանգավոր 0.4 g գոտում են գտնվում Երևան քաղաքի մի մասը, Գյումրի (Շիրակի մարզ), Թալին (Արագածոտնի մարզ), Եղվարդ (Կոտայքի մարզ), Վեդի (Արարատի մարզ) և Ճամբարակ (Գեղարքունիքի մարզ) քաղաքները:

17. Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում ներառված է 452 բուսատեսակ և 40 սնկերի նկարագրություններ, 223 առանձին մտահոգիչ կարգավիճակով բուսատեսակներ, ինչպես նաև 308 կենդանատեսակ:

## 2.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

18. Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2 998 մլն մարդ: Հանրապետությունը համարվում է միջին-խիտ բնակեցված երկիր, Հայաստանի բնակչության խտությունը համեմատելի է հարակից երկրների բնակչության խտությանը և կազմում է 101 մարդ 1 կմ$^2$ համար: Այս ցուցանիշով, սակայն Հայաստանը գրեթե կրկնակի զիջում է Արևմտյան Եվրոպայի երկրներին:

19. Բնակչության բաշխվածությունն ըստ մարզերի Հայաստանում հավասարաչափ չէ, Արարատյան դաշտավայրում բնակչության խտությունն ամենամեծն է (Երևան քաղաքում այս խտությունը կազմում է 4 815 մարդ/ կմ$^2$, Արմավիրում՝ 215 մարդ/ կմ$^2$, Արարատում՝ 124 մարդ/կմ$^2$), իսկ ամենանոսր բնակեցված են մայրաքաղաքից ամենահեռավոր՝ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերը (համապատասխանաբար 22 և 31 մարդ/կմ$^2$):

20. Հանրապետության բնակչության շուրջ 63.6% քաղաքային բնակչություն է, իսկ 36.4% գյուղական: Սակայն միայն Հայաստանի մարզերով հաշվառելու դեպքում ընդհանուր մարզերի բնակչության շուրջ

43.3% կազմում են քաղաքաբնակները և 56.7% գյուղաբնակները: Մարզերով քաղաքաբնակների տեսակարար կշիռը շատ տարբեր է մարզից մարզ, այսպիսով՝ ՀՀ Արագածոտնի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում քաղաքաբնակների ցուցանիշը հասնում է համապատասխանաբար 22.4%, 28.2% և 29.8%, իսկ ՀՀ Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում համապատասխանաբար 58.4%, 59.0% 67.4%:

21. Հայաստանի բնակչությունն ունի նվազման միտում, որը պայմանավորված է արտագաղթով: Բնակչության թվաքանակի նվազումը տեղի է ունենում մարզերի հաշվին, որտեղից արտագաղթը ավելի շատ է քան բնակչության բնական աճը, իսկ Երևան քաղաքի բնակչությունը, անկախ արտագաղթից, տարեց տարի ավելանում է: Այսպիսով, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության ընդհանուր թվաքանակը 2015թ. համեմատ նվազել է 12.0 հազարով, նույն ժամանակահատածում 13.9 հազար մարդ բնական աճի դեպքում: 2015թ. միգրացիայի մնացորդի մեծությունը կազմել է 25.9 հազար, 2013-2015թթ ընթացքում Հայաստանի բնակչության միգրացիայի մնացորդը կազմել է շուրջ 72.1 հազար մարդ, որոնցից շուրջ 59.75 հազարը բաժին է ընկել ՀՀ մարզերին:

22. 2012-2016թթ. Հայաստանի բնակչության ընդհանուր թվաքանակը նվազել է շուրջ 0.8%, միևնույն ժամանակ Երևան քաղաքի բնակչությունը աճել է 1.2%, իսկ մարզերի բնակչությունը նվազել է 1.8%: Հայաստանի մարզերի շրջանում ամենաշատ նվազում արձանագրվել է ՀՀ Լոռու մարզում, որում այս ցուցանիշը կազմել է 4.5%:

23. 2013-2015թթ. քաղաքաբնակների թվաքանակը ոչ էականորեն աճել է, որը պայմանավորված է Երևան քաղաքի բնակչության աճով, միևնույն ժամանակ ՀՀ մարզերի քաղաքային բնակավայրերի բնակիչների թվաքանակը նվազել է, պայմանավորված արտագաղթի ավելի մեծ տեմպերով, քան գյուղական բնակավայրերում:

24. Ինչպես երևում է Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի տվյալներով (http://www.armstat.am/am/?nid=82&id=1847) Հայաստանի բնակչության միջին տարիքն աճում է (2006թ.՝ 34.1, 2015թ.՝ 36.1 տարի): Այսպիսով, համեմատելով 2006թ. հետ ավելացել է 75 և բարձր տարիքային խմբի բնակչության մասնաբաժինը՝ 3.7%-ից աճել է մինչև 5.5%-ի, իսկ 10-25 տարեկանների մասնաբաժինն էականորեն նվազել է՝ 28.6%-ից մինչև 19.6%-ի:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ, 2006 և 2016ԹԹ. ՏԱՐԵՍԿԶԲԻՆ /ՏՈԿՈՍՈՎ ԸՆԴԱՄԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ/




Աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016 (http://www.armstat.am/file/article/demog_2016_02.pdf)

25. Քաղաքային բնակավայրերում 2016թ.-ին 2006թ հետ համեմատած նվազել է բնակչության մինչև 15 տարեկանների թիվը և ավելացել է 63 և ավել տարիք ունեցողների թիվը: Նույն միտումը նկատվում է նաև գյուղական բնակավայրերում:

26. Վերլուծելով ՀՀ ընդհանուր բնակչությունն ըստ տարիքային խմբերի, ակնհայտ է դառնում, որ ՀՀ բնակչությունը հիմնականում ծերացող է, գյուղական բնակավայրերում երեխաների տոկոսն ավել է, քան քաղաքային բնակավայրերում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, ԳՅՈՒՂԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, 2006 և 2016ԹԹ.




Աղբյուրը՝ Վերլուծություն, ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016 (http://www.armstat.am/file/article/demog_2016_2.pdf)

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ և Ք. ԵՐԵՎԱՆԻ, 2016Թ. ՏԱՐԵՍԿԶԲԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

| Տարիքային խումբ | Ընդամենը | ք.Երևան | Արագածոտն | Արարատ | Արմավիր | Գեղարքունիք | Լոռի | Կոտայք | Շիրակ | Սյունիք | Վայոց Ձոր | Տավուշ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **0-14** | 588,848 | 199,980 | 27,067 | 53,343 | 53,704 | 47,604 | 45,602 | 53,436 | 48,637 | 25,381 | 9,512 | 24,582 |
| **15-34** | 945,408 | 321,633 | 43,124 | 86,191 | 89,540 | 78,750 | 68,021 | 81,898 | 78,829 | 43,226 | 16,608 | 37,588 |
| **35-64** | 1,135,991 | 415,224 | 47,498 | 95,934 | 100,264 | 85,238 | 84,220 | 95,599 | 91,168 | 54,795 | 19,053 | 46,998 |
| **65+** | 328,330 | 136,823 | 12,085 | 23,443 | 23,105 | 20,202 | 27,111 | 22,965 | 24,518 | 16,069 | 5,663 | 16,346 |
| **Ընդամենը** | 2,998,577 | 1,073,660 | 129,774 | 258,911 | 266,613 | 231,794 | 224,954 | 253,898 | 243,152 | 139,471 | 50,836 | 125,514 |
| **0-14** | 19.64% | 18.63% | 20.86% | 20.60% | 20.14% | 20.54% | 20.27% | 21.05% | 20.00% | 18.20% | 18.71% | 19.59% |
| **15-34** | 31.53% | 29.96% | 33.23% | 33.29% | 33.58% | 33.97% | 30.24% | 32.26% | 32.42% | 30.99% | 32.67% | 29.95% |
| **35-64** | 37.88% | 38.67% | 36.60% | 37.05% | 37.61% | 36.77% | 37.44% | 37.65% | 37.49% | 39.29% | 37.48% | 37.44% |
| **65+** | 10.95% | 12.74% | 9.31% | 9.05% | 8.67% | 8.72% | 12.05% | 9.04% | 10.08% | 11.52% | 11.14% | 13.02% |
| **Ընդամենը** | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% |
| **Քաղաքային բնակչություն** | | | | | | | | | | | | |
| **0-14** | 367,038 | 199,980 | 6,044 | 15,713 | 17,749 | 13,860 | 26,416 | 29,903 | 27,186 | 16,583 | 3,392 | 10,212 |
| **15-34** | 576,388 | 321,633 | 8,824 | 23,359 | 26,092 | 21,364 | 38,934 | 42,705 | 43,843 | 28,534 | 5,517 | 15,583 |
| **35-64** | 738,189 | 415,224 | 11,045 | 27,561 | 32,256 | 26,906 | 51,491 | 52,585 | 54,815 | 38,471 | 7,022 | 20,813 |
| **65+** | 225,391 | 136,823 | 3,136 | 6,475 | 8,525 | 7,050 | 15,966 | 12,678 | 16,119 | 10,438 | 1,846 | 6,335 |
| **Ընդամենը** | 1,907,006 | 1,073,660 | 29,049 | 73,108 | 84,622 | 69,180 | 132,807 | 137,871 | 141,963 | 94,026 | 17,777 | 52,943 |
| **0-14** | 19.25% | 18.63% | 20.81% | 21.49% | 20.97% | 20.03% | 19.89% | 21.69% | 19.15% | 17.64% | 19.08% | 19.29% |
| **15-34** | 30.22% | 29.96% | 30.38% | 31.95% | 30.83% | 30.88% | 29.32% | 30.97% | 30.88% | 30.35% | 31.03% | 29.43% |
| **35-64** | 38.71% | 38.67% | 38.02% | 37.70% | 38.12% | 38.89% | 38.77% | 38.14% | 38.61% | 40.92% | 39.50% | 39.31% |
| **65+** | 11.82% | 12.74% | 10.80% | 8.86% | 10.07% | 10.19% | 12.02% | 9.20% | 11.35% | 11.10% | 10.38% | 11.97% |
| **Ընդամենը** | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% |
| **Գյուղական բնակչություն** | | | | | | | | | | | | |
| **0-14** | 221,810 | | 21,023 | 37,630 | 35,955 | 33,744 | 19,186 | 23,533 | 21,451 | 8,798 | 6,120 | 14,370 |
| **15-34** | 369,020 | | 34,300 | 62,832 | 63,448 | 57,386 | 29,087 | 39,193 | 34,986 | 14,692 | 11,091 | 22,005 |
| **35-64** | 397,802 | | 36,453 | 68,373 | 68,008 | 58,332 | 32,729 | 43,014 | 36,353 | 16,324 | 12,031 | 26,185 |
| **65+** | 102,939 | | 8,949 | 16,968 | 14,580 | 13,152 | 11,145 | 10,287 | 8,399 | 5,631 | 3,817 | 10,011 |
| **Ընդամենը** | 1,091,571 | | 100,725 | 185,803 | 181,991 | 162,614 | 92,147 | 116,027 | 101,189 | 45,445 | 33,059 | 72,571 |
| **0-14** | 20.32% | | 20.87% | 20.25% | 19.76% | 20.75% | 20.82% | 20.28% | 21.20% | 19.36% | 18.51% | 19.80% |
| **15-34** | 33.81% | | 34.05% | 33.82% | 34.86% | 35.29% | 31.57% | 33.78% | 34.57% | 32.33% | 33.55% | 30.32% |
| **35-64** | 36.44% | | 36.19% | 36.80% | 37.37% | 35.87% | 35.52% | 37.07% | 35.93% | 35.92% | 36.39% | 36.08% |
| **65+** | 9.43% | | 8.88% | 9.13% | 8.01% | 8.09% | 12.09% | 8.87% | 8.30% | 12.39% | 11.55% | 13.79% |
| **Ընդամենը** | 100.00% | | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% | 100.00% |

Աղբյուրը՝ Վերլուծություն, ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016 (http://www.armstat.am/file/article/demog_2016_2.pdf)

27. Ամենաերիտասարդ մարզը Գեղարքունիքի մարզն է, ապա՝ Կոտայքի մարզը: Ամենածերացողն է Երևան քաղաքը, ապա՝ Լոռու, Սյունիքը և Տավուշը մարզերը:

28. ՀՀ-ում տղամարդիկ կազմում են ընդհանուր բնակչության 47.7%-ը, այս թիվը նվազել է 2013թ.-ի համեմատ հետ, երբ այն կազմում էր ընդհանուր բնակչության 48.0%:.

29. Անկախ նրանից, որ ծնունդների քանակությամբ տղաներն ավելի շատ են ծնվում, 20-24 տարեկան հասակում տղաների և աղջիկների թվաքանակները հավասարվում են, որից հետո աղջիկներինը՝ բնակչության ընդհանուր թվաքանակում գերակայում են:

30. ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով, ՀՀ բնակչության շուրջ 7.7% ունի տարրական, իսկ մասնագիտական կրթություն ունեցողների թիվը հասնում է բնակչության 37.9%, միևնույն ժամանակ կանայք ունեն կրթական ավելի բարձ մակարդակ, որը միջին մասնագիտական կրթության կամ ավելի բարձրի դեպքում հասնում է 40.7%՝ տղամարդկանց 34.7%-ի համեմատ: Միևնույն ժամանակ հետբուհական կրթություն ունեցողների մեջ կանանց թիվը ավելի ցածր է, քան տղամարդկանց:

### ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ, ԸՍՏ ՍԵՌԻ

| *Կրթական մակարդակը, սեռը* | **Ընդամենը %** | **Տղամարդ %** | **Կին %** |
|---|---|---|---|
| **Չունի տարրական** | 5.50 | 6.00 | 5.00 |
| **Տարրական** | 7.70 | 8.10 | 7.40 |
| **Հիմնական** | 9.40 | 10.40 | 8.50 |
| **Միջնակարգ** | 39.50 | 40.80 | 38.40 |
| **Նախնական մասնագիտական** | 2.80 | 2.90 | 2.80 |
| **Միջին մասնագիտական** | 15.20 | 12.60 | 17.50 |
| **Բարձրագույն մասնագիտական** | 19.50 | 18.70 | 20.10 |
| **Հետբուհական մասնագ.** | 0.20 | - | 0.20 |
| **Գիտության թեկնածու** | 0.20 | 0.20 | 0.10 |
| **Գիտության դոկտոր** | - | 0.30 | - |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | 100 | 100 | 100 |

Աղբյուրը՝ Վերլուծություն, ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016 (http://www.armstat.am/file/article/demog_2016_8.pdf)

31. Հայաստանը բնակչությամբ միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 98%, ազգային փոքրամասնություններից ապրում են եզդիներ, ռուսներ, ասորիներ, քրդեր և այլ ազգություններ:

### ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՍՏ ԱԶԳՈՒԹՅԱՆ

| *Ազգությունը* | **Ընդամենը** | |
|---|---|---|
| **ՀՀ** | **3,018,854** | **100.000%** |
| **Հայ** | 2,961,801 | 98.110% |
| **Եզդի** | 35,308 | 1.170% |
| **Ռուս** | 11,911 | 0.395% |
| **Ասորի** | 2,769 | 0.092% |
| **Քուրդ** | 2,162 | 0.072% |
| **Ուկրաինացի** | 1,176 | 0.039% |
| **Հույն** | 900 | 0.030% |
| **Վրացի** | 617 | 0.020% |
| **Պարսիկ** | 476 | 0.016% |
| **Այլ** | 1,634 | 0.054% |
| **Հրաժարվել են պատասխանել** | 100 | 0.003% |

Աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016 (http://www.armstat.am/file/article/demog_2016_8.pdf)

## 2.3. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

32. 2016թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում առկա են 49 քաղաքային բնակավայրեր, որոնցում բնակվում են շուրջ 1.9 մլն բնակիչ, կամ ընդհանուր բնակչության շուրջ 63,6 %: Բնակչությունը քաղաքային բնակավայրերում 2016թ.-ին՝ 1999թ.[1] համեմատ նվազել է շուրջ 9.7% կամ 204.6 հազար բնակչով: Ընդ որում, Երևան քաղաքում այս նվազումը եղել է միջին հանրապետական ցուցանիշին մոտ և կազմել է շուրջ 3.0% (1999թ՝ 1106.7 հազ.): Սակայն մարզային տարբեր քաղաքներում բնակչության նվազումը կազմել է 0.5% մինչև 57.3%: Այս տարբերությունները հիմնականում պայմանավորված են անվտանգության և տնտեսական գործոններով և արտահայտվում է ներգաղթի և արտագաղթի ցուցանիշներով:

33. Ներկայումս քաղաքային բնակչության գերակշիռ մեծամասնությունը, կամ շուրջ 1.07 մլն մարդ բնակվում է Հայաստանի մայրաքաղաք Երևանում: Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին և խոշորագույնն է ՀՀ 49 քաղաքների շարքում: Երևանում է գտնվում ՀՀ վարչական կենտրոնը, այստեղ են կենտրոնացված ՀՀ Նախագահի նստավայրը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարությունները ու բոլոր պետական կառույցների գլխամասերը, միջազգային կառույցների ներկայացուցիչները: Միևնույն ժամանակ այստեղ են կենտրոնացված նաև կրթական, առողջապահական, սոցիալական ծառայությունների հիմնական մատուցողները:

34. Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է, այստեղ է ստեղծվում ՀՀ ՀՆԱ 54.4%, որը 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի հաշվարկով գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը շուրջ 1.48 անգամ, իսկ միջին մարզերի ցուցանիշը՝ շուրջ 2 անգամ: Ըստ ոլորտների Երևանին բաժին ընկնող պատկերը հետևյալն է՝ արդյունաբերություն՝ 41.2 %, գյուղատնտեսություն՝ 1.1 %, շինարարություն՝ 63.7%, մանրածախ առևտուր՝ 76.4 %, ծառայություններ՝ 81.4% հավելյալ արժեքը:

35. Երևան քաղաքի կենտրոնական թաղամասերում նախկին ինդուստրիալ տարածքները (նախկինում կառուցված, սակայն ներկայումս չօգտագործվող արտադրական տարածքները) վերակառուցվել են և անհրաժեշտության դեպքում վերապրոֆիլավորվել, ներկայումս շահագործվում են, սակայն Երևան քաղաքի ծայրամասերում դեռևս հնարավոր է գտնել տարածքներ, որոնք չեն շահագործվում, կամ շահագործվում են մասնակիորեն:

36. ՀՀ մարզերի քաղաքային բնակչությունը կազմում է շուրջ 830 հազար մարդ, որից շուրջ 43.7% բնակվում է մարզային 48 քաղաքներում: Այս քաղաքները պայմանականորեն բաժանվել են 5 խմբերի՝ մայրաքաղաքամերձ, մարզային և տարածքային կենտրոններ, գյուղատնտեսական մասնագիտացում ունեցող, տնտեսական աճի բևեռներ և խնդրահարույց քաղաքներ:

37. Երևանի տնտեսական և սոցիալական հնարավորություններից լայնորեն օգտվում են մայրաքաղաքամերձ քաղաքները (Երևանից մինչև 30 կմ շառավիղով գտնվող քաղաքներ), որոնց տնտեսությունները սերտաճել են Երևանի տնտեսությանը: Մայրաքաղաքամերձ քաղաքներում բնակվում է 160.8 հազար բնակիչ: Այդ քաղաքներն են՝ Վաղարշապատ, Աբովյան, Մասիս, Աշտարակ, Նոր Հաճն, Բյուրեղավան, Եղվարդ:

38. Մայրաքաղաքի հետ տնտեսական կապերն առավել ցայտուն են երևում Աբովյան, Վաղարշապատ, Մասիս և Եղվարդ քաղաքներում: Այս քաղաքներում նույնպես սկսել է նախկին ինդուստրիալ տարածքների վերակառուցման և վերաշահագործման գործընթացը, սակայն չօգտագործվող տարածքների թիվը դեռևս զգալի է: Մայրաքաղաքամերձ քաղաքները բնութագրվում են նաև ԲՈՒՀ-ական կրթության գրեթե բացակայությամբ, քանի որ այս բացը, որպես կանոն, լրացվում է մայրաքաղաքի կրթական համակարգի հաշվին:

39. Մարզային կենտրոնները այնպիսի քաղաքներն են, որոնք իրենց շրջակա բնակավայրերին ապահովում են ադմինիստրատիվ, կրթական, առողջապահական և այլ ծառայություններով, որպես կանոն այս քաղաքները նախկինում ունեցել են հզոր արտադրական ներուժ, որը օգտագործվում է միայն մասնակի, այս քաղաքներում հիմնական աշխատատեղերը ապահովում է պետական սեկտորը և որոշ մասով՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակումը ու ծառայությունները: Մարզային կենտրոններում բնակվում են 381.1 հազար մարդ, դրանք են՝ Գյումրի, Վանաձոր, Կապան, Հրազդան, Արմավիր, Արտաշատ, Իջևան, Գավառ, Եղեգնաձոր և Աշտարակ քաղաքները:

40. Բոլոր այն դեպքերում, երբ մարզկենտրոնի հեռավորությունը գյուղական բնակավայրերից 40- 50 կմ-ից ավել է, ապա մոտակա քաղաքը մասնակիորեն կատարում է կենտրոնի դերը, կատարելով մարզկենտրոնին բնորոշ որոշակի գործառույթներ (առողջապահական, կրթական, առևտրային և այլն):

41. Միևնույն ժամանակ որոշ քաղաքներ, հետխորհրդային իրավիճակից ելնելով, փոխեցին մասնագիտացումը և զարգացրեցին գյուղատնտեսական հատվածը, այդ քաղաքներում հիմնական

---

[1] Վերահաշվարկված է ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների հիման վրա:

աշխատատեղերը ապահովում են գյուղատնտեսությունը ու գյուղատնտեսական մթերքների վերամշակումը, պետական հատվածը, ինչպես նաև բնակչությանը ու հարակից բնակավայրերին ծառայությունների մատուցումը: Այդ բնակավայրերում բնակվում են 94.7 հազար մարդ, դրանք են՝ Գորիս, Սիսիան, Մարտունի, Վեդի, Բերդ, Տաշիր, Ապարան, Նոյեմբերյան, Թալին, Մեղրի:

42. Քաղաքների հաջորդ խումբը ունի զարգացող տնտեսություն (կամ ոչ ամբողջովին է կորցրել իր ունեցած տնտեսական հնարավորությունները): Որպես կանոն, այս քաղաքները ունեն կամ ցայտուն արտահայտված լեռնարդյունաբերական ուղղվածություն կամ զբոսաշրջային ուղղվածություն: Այս քաղաքներում են բնակվում 110.7 հազար մարդ, դրանք են՝ Արարատ, Սևան, Դիլիջան, Ալավերդի, Վարդենիս, Մեծամոր, Քաջարան, Ջերմուկ, Ագարակ, Ախթալա, Ծաղկաձոր;

43. Տնտեսական աճ ունեցող քաղաքներում նախկին ինդուստրիալ տարածքների հետ խնդիրները գրեթե բացակայում են, այստեղ, որպես կանոն, այդ տարածքները ամբողջովին օգտագործվել են և ներկայումս իրականացվում են նոր շինարարական աշխատանքներ, այս իրավիճակը ավելի ցայտուն է արտահայտված մասնավորապես Ծաղկաձորում և Քաջարանում:

44. Իրենց տնտեսական ներուժը կորցրած, նախկինում ինդուստրիալ քաղաքները ունեն մեծ խնդիրներ ինչպես աշխատեղերով ապահովման, այնպես էլ արտագաղթի, նախկին ինդուստրիալ տարածքների և քաղաքային ծառայությունների հետ: Այս քաղաքները, որպես կանոն, տեղաբաշխված են այլ, տնտեսապես կամ ադմինիստրատիվ ավելի մեծ կարևորություն ունեցող քաղաքներից ոչ հեռու, ուստի չեն մատուցում քաղաքային բնակավայրերին հատուկ ծառայությունները հարակից բնակավայրերին այն կերպ, ինչպես մարզային կենտրոնները, չունեն տնտեսական այն ակտիվությունը, որը բնորոշ է զարգացող տնտեսություն ունեցող քաղաքներին, գտնվում են Երևան քաղաքից բավական հեռավորության վրա, որպեսզի օգտվեն Երևան քաղաքի աշխատաշուկայի հնարավորություններից և չեն կարողացել վերապրոֆիլավորվել՝ գյուղատնտեսության և գյուղատնտեսական մթերքների արտադրության համար: Որպես կանոն (բացառություն է միայն Արթիկը և Վայքը) այստեղ արտագաղթի ծավալները գերազանցում են հանրապետության միջին ցուցանիշը: Այս քաղաքներում բնակվում է 86.6 հազար մարդ, դրանք են՝ Արթիկ, Սպիտակ, Ստեփանավան, Ճամբարակ, Վայք, Մարալիկ, Այրում, Թումանյան, Շամլուղ, Դաստակերտ:

45. Այս քաղաքներից որոշը, մասնավորապես՝ Դաստակերտը, Շամլուխը, Թումանյանը և Այրումը ընդհանրապես չեն տրամադրում քաղաքային բնակավայրերին բնորոշ ծառայությունները:

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

| Քաղաքի անվանումը | Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը | Հեռավորությունը Երևանից, կմ* | 2001թ. մարդահամար | 2016 տարեսկզբին | Պայմանական խումբ |
|---|---|---|---|---|---|
| **Քաղաքային բնակչություն** | | | **2066.1** | **1,907.0** | |
| Երևան |Ք.ա. 782թ.[1] | - | **1103.5** | 1,073.7 | մայրաքաղաք |
| Գյումրի | 1840 | 118 | **150.9** | 117.7 | մարզկենտրոն |
| Վանաձոր | 1924 | 115 | **107.4** | 82.2 | մարզկենտրոն |
| Վաղարշապատ | 1924 (Ք.ա. 685[2]) | 20 | **56.4** | 46.7 | մայրաքաղաքամերձ |
| Աբովյան | 1963 | 18 | **44.6** | 44.4 | մայրաքաղաքամերձ |
| Կապան | 1938 | 301 | **45.7** | 42.6 | մարզկենտրոն |
| Հրազդան | 1959 | 50 | **52.8** | 41.2 | մարզկենտրոն |
| Արմավիր | 1947 | 44 | **32.0** | 28.9 | մարզկենտրոն |
| Արտաշատ | 1961 | 30 | **25.1** | 20.7 | մարզկենտրոն |
| Իջևան | 1961 | 132 | **20.2** | 20.7 | մարզկենտրոն |
| Չարենցավան | 1983 | 34.49 | **25.0** | 20.5 | նախկին ինդուստրիալ |
| Մասիս | 1995 | 14 | **21.4** | 20.5 | մայրաքաղաքամերձ |
| Գորիս | 1924 | 236 | **23.3** | 20.3 | գյուղատնտեսական |
| Արարատ | 1962 | 47 | **20.5** | 20.3 | ինդուստրիալ |
| Գավառ | 1938 | 92 | **26.6** | 19.5 | մարզկենտրոն |
| Սևան | 1961 | 66 | **21.4** | 19.2 | տուրիզմ |
| Արթիկ | 1945 | 100 | **17.6** | 18.8 | նախկին ինդուստրիալ |
| Աշտարակ | 1963 | 19 | **20.6** | 18 | մայրաքաղաքամերձ |
| Դիլիջան | 1951 | 96 | **16.2** | 17.6 | տուրիզմ |
| Սիսիան | 1974 | 206 | **16.8** | 14.9 | գյուղատնտեսական |
| Ալավերդի | 1938 | 162 | **16.6** | 13.0 | ինդուստրիալ |
| Սպիտակ | 1960 | 95 | **15.0** | 13 | նախկին ինդուստրիալ |
| Ստեփանավան | 1938 | 139 | **16.3** | 12.8 | նախկին ինդուստրիալ |
| Վարդենիս | 1995 | 168 | **12.7** | 12.6 | ինդուստրիալ |
| Մարտունի | 1995 | 130 | **11.8** | 12.2 | գյուղատնտեսական |
| Եղվարդ | 1995 | 18 | **11.6** | 11.9 | մայրաքաղաքամերձ |
| Վեդի | 1995 | 48 | **13.0** | 11.6 | գյուղատնտեսական |
| Նոր Հաճն | 1991 | 30 | **10.2** | 9.4 | մայրաքաղաքամերձ |
| Բյուրեղավան | 1995 | 24 | **8.2** | 9.3 | մայրաքաղաքամերձ |
| Մեծամոր | 1995 | 38 | **9.9** | 9.0 | ինդուստրիալ |
| Բերդ | 1995 | 186 | **8.8** | 7.7 | գյուղատնտեսական |
| Եղեգնաձոր | 1995 | 123 | **8.2** | 7.6 | մարզկենտրոն |
| Տաշիր | 1983 | 156 | **9.5** | 7.5 | գյուղատնտեսական |
| Քաջարան | 1958 | 327 | **8.4** | 7.1 | ինդուստրիալ |
| Ապարան | 1995 | 60 | **6.6** | 6.3 | գյուղատնտեսական |
| Ճամբարակ | 1995 | 119 | **6.4** | 5.7 | նախկին ինդուստրիալ |
| Վայք | 1995 | 132 | **6.0** | 5.7 | նախկին ինդուստրիալ |
| Մարալիկ | 1995 | 90 | **5.8** | 5.5 | նախկին ինդուստրիալ |
| Նոյեմբերյան | 1995 | 185 | **5.5** | 4.9 | գյուղատնտեսական |
| Թալին | 1995 | 65 | **5.6** | 4.8 | գյուղատնտեսական |
| Մեղրի | 1984 | 373 | **4.8** | 4.5 | գյուղատնտեսական |
| Ջերմուկ | 1961 | 175 | **5.4** | 4.4 | տուրիզմ |
| Ագարակ | 1995 | 385 | **4.8** | 4.3 | ինդուստրիալ |
| Այրում | 2006 | 205 | **-** | 2.0 | նախկին ինդուստրիալ |
| Ախթալա | 1995 | 186 | **2.4** | 2.0 | ինդուստրիալ |
| Թումանյան | 1995 | 148 | **1.9** | 1.6 | նախկին ինդուստրիալ |
| Ծաղկաձոր | 1984 | 55 | **1.6** | 1.2 | տուրիզմ |
| Շամլուղ | 1995 | 196 | **0.8** | 0.7 | նախկին ինդուստրիալ |
| Դաստակերտ | 1995 | 226 | **0.3** | 0.3 | նախկին ինդուստրիալ |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 (http://armstat.am/file/article/marz_2016_8.pdf ) և ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 1998-2002 (http://www.armstat.am/file/article/marzer-iii_6.pdf)

## 2.4. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

46. ՀՀ-ն ունի հարաբերականորեն զարգացած տրանսպորտային ցանց, Երևան քաղաքի գրեթե ողջ բնակչությունն ապահովված է մշտական երթուղային տրանսպորտային կապով: Մարզերում այս թիվը այլ է, մշտական երթուղային տրանսպորտային կապով ապահովվածության միջին մեծությունը հասնում է 90%: Տրանսպորտային կապով ապահովվածության ցածր մակարդակը պայմանավորված է հեռավոր, լեռնային և փոքր համայնքներում տրանսպորտային կապի իրականացումը տրանսպորտային ձեռնարկությունների կողմից տնտեսապես ոչ հիմնավորված լինելը, իսկ այդ համայնքների կամ

տարածքային կառավարման մարմինների կողմից տնտեսապես ոչ շահութաբեր երթուղիների սուբսիդավորում նախատեսված չէ: Համայնքներում կանոնավոր տրանսպորտային կապի չապահովման պատճառներից է հանդիսանում նաև ճանապարհների անմխիթար վիճակը, որն ավելացնում է մեքենատրանսպորտային պարկի սպասարկման արժեքը և ձմեռային պայմաններում ճանապարհների դժվար անցանելի լինելը, որը թույլ չի տալիս կանոնավոր կերպով տրանսպորտային կապի ապահովումը:

47. Հայաստանի հիմնական երթուղիները կապում են հանրապետության խոշոր քաղաքները արտերկրի հետ, դրանք են՝ Երևան-Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն; Երևան-Գյումրի-Բարվա, Երևան-Գորիս-Մեղրի, Երևան-Իջևան-Բագրատաշեն և այլն: Միևնույն ժամանակ մարզային կտրվածքով հիմնական երթուղիները հիմնականում համընկնում են հանրապետական հիմնական երթուղիների հետ, կամ այն դեպքում երբ չեն համընկնում հանրապետական գլխավոր երթուղիների հետ, մարզերի հիմնական երթուղիներն են հանդիսանում մարզկենտրոնը մարզի քաղաքային բնակավայրերի հետ կապող երթուղիները:

48. Բեռնաուղևորափոխադրումները հանրապետությունում հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով, այն կազմում է ընդհանուր բեռնափոխադրումների 62.1%, երկաթուղային տրանսպորտը տեղափոխում է շուրջ 3 անգամ ավելի քիչ բեռներ՝ 22.9%, 14.8% խողովակաշարերով, իսկ շուրջ 0.09% օդային տրանսպորտով (աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանը թվերով, 2016 http://www.armstat.am/file/article/armenia_2016_10.pdf ):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԵՌՆԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ




| | ՀԱՅԱՍՏԱՆ | Ք. ԵՐԵՎԱՆ | ԱՐԱԳԱԾՈՏՆ | ԱՐԱՐԱՏ | ԱՐՄԱՎԻՐ | ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ | ԼՈՌԻ | ԿՈՏԱՅՔ | ՇԻՐԱԿ | ՍՅՈՒՆԻՔ | ՎԱՅՈՑ ՁՈՐ | ՏԱՎՈՒՇ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2012 | 646.8 | 334.3 | 8.4 | 20.1 | 30.0 | 5.1 | 16.3 | 31.7 | 18.1 | 164.2 | 12.2 | 6.4 |
| 2013 | 768.9 | 426.3 | 7.7 | 25.9 | 30.0 | 3.9 | 23.0 | 33.7 | 17.7 | 182.2 | 12.5 | 6.0 |
| 2014 | 823.0 | 461.2 | 6.6 | 29.1 | 35.5 | 4.3 | 27.1 | 35.8 | 17.1 | 185.6 | 14.0 | 6.7 |
| 2015 | 861.4 | 477.7 | 6.6 | 31.3 | 43.4 | 36.1 | 24.8 | 29.3 | 20.2 | 167.7 | 17.3 | 7.0 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 (http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf **)**

49. ՀՀ-ում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2015թ. կազմել է 892.2 մլն.տոննա-կմ, որը 2012թ-ի ցուցանիշի համեմատ աճել է մոտ 1.38 անգամ: Հիմնականում գրեթե բոլոր մարզերում վերոնշյալ միտումը պահպանվել է, բացառությամբ Արագածոտնի և Կոտայքի մարզերի, որտեղ նկատվել է ընդհանուր բեռնաշրջանառության նվազում, համապատասխանաբար 21% և 8%: Կտրուկ աճ է արձանագրվել Գեղարքունիքի մարզի բեռնափոխադրումներում՝ շուրջ 13.0 անգամ, սակայն, Հայաստանում իրականացվող ուղևորաշրջանառության ծավալը 2015թ. կազմել է 2453.6 մլն.ուղևոր-կմ, որը 2012թ-ի ցուցանիշի համեմատ նվազել է շուրջ 8.2%-ով, միևնույն ժամանակ հանրապետության ուղևորաշրջանառությունը նվազել է 8.2%-ով: Միևնույն նվազման միտումը արտահայտվում է նաև մարզերով, սակայն Գեղարքունիքի, Արարատի և Վայոց Ձորի մարզերը արձանագրել են իրենց ցուցանիշների աճ, համապատասխանաբար 38%, 24% և 17%: Ամենակտրուկ անկումը կրկին արձանագրվել է Արագածոտնի մարզում և կազմել է 29%:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՈՒՂԵՎՈՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ




| | ՀԱՅԱՍՏԱՆ | Ք. ԵՐԵՎԱՆ | ԱՐԱԳԱԾՈՏՆ | ԱՐԱՐԱՏ | ԱՐՄԱՎԻՐ | ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ | ԼՈՌԻ | ԿՈՏԱՅՔ | ՇԻՐԱԿ | ՍՅՈՒՆԻՔ | ՎԱՅՈՑ ՁՈՐ | ՏԱՎՈՒՇ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2012 | 2,674.7 | 1,920.9 | 46.5 | 88.7 | 83.3 | 34.8 | 113.0 | 136.6 | 140.8 | 84.9 | 5.4 | 19.8 |
| 2013 | 2,603.3 | 1,878.9 | 29.9 | 85.8 | 66.6 | 42.2 | 98.8 | 142.2 | 140.5 | 93.2 | 5.8 | 19.4 |
| 2014 | 2,594.4 | 1,845.0 | 29.2 | 102.1 | 85.4 | 46.1 | 97.7 | 139.5 | 132.8 | 84.2 | 8.8 | 23.6 |
| 2015 | 2,453.6 | 1,763.7 | 33.0 | 109.9 | 78.5 | 47.9 | 94.4 | 119.4 | 116.5 | 63.0 | 6.3 | 21.0 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 (http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf **)**

50. Հայաստանի մարզերից Երևան հասանելիությունը շատ տարբեր է, այն տատանվում է 30 րոպեից՝ Արագածոտնի համար, մինչև 249 րոպե՝ Սյունիքի մարզի համար, հասանելիության միջին ցուցանիշը կազմում է 86.3 րոպե:

51. Հայաստանի տարածքով անցնող երկաթուղին կապում է Հայաստանի մայրաքաղաքը և 8 մարզերը Վրաստանի երկաթուղու հետ: «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի փոխադրական ունակությունը կազմում է տարեկան 50 մլն տոննա և 5.5 մլն ուղևոր (http://www.ukzhd.am/arm_about_company.html), որը սակայն թերի է օգտագործվում:

52. ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, 2015թ. երկաթուղին տեղափոխել է շուրջ 2 500 հազար տոննա բեռ, կամ օգտագործել իր լրիվ հզորության շուրջ 5%: Այս ծավալը նվազում է տարեցտարի և 2013թ. նկատմամբ արձանագրվել է շուրջ 22.7% նվազում (աղբյուրը՝ ԱՎԾ, Հայաստանը թվերով, 2016 http://www.armstat.am/file/article/armenia_2016_10.pdf ):

53. **Հեռահաղորդակցություն.** ՀՀ տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապն ապահովում են՝ «Արմենթել», «ՎիվաՍել-ՄՏՍ», «Յուքոմ» օպերատորները: Լարային կապ են ապահովում «Արմենթել», «Յուքոմ» և «Ռոստելեկոմը», որը ներառում է ֆիքսված հեռախոսակապի, ինտերնետ հասանելիության և նոր սերնդի IP հեռուստատեսության ծառայություններ ֆիզիկական անձանց և կորպորատիվ հաճախորդների համար:

54. ՀՀ տարածքում գործում է ‹‹Հայփոստ›› ՓԲԸ-ն, որը ունի 900 փոստային բաժանմունքներ՝ սփռված ՀՀ բոլոր քաղաքներում և գյուղերում (աղբյուր https://www.haypost.am/hy/about-haypost ):

55. 2016 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ բնակչությունը հնարավորություն ուներ դիտելու և լսելու Հայաստանի Հանրապետությունում գործող 90 հեռուստաընկերություն, որից 36-ը՝ վերգետնյա եթերային, 54-ը՝ կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող և 18 ռադիոընկերության եթերը: Վերգետնյա եթերային 36 հեռուստաընկերություններից 6-ը հանրապետական սփռման են, որից 1-ը՝ վերահեռարձակում իրականացնող, 9-ը մայրաքաղաքային սփռման են՝ ներառյալ 3 վերահեռարձակում իրականացնող, 21-ը տարածքային սփռման են, այդ թվում 12-ը՝ տեղական հեռուստաընկերություններ (աղբյուր՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով http://tvradio.am/resources/menu//adminzonetv/elections/564bf10b0ba7156692c69989684ea98f.pdf):Միևնույն ժամանակ Երևան քաղաքում և հանրապետության որոշ քաղաքային բնակավայրերում հասու են IP հեռուստատեսության ծառայությունները, որոնք թույլ են տալիս թվային որակով դիտելու հարյուրավոր հեռուստաալիքներ, վերոնշյալը սակայն դեռևս հասու չէ հանրապետության մարզերի բնակչության

մեծամասնությանը:

## 2.5. ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

ՔԱՐՏԵԶ 4. ՀՀ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ




Աղբյուրը՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական

56. ՀՀ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 7533.6կմ, որից՝ միջպետական նշանակության՝ 1758.8կմ, հանրապետական նշանակության՝ 1969,1կմ և մարզային (տեղական) նշանակության՝ 3805,7 կմ:

տեխնոլոգիաների նախարարություն (http://mtcit.am/ArmeniaMap.html)

57. Յուրաքանչյուր մարզի տարածքում միջինում առկա է շուրջ 740 կմ ավտոճանապարհ, ընդ որում միջպետական ճանապարհների միջին երկարությունը կազմում է շուրջ 23%, հանրապետական նշանակության ճանապարհները շուրջ 25.5%, իսկ մարզային (տեղական) նշանակության ճանապարհները՝ 51.5%:

ԱՂՅՈՒՍԱԿ 5.ՀՀ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

| Նշանակություն | Երկարությունը, (կմ) | Խտությունը 1կմ$^2$ հաշվով (կմ /կմ$^2$) | Խտությունը 10000 բնակչի հաշվով, (կմ/10000 բնակիչ) |
|---|---|---|---|
| **Միջպետական** | 1,759 | 0.0606 | 5.87 |
| **Հանրապետական** | 1,969 | 0.0661 | 6.57 |
| **Մարզային (տեղական)** | 3,806 | 0.1278 | 12.69 |
| **Ընդամենը** | **7,533.6** | **0.2545** | **24.60** |

Աղբյուրը՝ http://www.mtcit.am/edfiles/files/POXADRUMNER/voroshum.pdf և ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն

58. Վերլուծելով ճանապարհային խտությունն ըստ մարզերի, ամենախիտը, ըստ 10 000 բնակչի Վայոց ձորի մարզն է, քանի որ ամենանոսր բնակեցվածն է, իսկ ամենանոսրը Կոտայքի մարզն է: Տարածքի հաշվով ամենախիտ ճանապարհային ցանց ունեցողը Արմավիրի մարզն է, որի ճանապարհային խտության բարձ աստիճանը կապված է միջպետական և տեղական ճանապարհների բարձր խտությամբ:

59. Հայաստանի միջպետական նշանակության ճանապարհները գտնվում են համեմատաբար բարվոք վիճակում, սակայն միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վիճակը հիմնականում գնահատվում է վատ կամ շատ վատ: Անգամ քաղաքային բնակավայրերի ներքին ճանապարհների շուրջ 41% չունի ասֆալտ-բետոնե ծածկ, Գեղարքունիքի մարզում այց ցուցանիշը հասնում է 73%: Գյուղական բնակավայրերի ճանապարհները գտնվում են ավելի վատ վիճակում:

ԱՂՅՈՒՍԱԿ 6. ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՎԻՃԱԿԸ 2016Թ., ԿՄ

| | Ներքաղաքային ճանապարհային ցանցի երկարությունը, կմ | Ասֆալտապատ ներքաղաքային ճանապարհային ցանցի երկարությունը, կմ | Հողապատ կամ խճապատ ներքաղաքային ճանապարհային ցանցի երկարությունը, կմ | % ընդհանուր ցանցի նկատմամբ |
|---|---|---|---|---|
| **Արագածոտն** | 128.6 | 58.1 | 70.5 | 55% |
| **Արարատ** | 139 | 57.7 | 81.3 | 58% |
| **Արմավիր** | 436.7 | 295.9 | 140.8 | 32% |
| **Գեղարքունիք** | 316.9 | 86.9 | 230 | 73% |
| **Լոռի** | 457.42 | 286.8 | 170.62 | 37% |
| **Կոտայք** | 539.6 | 416.0 | 123.6 | 23% |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Շիրակ** | 257 | 107 | 150 | 58% |
| **Սյունիք** | 151.58 | 98.8 | 52.78 | 35% |
| **Վայոց Ձոր** | 88.8 | 74.7 | 14.1 | 16% |
| **Տավուշ** | 259.8 | 166.15 | 93.65 | 36% |
| **ՀՀ մարզեր** | **2775.5** | **1648.0** | **1127.4** | **41%** |

Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալների վրա կատարված վերլուծություն

60. Հայաստանի երկաթուղին շահագործվում է մասամբ, որը պայմանավորված է Ադրբեջանի և Թուրքիայի հետ սահմանների փակ լինելով: Այս իսկ պատճառով երկաթգծի բաց ծավալուն երկարության 1321,5 կմ-ից, որից 806.5 կմ գլխավոր ուղիներն են, որից 2.56% երկուղի է, շահագործվում է միայն 693,7կմ: Իսկ առկա չորս կցակայաններից շահագործվում է միայն մեկը՝ Այրում-Սադախլու (Վրաստան), Ախուրյան-Դոգուկապի (Թուրքիա) - չի գործում, Երասխ-Վելիդաղ (Ադրբեջան) - չի գործում, Իջևան-Բարխուդարլի (Ադրբեջան) - չի գործում: Բոլոր չորս կցակայանների աշխատանքի դեպքում ՀԿԵ ՓԲԸ-ի փոխադրական ունակությունը կազմում է տարեկան 50 մլն տոննա և 5,5 մլն ուղևորներ, իսկ Այրումի միայն մի կցվանքի թողունակությունը օրական 18 զույգ գնացք է: ՀԿԵ ՓԲԸ-ն լրիվ էլեկտրաֆիկացված է, հանդերձավորված է կիսավտոմատացված բլոկավորման և կապի ժամանակակից տեխնոլոգիական համակարգերով: ՀԿԵ ՓԲԸ-ն ունի 74 կայարան:

ԱՂՅՈՒՍԱԿ 7. ՀՀ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

| Նշանակություն | Երկարությունը (կմ) | Խտությունը 1կմ.ք հաշվով (կմ /կմ ք) | Խտությունը 10000 բնակչի հաշվով, (կմ/10000 բնակիչ) |
|---|---|---|---|
| Գլխավոր ուղիներ | 806.5 | 0.0271 | 2.69 |
| Տեղական | 515.0 | 0.0173 | 1.72 |
| **Ընդամենը** | **1,321.5** | 0.0444 | 4.41 |

Աղբյուրը՝ Հարավ Կովկասյան երկաթուղի ՓԲԸ պաշտոնական կայք (http://www.ukzhd.am/arm_about_company.html )



61. **Էներգետիկ ենթակառուցվածք.** Հայաստանի էներգետիկ ենթակառուցվածքում հիմնական էներգիա արտադրողներն են Հայկական ատոմային էլեկտրակայանը (ՀԱԷԿ), ՋԷԿ-եր (Հրազդանի և Երևանի), ՀԷԿ-երի կասկադներ (Սևան-Հրազդանի և Որոտանի), ինչպես նաև ՓՀԷԿ-ները:

ԱՂՅՈՒՍԱԿ 8. ՀՀ ԷԼԵԿՏՐԱԱՐՏԱԴՐՈՂ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Էլեկտրական էներգիա արտադրող կայաններ** | **2016** | | **2015** | |
|---|---|---|---|---|
| | մլն կվտժ | % | մլն կվտժ | % |
| **Էլեկտրական էներգիայի արտադրանքը** | 7315.21 | 100.00 % | 7798 | 100.00 % |
| **1 ՀԱԷԿ ՓԲԸ** | 2380.47 | 32.50% | 2788 | 35.70% |
| **1,2 Ջերմային կայաններ** | 2563.53 | 35.00% | 2780 | 35.60% |
| **1.2.1 ՀրազՋԷԿ ԲԲԸ** | 441.39 | 6.00% | 546.8 | 7.00% |
| **1.2.2 Գազպրոմ Արմենիա ՓԲԸ (Հրազդան-5)** | 694.82 | 9.50% | 638.4 | 8.20% |
| **1.2.3 Երևանի ՋԷԿ ՓԲԸ** | 0 | 0.00% | 0 | 0.00% |
| **1.2.3 Երևանի ՋԷԿ ՓԲԸ (շոգեգազ համակց ցիկլով աշխ. էն. բլոկ)** | 1427.31 | 19.50% | 1595 | 20.40% |
| **1.3 Հիդրոկայաններ + փոքր էլեկտրական կայաններ** | 2371.22 | 32.40% | 2231 | 28.60% |
| **1.3.1 ՄԷԿ ՓԲԸ** | 405.46 | 5.50% | 453.4 | 5.80% |
| **1.3.2 Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ (մինչև 01.07.2015թ՝ Որոտանի ՀԷԿՀ ՓԲԸ)** | 988.32 | 13.50% | 915.9 | 11.70% |
| **1.3.3 Ձորագետ Հիդրո ՍՊԸ ( մինչև 01.08.2015թ Ձորա ՀԷԿ)** | 0 | 0.00% | 0 | 0.00% |
| **1.3.4 Փոքր Էլեկտրակայաններ** | 977.43 | 13.40% | 861.5 | 11.00% |

Աղբյուրը՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայք էջ (http://www.minenergy.am/page/396)

62. Ինչպես երևում է վերլուծությունից, Հայաստանի էներգագեներացումը բաժանված է գրեթե 3 հավասարաչափ մասի՝ ատոմային, ջերմային և հիդրո: Հիդրոէներգիայի մասնաբաժինը տարեցտարի շատանում է՝ նոր թողարկվող ՓՀԷԿ հաշվին: 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ էլեկտրական էներգիա են արտադրել 182 փոքր ՀԷԿ-եր, որոնց գումարային դրվածքային հզորությունը կազմել է մոտ 339 ՄՎտ, իսկ էլեկտրական էներգիայի փաստացի միջին տարեկան օգտակար առաքումը՝ 917 մլն կՎտ/ժ: 2016թ. էլեկտրական էներգիայի արտադրությունը փոքր ՀԷԿ-երի կողմից կազմել է շուրջ 957 մլն կՎտ/ժ, որը կազմում է Հայաստանում արտադրված ամբողջ էլեկտրական էներգիայի (7315 մլն.կՎտ/ժ) մոտ 13% -ը: Ըստ տրամադրված լիցենզիաների 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ կառուցման փուլում են գտնվում ևս 36 ՓՀԷԿ, նախագծային մոտ 72,4 ՄՎտ գումարային հզորությամբ և 262 մլն կՎտ/ժ էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությամբ:

63. **Գազամատակարարում**. ՀՀ հանդիսանում է ամենագազաֆիկացված երկրներից մեկը, այստեղ գազաֆիկացված են 617 բնակավայր, որտեղ բնակվում են երկրի բնակչության շուրջ 94.6%: Փոխադրման համակարգում սպասարկվող մայրուղային գազատարերի և գազատարեր-ճյուղավորումների ընդհանուր երկարությունը կազմում է 1685 կմ: Գազի փոխադրումը իրականացվում է 1596 կմ գազատարի միջոցով: Մնացած մասը գտնվում է օպերատիվ պահուստի ռեժիմում: Հանրապետության տարածքում գործում են 373 ԱԳԼՃԿ-ներ: Հանրապետության ավտոմեքենաների պարկի շուրջ 77% աշխատում է բնական գազով: Էներգետիկ անվտանգության տեսանկյունից կարևոր է նշել Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի գոյությունը, որը կարող է ապահովել հանրապետության գազամատակարարումը շուրջ 90 օր, անգամ այն դեպքում, երբ Վրաստանի և Իրանի հետ կապող գազատարերը չգործեն (աղբյուր՝ Գազպրոմ Արմենիա http://armenia-am.gazprom.com/about/today/ ):

64. Մարզերի գազաֆիկացման միջև առկա են մեծ տարբերություններ, այսպես մարզերը հիմնականում լավ գազաֆիկացված են, բացառություն են կազմում Սյունիքի և Վայոց Ձորի մարզերը (Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի գազաֆիկացումը մեկնարկել է 2016թ.):

65. **Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքներ**. ՀՀ հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովի 2016թ. դեկտեմբերի 9-ի թիվ 397-Ա որոշմամբ ՀՀ տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման իրականացման միասնական օպերատոր է ընտրվել <<Վեոլա Ջուր>> ՓԲԸ-ն (աղբյուր՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով http://www.psrc.am/images/docs/license/water/Sakagner/Voroshum.pdf): Խմելու ջրամատակարար ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը վարձակալությամբ հանձնելու մրցութային գործընթացն ապահովելու նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 10.03.2016թ. N271-Ն որոշումը: Հետագայում ՀՀ կառավարության հոկտեմբերի 27-ի նիստի «ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ՇԻՐԱԿ - ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ԵՎ «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը վարձակալության հանձնելու գործընթացի շրջանակում անցկացված գնման ընթացակարգի արդյունքներին և ստորագրվելիք վարձակալության պայմանագրի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N 43 արձանագրության քաղվածքով հավանության է արժանացել «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-երի կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացի շրջանակում անցկացված ՀՀԳՆՋՏՊԿ-ՄԵԾՁԲ-N 15/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքները՝ գնման ընթացակարգի հաղթող ճանաչելով «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերությանը և վարձակալության պայմանագիրը: 2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրվել է վարձակալության պայմանագիր:

66. Մարզերի մեծամասնությունում խմելու ջրի մատակարարումը ունի հստակ բարելավման տենդենց, սակայն դեռևս գոյություն ունեն համայնքներ, որտեղ առկա է ինչպես ներբնակավայրային ջրամատակարարման ցանցերի վերակառուցման, այնպես էլ ջրի մաքրման և աղտահանման և շուրջօրյա ջրամատակարարման ապահովման խնդիր: Այսպիսով՝ մարզերի բնակչության շուրջ 38.8% ունի մինչև 12 ժամ ջրամատակակարում, իսկ մարզերում ջրամատակարարման օրական միջին տևողությունը կազմում է շուրջ 16 ժամ:

ԱՂՅՈՒՍԱԿ 9. ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 2016Թ.

| | **Ջրամատակարարման տևողությունը ժամ/օր** | **Մինչև 12 ժամ ջրամատակարարում,** | **Մինչև 6 ժամ ջրամատակարարում,** |
|---|---|---|---|

| | | | % բնակչությունից | % բնակչությունից |
|---|---|---|---|---|
| | Գյուղական բնակավայրեր | Քաղաքային բնակավայրեր | | |
| **ՀՀ մարզեր** | 14.67 | 17.57 | 22% | 7% |
| **Արագածոտն** | 21.76 | 11.05 | 59% | 35% |
| **Արարատ** | 9.74 | 16.90 | 53% | 25% |
| **Արմավիր** | 13.66 | 17.55 | 43% | 17% |
| **Գեղարքունիք** | 15.99 | 16.42 | 30% | 5% |
| **Լոռի** | 18.22 | 15.41 | 24% | 15% |
| **Կոտայք** | 15.81 | 20.89 | 16% | 3% |
| **Շիրակ** | 17.17 | 19.83 | 40% | 10% |
| **Սյունիք** | 16.55 | 15.84 | 11% | 9% |
| **Վայոց Ձոր** | 20.21 | 24.00 | 78% | 62% |
| **Տավուշ** | 3.43 | 12.65 | 38% | 19% |

*Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալների վրա կատարված վերլուծություն*

67. **Կեղտաջրերի կառավարման ենթակառուցվածք.** Խորհրդային ժամանակաշրջանում ՀՀ բոլոր 48 քաղաքները և մոտ 250 գյուղերը միացած են եղել ջրահեռացման ցանցին, որը սպասարկել է քաղաքային բնակչության 60-80%-ին և գյուղական բնակչության 50%-ին: Երևանի բնակչության 97%-ը միացած է եղել կոյուղու ցանցին: Հանրապետությունում գործել են 20 կոյուղու մաքրման կայաններ, որոնք սպասարկել են միայն քաղաքներին և դրանց մոտակա գյուղերին: Մնացած բնակավայրերից հեռացվող կեղտաջրերն անմիջապես թափվել են մակերևութային ջրավազաններ:

68. Ներկայումս Հայաստանի Հանրապետության համայնքների շատ փոքր մասն է ապահովված ջրահեռացման համակարգերով, ընդ որում դրանք կառուցվել են խորհրդային ժամանակաշրջանում, դրանց տեխնիկական վիճակը անմխիթար է: Հայաստանի Հանրապետությունում գործում են կեղտաջրերի մաքրման թվով 6 կայաններ: Ներկայումս նախատեսվում է Սևան և Մեծամոր քաղաքներում կառուցել մեխանիկական մաքրման կայաններ Հայաստանի ջրային աղբյուրների, ոռոգման ջրատարների և գետերի աղտոտվածության հիմնական աղբյուրը տարեցտարի ավելացող կենցաղային և արտադրական կեղտաջրերն են:

69. ԱՎԾ տվյալների վերլուծության արդյունքում երևում է, որ արդյունավետ է գործում միայն Արարատի և Արմավիրի մարզերի արդյունաբերական կեղտաջրերի մաքրման կայանը, որը թույլ է տալիս մաքրել մարզերի կեղտաջրերի համապատասխանաբար շուրջ 85% և 96%. Սակայն ինչպես պարզ է դառնում վերլուծությունից, կենցաղային կեղտաջրերի մաքրումը հանդիսանում է մեծ խնդիր անգամ Երևան քաղաքում, որտեղ գործում է կեղտաջրերի մաքրման կայանը:

70. Կեղտաջրերի թերի մաքրումը կամ չմաքրումը և վարակազերծումը մեծ խնդիր է, քանի որ չեն մաքրվում նաև բժշկական կազմակերպությունների կոյուղաջրերը, այստեղ տեղադրված չեն մաքրման և վարակազերծման սարքավորումներ:

71. **Կոշտ թափոնների կառավարման ենթակառուցվածք.** Հանրապետությունում կոշտ կենցաղային թափոնների կառավարման հարցի համար դրական փորձ է արձանագրվել միայն որոշ քաղաքային համայնքներում, այն էլ կոշտ կենցաղային թափոնների հավաքման և տեղափոխման մասով: Սակայն աղբավայրերի կառավարումը հանրապետությունում դեռևս մեծ խնդիր է: Բացի թույլատրված աղբավայրերի, գոյություն ունեն նաև տարերայնորեն գոյացած աղբավայրեր, իսկ փոքր համայնքներում, որտեղ չկա աղբի հավաքման համակարգ, բնակչությունը այրում է կամ թաղում է գոյացած աղբը պատահական վայրերում:

72. Հանրապետության տարածքում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման համար գործունեություն է իրականացնում «Էկոլոգիա ՎԿՀ» ՍՊԸ-ն, որը պայմանագրային սկզբունքով, հավաքում, տեղափոխում, պահպանում և վնասազերծում է ժամկետանց դեղորայքի, բժշկական կոշտ և հեղուկ, ինչպես նաև վիրահատություններից առաջացած թափոնները:

## 2.6. ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

73. Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն 2015 թվականին կազմել է 5043,6 մլրդ դրամ (շուկայական գներով), մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ 1.678 մլն դրամ: ՀՆԱ-ն 2016 թվականին կազմել է 5079,86 մլրդ դրամ (շուկայական գներով), մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ 1.697 մլն դրամ: Մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը մարզերով հաշվարկված չէ, սակայն առկա է ՀՆԱ-ի փորձագիտական հաշվարկ՝ 2009-

2015թթ. համար: Համաձայն այդ գնահատականի, ՀՆԱ բաշխվածքը ՀՀ-ում ծայրահեղ անհամաչափ է, այսպես ՀՆԱ շուրջ 55% բաժին է ընկնում Երևան քաղաքին, իսկ մնացած 45% ՀՀ մարզերին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ՀՆԱ-Ն 2009Թ. և 2015Թ.




Աղբյուրը՝ ԵՄ փորձագիտական թիմի վերլուծություն

74. 2009-2015թթ. հանրապետության մեկ շնչին ընկնող ՀՆԱ աճել է, վերոնշյալ աճը ավելի արտահայտիչ է եղել հիմնականում եղել է Լոռու, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ՀՆԱ-Ի ԱՃԸ 2009 և 2015Թ.




Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf)

Գծապատկեր 7. Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի տարածքային մասնաբաժինները, 2009 և 2015թ.







Աղբյուրը՝ ԵՄ փորձագիտական թիմի վերլուծություն

75. Ինչպես երևում է գծապատկերից, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն նույնպես ծայրահեղ տարբեր է մարզից մարզ, այսպես, Երևան քաղաքում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2015թ. կազմում էր հանրապետության միջին ցուցանիշի շուրջ 159%, իսկ մնացած մարզերինը, որպես կանոն (բացառությամբ Սյունիքի մարզի) կազմում էր հանրապետության միջինի 48%-80%, այսինքն՝ զիջում էր Երևանի ցուցանիշներին 2-4 անգամ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ ՀՆԱ-Ն ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԻՆԻ %, 2015Թ.




Աղբյուրը՝ ԵՄ փորձագիտական թիմի վերլուծություն

76. Վերլուծելով տնային տնտեսությունների եկամուտների բաշխվածքը, ըստ հանրապետության մարզերի, երևում է, որ հանրապետության մարզերից, մասնավորապես Սյունիքի և Արագածոտնի մարզերն ու Երևան քաղաքը իրենց բնակչությանն ապահովում են մեկ շնչին ընկնող ամենաբարձր դրամական եկամուտներով, ընդ որում սեփական եկամուտների տեսանկյունից վերոնշյալ երեք տարածաշրջանները նույնպես առաջատարն են: Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերը ապահովում են իրենց բնակչությանը շուրջ եռակի ավելի քիչ եկամուտ, քան առաջատար մարզերը, այս մարզերի բնակիչների եկամուտի հիմնական աղբյուրները կապված չեն զբաղվածության հետ:

ԱՂՅՈՒՍԱԿ 10. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿ ՇՆՉԻՆ ԸՆԿՆՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ և ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, 2015Թ.

| | **Մեկ շնչին ընկնող դրամական եկամուտներ** | | **Սեփական եկամուտներ** | |
|---|---|---|---|---|
| | **Ընդամենը ՀՀ դրամ** | **% հանրապետության միջինի նկատմամբ** | **Սեփական եկամուտներ* ՀՀ դրամ** | **% հանրապետության միջինի նկատմամբ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 65,868 | 125.8% | 49,488 | 136% |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 69,656 | 133.0% | 45,224 | 125% |
| **ԱՐԱՐԱՏ** | 48,309 | 92.2% | 35,970 | 99% |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 40,344 | 77.0% | 29,655 | 82% |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 42,205 | 80.6% | 20,809 | 57% |
| **ԼՈՌԻ** | 37,413 | 71.4% | 17,883 | 49% |
| **ԿՈՏԱՅՔ** | 47,702 | 91.1% | 33,773 | 93% |
| **ՇԻՐԱԿ** | 38,217 | 73.0% | 20,528 | 57% |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 72,061 | 137.6% | 57,719 | 159% |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 43,360 | 82.8% | 27,560 | 76% |
| **ՏԱՎՈՒՇ** | 38,592 | 73.7% | 25,253 | 70% |
| **Ընդամենը** | **52,377** | **100.0%** | **36,316** | **100%** |

* Վարձու աշխատանքի, ինքնազբաղվածության և գյուղմթերքի և կենդանիների վաճառքից ստացված եկամուտ
Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, վերլուծություն (http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf )

77. Տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքում պետական թոշակները շատ կարևոր դեր են խաղում Լոռու, Շիրակի և Վայոց Ձորի բնակչության եկամուտներում: Տնային տնտեսությունների եկամուտների մյուս կարևոր բաղադրիչը հանդիսանում են տրանսֆերտները, որոնք բոլոր մարզերում՝ բացառությամբ Արարատի և Արագածոտնի, ավելի մեծ եկամուտ են ապահովել տնային տնտեսություններին, քան գյուղատնտեսությունը: Տրանսֆերտների ծավալով ամենամեծ կշիռը ունենն Արագածոտնի մարզում ստացվածները, որոնք կազմում են ընտանեկան եկամտի շուրջ 19%:

ԱՂՅՈՒՍԱԿ 11. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿ ՇՆՉԻՆ ԸՆԿՆՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ԸՍՏ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ, 2015Թ.

| | **Այդ թվում** | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | վարձու աշխատանք | ինքնազբաղ-վածություն | գյուղմթերքի և կենդանի-ների վաճառք | սեփակա-նություն* | պետական թոշակներ և նպաստներ | Տրանսֆեր տներ | այլ եկամուտ |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 64% | 11% | 0% | 0% | 16% | 7% | 2% |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 39% | 2% | 24% | 0% | 15% | 19% | 1% |
| **ԱՐԱՐԱՏ** | 51% | 14% | 9% | 0% | 17% | 7% | 2% |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 50% | 16% | 8% | 0% | 14% | 9% | 4% |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 34% | 5% | 11% | 0% | 20% | 11% | 20% |
| **ԼՈՌԻ** | 41% | 4% | 2% | 0% | 30% | 15% | 8% |
| **ԿՈՏԱՅՔ** | 57% | 8% | 6% | 0% | 16% | 10% | 3% |
| **ՇԻՐԱԿ** | 37% | 5% | 13% | 0% | 25% | 16% | 5% |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 69% | 6% | 6% | 0% | 13% | 6% | 0% |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 48% | 10% | 5% | 0% | 23% | 10% | 3% |
| **ՏԱՎՈՒՇ** | 52% | 11% | 2% | 0% | 27% | 3% | 4% |
| **Ընդամենը** | 55% | 9% | 5% | 0% | 18% | 9% | 4% |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, վերլուծություն (http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf)

78. Միջին անվանական աշխատավարձը ՀՀ-ում տարեցտարի ավելանում է, կրճատելով տարբերությունները մարզերի և ք. Երևանի միջև, սակայն, միևնույն է՝ այդ տարբերությունը բավականին մեծ են: Երևանից ավելի բարձր են միջին անվանական աշխատավարձերը միայն Սյունիքնի մարզում, հանքարդյունաբերական ձեռնարկությունների շնորհիվ:

ԱՂՅՈՒՍԱԿ 12. ՄԻՋԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

| | **Անվանական աշխատավարձը, դրամ** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2013** | | **2014** | | **2015** | |
| | **ՀՀ դրամ** | **% հանր. միջինի նկատմամբ** | **ՀՀ դրամ** | **% հանր. միջինի նկատմամբ** | **ՀՀ դրամ** | **% հանր. միջինի նկատմամբ** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **146,524** | **100%** | **158,580** | **100%** | **171,615** | **100%** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 160,804 | **110%** | 166,127 | **105%** | 180,105 | **105%** |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 102,191 | **70%** | 111,702 | **70%** | 119,174 | **69%** |
| **ԱՐԱՐԱՏ** | 117,551 | **80%** | 126,262 | **80%** | 135,560 | **79%** |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 126,010 | **86%** | 136,533 | **86%** | 145,798 | **85%** |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 112,439 | **77%** | 121,369 | **77%** | 136,583 | **80%** |
| **ԼՈՌԻ** | 113,456 | **77%** | 127,282 | **80%** | 140,497 | **82%** |
| **ԿՈՏԱՅՔ** | 126,488 | **86%** | 136,343 | **86%** | 146,077 | **85%** |
| **ՇԻՐԱԿ** | 104,240 | **71%** | 115,847 | **73%** | 124,203 | **72%** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ՍՅՈՒՆԻՔ** | 178,606 | **122%** | 187,878 | **118%** | 197,836 | **115%** |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 105,624 | **72%** | 117,660 | **74%** | 127,964 | **75%** |
| **ՏԱՎՈՒՇ** | 102,247 | **70%** | 117,831 | **74%** | 128,279 | **75%** |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, վերլուծություն (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf )

ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՃ 2013-2015ԹԹ, ԴՐԱՄ




Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, վերլուծություն (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf )

79. ՀՀ-ում պետական հատվածի աշխատավարձերը բաշխված են անհամաչափ: Այսպես` Երևան քաղաքում պետական աշխատավարձերը գերազանցում են հանրապետության միջին ցուցանիշը շուրջ 7%, իսկ հանրապետության մարզերում այդ ցուցանիշը կազմում է հանրապետության միջինի շուրջ 70% (բացի Արմավիրի մարզից, որտեղ կազմում է 88%): Ոչ պետական հատվածում աշխատավարձերի գծով առաջատարը հանդիսանում է Սյունիքի մարզը, և այստեղ հանրապետության միջին ցուցանիշը և Երևան քաղաքի ցուցանիշները շատ մոտ են միմյանց: Միևնույն ժամանակ մարզերի գերակշռող մեծամասնությունում միջին ամսական աշխատավարձը, որը պետական հատվածում կազմում է հանրապետության միջին ցուցանիշից շուրջ 15% ավելի ցածր է:

ԱՂՅՈՒՍԱԿ 13. ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ, ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ, 2013-2015ԹԹ.

| | **Պետական, դրամ** | | | | **Ոչ պետական, դրամ** | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **2013** | **2014** | **2015** | **2015 թ. համեմատական** | **2013** | **2014** | **2015** | **2015 թ. համեմատական** |
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ** | **134,193** | **146,596** | **160,522** | **100%** | **160,324** | **172,073** | **184,416** | **100%** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 158,792 | 154,277 | 171,561 | **107%** | 162,779 | 173,776 | 185,975 | **101%** |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 91,869 | 100,114 | 109,087 | **68%** | 129,633 | 142,360 | 150,129 | **81%** |
| **ԱՐԱՐԱՏ** | 96,171 | 104,935 | 114,144 | **71%** | 140,346 | 149,348 | 159,114 | **86%** |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 120,040 | 129,621 | 141,309 | **88%** | 139,143 | 152,127 | 157,077 | **85%** |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 97,413 | 105,881 | 115,511 | **72%** | 161,185 | 172,681 | 216,487 | **117%** |
| **ԼՈՌԻ** | 96,295 | 104,491 | 114,293 | **71%** | 137,635 | 156,501 | 177,325 | **96%** |
| **ԿՈՏԱՅՔ** | 95,228 | 107,546 | 119,133 | **74%** | 147,620 | 156,033 | 165,152 | **90%** |
| **ՇԻՐԱԿ** | 97,228 | 106,067 | 116,555 | **73%** | 119,389 | 137,057 | 140,567 | **76%** |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 95,756 | 104,257 | 112,921 | **70%** | 248,408 | 260,361 | 271,340 | **147%** |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 89,620 | 98,089 | 107,727 | **67%** | 128,325 | 146,045 | 158,799 | **86%** |
| **ՏԱՎՈՒՇ** | 90,080 | 99,847 | 111,752 | **70%** | 125,555 | 153,526 | 161,160 | **87%** |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, վերլուծություն (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf )

## 2.7. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

80. 2015թ. Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես ակտիվ բնակչության թիվը 1316.4 հազար մարդ է, որը կազմում է ՀՀ ընդհանուր բնակչության 43.9%-ը: Հանրապետության ակտիվ բնակչության քանակը նվազում է տարեցտարի, նվազում է նաև բնակչության տնտեսական ակտիվության ցուցանիշը: Այսպես՝ հանրապետության տնտեսապես ակտիվ բնակչությունը 2013 թ.-ին կազմել է 1,388 մլն մարդ, իսկ 2015 թ.-ին արդեն 72.0 հազարով պակաս՝ 1.316 մլն մարդ: Միևնույն ժամանակ նվազել է նաև առկա բնակչության ակտիվության ցուցանիշը, այսպես 2013 թ.-ին տնտեսապես ակտիվ էին 15-75 տարեկան առկա բնակչության շուրջ 63.4% իսկ 2015 թ. արդեն 0.9%-ով պակաս՝ 62.5%-ը:

81. Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության ամենացածր մակարդակը Շիրակի մարզում է, ապա հաջորդում են Գեղարքունիքի և Լոռու մարզերը: Տնտեսական ակտիվության ամենաշատ նվազումը արձանագրվել է Արագածոտնի մարզում (-18.1%), Տավուշի և Սյունիքի մարզերում: Առկա բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը աճել է Երևան քաղաքում, շուրջ 0.8% և Կոտայքի մարզում, շուրջ 5.5 %:

82. Կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվությունների միջին մակարդակները տարբեր են շուրջ 20%, այս տարբերությունը ավելի ակնհայտ է տնտեսական ակտիվության ավելի բարձր մակարդակ ունեցող տարածաշրջաններում՝ Սյունիքի (34.2%) և Կոտայքի (22.3%) մարզերում և Երևան քաղաքում (23.9%): Տարբերության ամենացածր մակարդակը արձանագրվել է Տավուշի մարզում (6.3%):

ԱՂՅՈՒՍԱԿ 14. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ, %

| | Ընդամենը, % | | | Տղամարդ | | | Կին | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2013 | 2014 | 2015 | 2013 | 2014 | 2015 | 2013 | 2014 | 2015 |
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ** | **63.4** | **63.1** | **62.5** | **72.8** | **73.2** | **72.6** | **55.9** | **55.2** | **54.3** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 60.6 | 59.9 | 61.4 | 74.3 | 75.0 | 75.0 | 50.3 | 48.5 | 51.1 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 80.8 | 70.7 | 62.7 | 81.1 | 77.4 | 72.3 | 80.5 | 65.4 | 54.8 |
| **ԱՐԱՐԱՏ** | 72.0 | 73.4 | 69.3 | 79.3 | 76.9 | 76.0 | 65.6 | 70.4 | 63.6 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 67.6 | 64.3 | 67.6 | 75.1 | 75.2 | 75.7 | 60.6 | 54.7 | 60.2 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 60.5 | 61.0 | 56.8 | 60.0 | 63.6 | 63.4 | 60.9 | 59.0 | 51.7 |
| **ԼՈՌԻ** | 62.2 | 66.1 | 58.8 | 69.5 | 75.8 | 68.8 | 57.1 | 60.0 | 51.6 |
| **ԿՈՏԱՅՔ** | 56.5 | 59.0 | 62.0 | 69.9 | 72.0 | 74.1 | 44.2 | 47.9 | 51.8 |
| **ՇԻՐԱԿ** | 55.6 | 57.6 | 56.1 | 63.6 | 62.7 | 60.6 | 49.3 | 53.7 | 52.4 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 73.1 | 71.6 | 68.3 | 80.3 | 79.7 | 86.2 | 66.8 | 64.5 | 52.0 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 75.6 | 74.1 | 75.7 | 78.1 | 81.9 | 81.3 | 73.5 | 68.4 | 71.4 |
| **ՏԱՎՈՒՇ** | 71.2 | 66.6 | 65.3 | 77.9 | 73.2 | 68.7 | 66.1 | 61.1 | 62.4 |

(հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի) նկատմամբ)
Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf )

83. Գյուղական բնակչությունը տնտեսապես ավելի ակտիվ է քան քաղաքայինը: Այսպես, գյուղական բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը կազմում է 69.4%, իսկ քաղաքային բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը՝ շուրջ 11% ավելի ցածր, ընդամենը 58.3 %: Ըստ մարզերի տնտեսական ակտիվության ցուցանիշը քաղաքային բնակչության մոտ տատանվում է 46.0% Արմավիրի մարզում, մինչև 69.2% Վայոց ձորի մարզում, գյուղական բնակավայրերում բնակչության տնտեսապես ակտիվ մասը կազմում է առավելագույնը 79.9%, նվազագույնը՝ 58.9% Գեղարքունիքում, որը պայմանավորված է մարզի բնակչության արտագնա աշխատանքի ավանդույթներով:

ԱՂՅՈՒՍԱԿ 15. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ, ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ %

| | Քաղաքային | | | Գյուղական | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2013 | 2014 | 2015 | 2013 | 2014 | 2015 |
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ** | **58.3** | **59.6** | **58.3** | **72.5** | **69.2** | **69.4** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 60.6 | 59.9 | 61.4 | - | - | - |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 65.3 | 72.8 | 59.3 | 84.9 | 70.1 | 63.6 |
| **ԱՐԱՐԱՏ** | 63.1 | 68.6 | 64.5 | 74.9 | 75.3 | 71.0 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 50.4 | 55.9 | 46.0 | 76.4 | 68.7 | 78.0 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 52.8 | 56.5 | 53.1 | 64.6 | 63.6 | 58.9 |
| **ԼՈՌԻ** | 56.1 | 60.1 | 50.8 | 70.8 | 75.5 | 70.9 |
| **ԿՈՏԱՅՔ** | 50.3 | 59.1 | 60.2 | 64.9 | 58.8 | 64.0 |
| **ՇԻՐԱԿ** | 47.8 | 49.1 | 47.3 | 68.9 | 70.2 | 67.1 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 71.6 | 73.6 | 63.2 | 75.9 | 67.5 | 78.4 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 69.8 | 66.7 | 69.2 | 79.4 | 78.6 | 79.9 |
| **ՏԱՎՈՒՇ** | 66.3 | 60.1 | 60.8 | 74.2 | 70.1 | 68.9 |

(հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի) նկատմամբ)
Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf )

84. ՀՀ-ում 2015թ.-ին զբաղված են եղել բնակչության 36% կամ 1.07 մլն մարդ, որից 562.3 հազ. տղամարդ և 510.4 հազար կին: Զբաղվածությունը բաշխված է հանրապետությունով անհամաչափ: Այսպես՝ Երևան քաղաքում զբաղված են ընդհանուր բնակչության 27%, իսկ Արմավիրի և Արարատի մարզում համապատասխանաբար՝ շուրջ 48% և 45%:

85. Ընդհանուր աշխատատեղերի շուրջ 27%-ը նույնպես գտնվում է Երևան քաղաքում, իսկ 73%-ը մարզերում: Միևնույն ժամանակ Երևան քաղաքում են գտնվում Հայաստանի ֆորմալ աշխատատեղերի շուրջ 45.0%-ը, իսկ մարզերում միայն 55.0%-ը: Երևան քաղաքի բնակչության շուրջ 22.9% աշխատում է և ունի ֆորմալ աշխատատեղ: Երևան քաղաքի աշխատատեղերի շուրջ 83.7% ֆորմալ են, մարզերում այս ցուցանիշը կազմում է շուրջ 39%, կամ՝ ավելի քանի 2 անգամ քիչ:

ԱՂՅՈՒՍԱԿ 16. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ %

| | **Ընդհանուր զբաղվածություն, 2015** | | | **Ֆորմալ աշխատատեղ, 2015** | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հազ. մարդ | բաշխում | % բնակչության նկատմամբ | Հազ. մարդ | % բնակչության նկատմամբ | % ընդհանուր աշխ. նկատմամբ | բաշխում |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **1,072.6** | 100% | 36% | 546.3 | 18.2% | 50.9% | 100.0% |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 293.8 | 27% | 27% | 245.8 | 22.9% | 83.7% | 45.0% |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 51.4 | 5% | 40% | 19.5 | 15.0% | 37.9% | 3.6% |
| **ԱՐԱՐԱՏ** | 117.5 | 11% | 45% | 39.0 | 15.1% | 33.2% | 7.1% |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 128.4 | 12% | 48% | 29.6 | 11.1% | 23.1% | 5.4% |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 76.1 | 7% | 33% | 23.3 | 10.1% | 30.6% | 4.3% |
| **ԼՈՌԻ** | 96.7 | 9% | 43% | 43.9 | 19.5% | 45.4% | 8.0% |
| **ԿՈՏԱՅՔ** | 96.2 | 9% | 38% | 52.7 | 20.8% | 54.8% | 9.6% |
| **ՇԻՐԱԿ** | 86.6 | 8% | 36% | 32.3 | 13.3% | 37.3% | 5.9% |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 46.4 | 4% | 33% | 29.6 | 21.2% | 63.8% | 5.4% |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 23.8 | 2% | 47% | 9.6 | 18.9% | 40.3% | 1.8% |
| **ՏԱՎՈՒՇ** | 55.7 | 5% | 44% | 21.0 | 16.7% | 37.7% | 3.8% |

Աղբյուրը՝ Վերլուծություն ըստ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf )

86. Մարզերից ֆորմալ աշխատեղերի թիվը ավելի բարձր է Սյունիքի և Կոտայքի մարզերում և ամենացածրն է գյուղատնտեսության առաջատար Արմավիրի մարզում:

87. Ոչ ֆորմալ աշխատատեղերի քանակությունը կազմում է հանրապետության աշխատատեղերի շուրջ 50%-ը, սակայն, անկախ նվազման տենդենցների, այն դեռևս շատ մեծ է: Ոչ ֆորմալ աշխատատեղերի գերակշռող մեծամասնությունը՝ 76.2%, գյուղատնտեսության ոլորտում է: Գյուղատնտեսական աշխատատեղերի շուրջ 99.0% ոչ ֆորմալ են եղել 2015թ.-ին

ԱՂՅՈՒՍԱԿ 17. ՈՉ ՖՈՐՄԱԼ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ

| | **ոչ ֆորմալ աշխատատեղ, 1 000 աշխատատեղ** | | | | | | **Ընդամենը զբաղվածության նկատմամբ, %** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը** | | **Գյուղա տնտեսական** | | **ոչ գյուղա տնտեսական** | | **ընդամենը** | | **Գուղա տնտեսական** | | **ոչ գյուղա տնտեսական** | |
| | **2014** | **2015** | **2014** | **2015** | **2014** | **2015** | **2014** | **2015** | **2014** | **2015** | **2014** | **2015** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **584.0** | **526.3** | **419.8** | **401.5** | **164.0** | **124.8** | **49.9** | **47.7** | **99.3** | **99.0** | **22.0** | **17.9** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 54.7 | 48.0 | 2.1 | 0.4 | 52.6 | 47.5 | 17.6 | 16.2 | 77.4 | 65.6 | 17.1 | 16.1 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 40.8 | 31.9 | 27.7 | 22.0 | 13.1 | 9.9 | 60.8 | 59.7 | 97.1 | 97.8 | 34.0 | 32.0 |
| **ԱՐԱՐԱՏ** | 65.8 | 78.5 | 51.7 | 66.7 | 14.1 | 11.8 | 61.5 | 63.4 | 99.7 | 99.3 | 25.6 | 20.9 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԱՐՄԱՎԻՐ** | 88.4 | 98.8 | 76.7 | 87.1 | 11.7 | 11.7 | 71.4 | 75.4 | 100.0 | 98.9 | 24.8 | 27.2 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 71.7 | 52.8 | 62.6 | 48.1 | 9.1 | 4.7 | 75.2 | 66.7 | 99.9 | 99.9 | 27.9 | 15.0 |
| **ԼՈՌԻ** | 74.7 | 52.8 | 64.4 | 46.1 | 10.2 | 6.8 | 60.6 | 51.4 | 99.4 | 98.5 | 17.6 | 12.1 |
| **ԿՈՏԱՅՔ** | 46.1 | 43.5 | 19.7 | 26.2 | 26.4 | 17.3 | 47.8 | 44.9 | 98.1 | 96.1 | 34.6 | 24.8 |
| **ՇԻՐԱԿ** | 65.1 | 54.3 | 51.2 | 46.5 | 13.8 | 7.8 | 62.1 | 60.6 | 100.0 | 100.0 | 25.8 | 18.1 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 22.2 | 16.8 | 19.5 | 15.6 | 2.6 | 1.2 | 40.8 | 36.2 | 99.1 | 99.6 | 7.6 | 4.0 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 14.9 | 14.2 | 12.6 | 12.5 | 2.3 | 1.7 | 56.1 | 54.5 | 98.2 | 99.8 | 16.8 | 12.5 |
| **ՏԱՎՈՒՇ** | 39.6 | 34.7 | 31.6 | 30.3 | 8.1 | 4.4 | 65.3 | 58.4 | 99.8 | 99.7 | 22.0 | 15.2 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf )

88. Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ առանձին մարզերում մեծ խնդիր է մնում գործազրկության բարձր մակարդակը: 2015թ. գործազրկության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 18.5%, ընդ որում ք. Երևանի գործազրկության մակարդակը կազմել է 30.2%, իսկ մարզերի միջին մակարդակը` 13%: Միևնույն ժամանակ միջին հանրապետական ցուցանիշներով, գործազրկության մակարդակը կանանց մոտ ավելին է շուրջ 2%-ով, քան տղամարդկանց գործազրկությունը: Կանանց գործազրկության մակարդակը ավելի ցածր է, քան տղամարդկանցը՝ միայն Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 18. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ, ԸՍՏ ՍԵՌԵՐԻ

| | Ընդամենը, % | | | Տղամարդ | | | Կին | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **2013** | **2014** | **2015** | **2013** | **2014** | **2015** | **2013** | **2014** | **2015** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **16.2** | **17.6** | **18.5** | **14.4** | **15.8** | **17.6** | **18.1** | **19.5** | **19.5** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 24.0 | 26.9 | 30.2 | 19.5 | 24.7 | 28.1 | 28.9 | 29.5 | 32.5 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 3.3 | 5.1 | 5.7 | 2.0 | 2.3 | 1.6 | 4.3 | 7.7 | 10.0 |
| **ԱՐԱՐԱՏ** | 6.5 | 7.5 | 8.3 | 6.8 | 1.8 | 4.6 | 6.1 | 12.8 | 12.0 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 5.5 | 7.4 | 9.4 | 5.8 | 8.2 | 11.1 | 5.2 | 6.5 | 7.4 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 8.2 | 5.8 | 4.7 | 6.6 | 7.7 | 6.4 | 9.4 | 4.1 | 3.1 |
| **ԼՈՌԻ** | 19.2 | 16.9 | 15.7 | 17.1 | 17.3 | 14.9 | 21.0 | 16.7 | 16.5 |
| **ԿՈՏԱՅՔ** | 20.4 | 22.8 | 23.0 | 20.4 | 16.4 | 21.0 | 20.3 | 30.9 | 25.4 |
| **ՇԻՐԱԿ** | 21.6 | 20.8 | 19.0 | 23.5 | 20.0 | 18.6 | 19.6 | 21.5 | 19.3 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 12.0 | 18.3 | 15.7 | 5.5 | 12.4 | 18.0 | 18.7 | 24.8 | 12.2 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 11.0 | 13.0 | 10.1 | 9.8 | 9.0 | 6.7 | 12.2 | 16.5 | 13.2 |
| **ՏԱՎՈՒՇ** | 11.3 | 10.9 | 12.1 | 9.5 | 11.4 | 14.1 | 12.9 | 10.4 | 10.1 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf )

89. Գործազրկության տևողությունը Հայաստանում զգալիորեն բարձր է, այսպես, միջին տևողությունը կազմում է շուրջ 24.4 ամիս, տղամարդկանց համար 21.5 ամիս, իսկ կանանց համար 25.7 ամիս:

ԱՂՅՈՒՍԱԿ 19. ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԳՐԱՆՑՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐԵԼՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ

| | Ընդամենը | Կին | Տղամարդ |
|---|---|---|---|
| **Ընդամենը** | 77 004 | 53 069 | 23 935 |
| **Մինչև 3 ամիս** | 7 578 | 4 458 | 3 120 |
| **4-6 ամիս** | 8 098 | 5 326 | 2 772 |
| **7-11 ամիս** | 15 578 | 10 269 | 5 309 |
| **1-3 տարի** | 26 222 | 18 209 | 8 013 |
| **3 տարուց ավելի** | 19 528 | 14 807 | 4 721 |
| **Գործազրկության միջին տևողությունը** | **24.4** | **25.7** | **21.5** |

Աղբյուրը՝ ԱՎԾ վերլուծություն, «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին» զեկույց, էջ 89 (http://www.armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf )

ԱՂՅՈՒՍԱԿ 20. ԱՇԽԱՏՈՒԺԻ ԱՌԱՋԱՐԿԸ, 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

| | **Աշխատանք փնտրողներ** | | | ***նրանցից`գործազուրկներ*** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ընդամենը, *մարդ* | *նրանցից`* երիտասարդներ | % *ընդհանուրի նկատմամբ* | ընդամենը, *մարդ* | *նրանցից`* երիտասարդներ | % *ընդհանուրի նկատմամբ* |
| **Ընդամենը** | **88,928** | **21,962** | **24.7%** | **77,004** | **19,007** | **24.7%** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ք. Երևան** | 16,760 | 2,633 | **15.7%** | 14,426 | 2,158 | **15.0%** |
| **Արագածոտն** | 4,757 | 1,139 | **23.9%** | 3,460 | 868 | **25.1%** |
| **Արարատ** | 6,345 | 1,445 | **22.8%** | 5,637 | 1,278 | **22.7%** |
| **Արմավիր** | 5,803 | 1,510 | **26.0%** | 4,802 | 1,322 | **27.5%** |
| **Գեղարքունիք** | 7,305 | 1,836 | **25.1%** | 6,601 | 1,729 | **26.2%** |
| **Լոռի** | 11,159 | 2,899 | **26.0%** | 10,728 | 2,775 | **25.9%** |
| **Կոտայք** | 8,801 | 2,042 | **23.2%** | 7,478 | 1,784 | **23.9%** |
| **Շիրակ** | 15,392 | 4,806 | **31.2%** | 12,909 | 3,908 | **30.3%** |
| **Սյունիք** | 4,860 | 1,143 | **23.5%** | 4,625 | 1,066 | **23.0%** |
| **Վայոց ձոր** | 1,830 | 477 | **26.1%** | 1,118 | 301 | **26.9%** |
| **Տավուշ** | 5,916 | 2,032 | **34.3%** | 5,220 | 1,818 | **34.8%** |

Աղբյուրը՝ ԱՎԾ վերլուծություն, «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին» զեկույց, էջ 83 (http://www.armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf )

90. Աշխատուժի շուկայում առկա առաջարկի վերլուծությունը ցույց է տալիս, որ Երևան քաղաքում աշխատանք գտնելը բազմակի անգամ ավելի հեշտ է, քան մարզերում: Այսպես՝ ՀՀ ընդհանուր զբաղվածների շուրջ 30%-ը Երևան քաղաքում է աշխատում, սակայն աշխատանք փնտրողների միայն 18.8%-ը Երևան քաղաքից, իսկ 81.8%-ը ՀՀ մարզերից: Երիտասարդության զբաղվածության տեսանկյունից Երևան քաղաքում շատ ավելի հեշտ է աշխատանք գտնել, քան մարզերում նաև երիտասարդների համար, այսպիսով՝ աշխատանք փնտրող երիտասարդների միայն 12%-ն են Երևան քաղաքից, իսկ 88%՝ ՀՀ մարզերից:

91. 2015թ. ՀՀ աշխատանք փնտրողների շուրջ 11.3%-ը ապահովվել են աշխատանքով, ընդ որում այս թիվը Երևանի համար շուրջ կրկնակի անգամ ավել է, քան մարզերի համար: Մարզերից աշխատանքով ապահովման տեսանկյունից բարվոք է Վայոց Ձորի, Կոտայքի և Սյունիքի մարզերը:

ԱՂՅՈՒՍԱԿ 21. ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎԱԾՆԵՐ, 2015Թ.

| | **Աշխատանք փնտրողներ, մարդ** | | | **Աշխատանքով ապահովվածներ, մարդ** | | | **2015 աշխատանքով ապահովվածների % աշխատանք փնտրողների նկատմամբ** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **2013** | **2014** | **2015** | **2013** | **2014** | **2015** | |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **65,199** | **72,606** | **88,928** | **12,659** | **11,495** | **10,073** | 11.3% |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 18,545 | 16,190 | 16,760 | 5,291 | 4,104 | 3,343 | 19.9% |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 2,040 | 3,021 | 47,757 | 462 | 460 | 380 | 0.8% |
| **ԱՐԱՐԱՏ** | 3,092 | 4,961 | 6,345 | 528 | 535 | 524 | 8.2% |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 4,481 | 4,249 | 5,803 | 428 | 509 | 408 | 7.0% |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 4,962 | 6,153 | 7,305 | 796 | 663 | 596 | 8.1% |
| **ԼՈՌԻ** | 7,334 | 8,503 | 11,159 | 1,005 | 1,153 | 1,179 | 10.5% |
| **ԿՈՏԱՅՔ** | 5,890 | 7,269 | 8,801 | 1,308 | 1,280 | 1,149 | 13.1% |
| **ՇԻՐԱԿ** | 8,964 | 11,496 | 15,392 | 967 | 983 | 1,006 | 6.5% |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 4,717 | 4,696 | 4,860 | 876 | 918 | 601 | 12.3% |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 1,027 | 1,257 | 1,830 | 400 | 379 | 351 | 19.2% |
| **ՏԱՎՈՒՇ** | 4,147 | 4,811 | 5,916 | 598 | 511 | 536 | 9.1% |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 94 (http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf **)**

## 2.8. ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

92. ՀՀ ռեգիոնալ տնտեսական կառուցվածքը դժվար է գնահատել գործող ձեռնարկությունների քանակով կամ դրանց գրանցման վայրերով, քանի որ ձեռնարկության գրանցման և գործունեության վայրերը կարող են և չհամապատասխանել, միևնույն ժամանակ ավելի արտահայտիչ են ձեռնարկությունների վճարված հարկերը և ՀՀ հիմնական հարկատու հանդիսացող առաջին հարկատուների գտնվելու վայրերը:

93. Ձեռնարկությունների կողմից վճարված եկամտային հարկի վիճակագրությունը հետևյալն է՝ ՀՀ-ում գրանցված ձեռնարկությունները 2016թ. վճարել են 246,111մլն ՀՀ դրամ հարկ, այդ թվում 180,712 մլն ՀՀ դրամ, կամ 73,4% վճարել են Երևանում գրանցված հարկատուները, իսկ մարզերում գրանցվածները 26,6%: Այսպիսով՝ մեկ շնչին ընկնող եկամտահարկը մարզերում կամում է 33 975 ՀՀ դրամ, իսկ Երևան քաղաքում 168 308 ՀՀ դրամ, կամ շուրջ 4,95 անգամ ավելին: Միևնույն ժամանակ մարզերի միջև բաժանումը նույնպես համաչափ չէ, մասնավորապես Սյունիքի մարզում միջին եկամտահարկի մեծությունը շուրջ 2.29 անգամ գերազանցում է մարզային միջին ցուցանիշը:

ԱՂՅՈՒՍԱԿ 22. 2016Թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՐԶԻՆ ԲԱԺԻՆ ԸՆԿՆՈՂ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՉԱՓԸ

| | **Եկամտահարկի, ըստ տարածքների** | | **Մեկ շնչին ընկնող եկամտահարկը, ըստ տարածքների** | | **Մարզային միջին ցուցանիշի նկատմամբ** |
|---|---|---|---|---|---|
| | հազ. ՀՀ դրամ | % | ՀՀ դրամ | % | % |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | 246,111,000 | 100.0% | 82,075 | 100% | 242% |
| **ԵՐԵՎԱՆ** | 180,712,000 | 73.4% | 168,308 | 205% | 495% |
| **ՀՀ ՄԱՐԶԵՐ** | 65,399,000 | 26.6% | 33,975 | 41% | 100% |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 3,513,000 | 1.4% | 27,065 | 33% | 80% |
| **ԱՐԱՐԱՏ** | 5,522,000 | 2.2% | 21,329 | 26% | 63% |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 9,509,000 | 3.9% | 35,668 | 43% | 105% |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 4,820,000 | 2.0% | 20,794 | 25% | 61% |
| **ԼՈՌԻ** | 8,444,000 | 3.4% | 37,529 | 46% | 110% |
| **ԿՈՏԱՅՔ** | 10,434,000 | 4.2% | 41,095 | 50% | 121% |
| **ՇԻՐԱԿ** | 7,327,000 | 3.0% | 30,127 | 37% | 89% |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 10,843,000 | 4.4% | 77,783 | 95% | 229% |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 1,764,000 | 0.7% | 34,724 | 42% | 102% |
| **ՏԱՎՈՒՇ** | 3,223,000 | 1.3% | 25,681 | 31% | 76% |

Աղբյուր՝ վերլուծություն հիմնված ՀՀ Հարկային ծառայության տրամադրված տեղեկությունների վրա

94. ՀՀ տարածքում բիզնեսը (հարկերի վճարման տեսանկյունից) կենտրոնացված է, այսպես՝ 1000 խոշորագույն հարկատուները վճարում են ՀՀ ամբողջ հավաքագրված 1,065,644.2 մլն ՀՀ դրամ հարկերի շուրջ 67%-ը, միևնույն ժամանակ այս խոշոր հարկ վճարողների 82%-ը գրանցված են Երևան քաղաքում: Այսինքն՝ Երևան քաղաքում գրանցված խոշոր հարկատուները ապահովում են Պետական բյուջեի մուտքերի շուրջ 55%-ը (աղբյուր՝ վերլուծություն հիմնված ՀՀ հարկային ծառայություն http://taxservice.am/Content.aspx?itn=TIY2016 և http://taxservice.am/Content.aspx?itn=TILists):

ԱՂՅՈՒՍԱԿ 23. 2016Թ. 1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ, ԸՍՏ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՅՐԻ

| **Հարկ վճարողի** | **2016թ. վճարված** | **%** |
|---|---|---|

| գրանցման վայր | հարկեր և վճարներ | ընդհանուրի մեջ |
|---|---|---|
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 1,372,047 | 0.2% |
| **ԱՐԱՐԱՏ** | 23,726,709 | 3.3% |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 16,391,185 | 2.3% |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 2,383,488 | 0.3% |
| **ԵՐԵՎԱՆ** | 589,565,058 | 82.3% |
| **ԼՈՌԻ** | 4,774,244 | 0.7% |
| **ԿՈՏԱՅՔ** | 29,359,640 | 4.1% |
| **ՇԻՐԱԿ** | 8,460,610 | 1.2% |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 36,454,685 | 5.1% |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 2,593,780 | 0.4% |
| **ՏԱՎՈՒՇ** | 1,307,128 | 0.2% |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | **716,388,574** | **100.0%** |

Աղբյուր՝ վերլուծություն հիմնված ՀՀ Հարկային ծառայություն http://taxservice.am/Content.aspx?itn=TIY2016 և http://taxservice.am/Content.aspx?itn=TILists

95. Ինչպես երևում է աղյուսակից, հանրապետության գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը կենտրոնացված են մարզերում, սակայն շինարարության և ծառայությունների հիմնական ծավալը կենտրոնացված է Երևան քաղաքում:

ԱՂՅՈՒՍԱԿ 24. ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, 2015Թ.

| | *Արդյունաբերական արտադրանք* | *գյուղատնտեսության համախառն արտադրանք* | *շինարարություն* | *մանրածախ առևտրի շրջանառություն* | *ծառայություններ* |
|---|---|---|---|---|---|
| **Հայաստան, բացարձակ արժեք, մլն ՀՀ դրամ** | 1,342,700.1 | 1,001,200 | 481,496.9 | 1,313,998.1 | 1,144, 605.3 |
| **Արագածոտն** | 1.9% | 10.0% | 3.7% | 1.3% | 0.8% |
| **Արարատ** | 12.9% | 14.1% | 2.1% | 2.7% | 1.6% |
| **Արմավիր** | 4.3% | 17.5% | 3.5% | 3.8% | 1.7% |
| **Գեղարքունիք** | 2.2% | 19.1% | 2.7% | 1.7% | 0.8% |
| **Լոռի** | 8.9% | 7.5% | 5.6% | 3.6% | 1.5% |
| | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **9,785** | 3.23 | **4,223** | 1.40 | **8,470** | 2.81 | **5,756** | 1.91 | **6,315** | 2.10 | **4,740** | 1.57 |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 5,497 | 5.16 | 1,952 | 1.83 | 4,344 | 4.07 | 2,568 | 2.40 | 2,849 | 2.66 | 1,995 | 1.86 |
| **ՀՀ մարզեր** | 4,288 | 2.19 | 2,271 | 1.17 | 4,126 | 2.12 | 3,188 | 1.64 | 3,466 | 1.79 | 2,745 | 1.42 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 33 | 0.25 | 0 | - | 91 | 0.69 | 64 | 0.48 | 82 | 0.62 | 82 | 0.62 |
| **ԱՐԱՐԱՏ** | 561 | 2.15 | 248 | 0.95 | 511 | 1.96 | 350 | 1.34 | 467 | 1.80 | 367 | 1.41 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 391 | 1.46 | 192 | 0.72 | 335 | 1.25 | 260 | 0.97 | 341 | 1.28 | 260 | 0.97 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 490 | 2.08 | 211 | 0.90 | 491 | 2.10 | 317 | 1.35 | 345 | 1.48 | 250 | 1.07 |
| **ԼՈՌԻ** | 671 | 2.86 | 398 | 1.72 | 614 | 2.66 | 507 | 2.20 | 591 | 2.59 | 430 | 1.89 |
| **ԿՈՏԱՅՔ** | 399 | 1.56 | 245 | 0.96 | 433 | 1.70 | 354 | 1.39 | 310 | 1.22 | 263 | 1.03 |
| **ՇԻՐԱԿ** | 849 | 3.38 | 426 | 1.72 | 709 | 2.86 | 531 | 2.14 | 596 | 2.42 | 473 | 1.92 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 463 | 3.27 | 330 | 2.34 | 523 | 3.71 | 437 | 3.10 | 400 | 2.85 | 326 | 2.33 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 145 | 2.78 | 44 | 0.85 | 93 | 1.80 | 53 | 1.03 | 81 | 1.58 | 57 | 1.11 |
| **ՏԱՎՈՒՇ** | 286 | 2.23 | 177 | 1.39 | 326 | 2.55 | 315 | 2.47 | 253 | 2.00 | 237 | 1.87 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

126. Վերլուծելով ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակը, միանգամայն պարզ է դառնում, որ Երևան քաղաքը միանշանակորեն հանդիսանում է ՀՀ ԲՈՒՀ-ական կրթության կենտրոն: Այսպես՝ Երևան քաղաքում են ընդունվում ՀՀ ԲՈՒՀ-երի ամբողջ ուսանողների ավելի քան 75%-ը: Միևնույն ժամանակ, 1000 բնակչի հաշվով այս թիվը հասնում է Երևանում շուրջ 14.98% 2013թ.-ին և նվազում մինչև 14.45%՝ 2015թ.-ին: ՀՀ մարզերում այս թիվը կազմում է 1.28-1.33 1000 բնակչի հաշվով, կամ 10 անգամ ավելի ցածր, քան Երևանում:

ԱՂՅՈՒՍԱԿ 47. ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

| | **2013** | | | | **2014** | | | | **2015** | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդ. | | Անվճար, | | Ընդ. | | Անվճար, | | Ընդ. | | Անվճար, | |
| | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **19,034** | 6.29 | **2,670** | 0.88 | **17,473** | 5.79 | **2,424** | 0.80 | **18,061** | 6.00 | **2,983** | 0.99 |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 15,978 | 14.98 | 2,345 | 2.20 | 14,979 | 14.02 | 2,102 | 1.97 | 15,487 | 14.45 | 2,624 | 2.45 |
| **ՀՀ մարզեր** | 3,056 | 1.56 | 325 | 0.17 | 2,494 | 1.28 | 322 | 0.17 | 2,574 | 1.33 | 359 | 0.19 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| **ԱՐԱՐԱՏ** | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 77 | 0.29 | - | - | 64 | 0.24 | - | - | 22 | 0.08 | - | - |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 377 | 1.60 | 25 | 0.11 | 309 | 1.32 | 24 | 0.10 | 244 | 1.05 | 22 | 0.09 |
| **ԼՈՌԻ** | 621 | 2.65 | 88 | 0.37 | 581 | 2.52 | 90 | 0.39 | 608 | 2.67 | 94 | 0.41 |
| **ԿՈՏԱՅՔ** | 84 | 0.33 | - | - | 23 | 0.09 | - | - | 28 | 0.11 | - | - |
| **ՇԻՐԱԿ** | 1,063 | 4.23 | 132 | 0.53 | 685 | 2.76 | 125 | 0.50 | 880 | 3.57 | 151 | 0.61 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 375 | 2.65 | 35 | 0.25 | 394 | 2.79 | 38 | 0.27 | 383 | 2.73 | 45 | 0.32 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 60 | 1.15 | 3 | 0.06 | 47 | 0.91 | 3 | 0.06 | 50 | 0.97 | 3 | 0.06 |
| **ՏԱՎՈՒՇ** | 399 | 3.11 | 42 | 0.33 | 391 | 3.06 | 42 | 0.33 | 359 | 2.83 | 44 | 0.35 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

127. Միևնույն պատկերը նկատվում է նաև ընդհանուր ուսանողների թվաքանակը վերլուծելիս, Երևանում ուսանողների թվաքանակը 10 000 բնակչի հաշվով շուրջ 10 անգամ ավել է, քան մարզերում: Մարզերի միջև առավել աչքի են ընկնում Շիրակի, Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերը, որոնց ցուցանիշները, սակայն ավելի քան 5 անգամ զիջում են մայրաքաղաքի տվյալներին:

ԱՂՅՈՒՍԱԿ 458. ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

| | **2013/2014 ուսումնական տարում** | | | | **2014/2015 ուսումնական տարում** | | | | **2015/2016 ուսումնական տարում** | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **ընդամենը** | | **անվճար** | | **ընդամենը** | | **անվճար** | | **ընդամենը** | | **անվճար** | |
| | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով | մարդ | 1000 բն հաշվով |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | 85,922 | 28.39 | 11,310 | 3.74 | 79,623 | 26.39 | 9,460 | 3.14 | 84,591 | 28.10 | 10,017 | 3.33 |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 71,559 | 67.11 | 10,163 | 9.53 | 68,178 | 63.82 | 8,340 | 7.81 | 70,931 | 66.20 | 8,649 | 8.07 |
| **ՀՀ մարզեր** | 14,363 | 7.33 | 1,147 | 0.59 | 11,445 | 5.87 | 1,120 | 0.57 | 13,660 | 7.04 | 1,368 | 0.71 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| **ԱՐԱՐԱՏ** | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 310 | 1.16 | - | - | 249 | 0.93 | - | - | 141 | 0.53 | - | - |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 1,740 | 7.39 | 77 | 0.33 | 1,482 | 6.33 | 73 | 0.31 | 1,531 | 6.57 | 95 | 0.41 |
| **ԼՈՌԻ** | 3,622 | 15.43 | 309 | 1.32 | 3,341 | 14.48 | 290 | 1.26 | 3,522 | 15.45 | 357 | 1.57 |
| **ԿՈՏԱՅՔ** | 415 | 1.63 | - | - | 217 | 0.85 | - | - | 219 | 0.86 | - | - |
| **ՇԻՐԱԿ** | 4,752 | 18.91 | 486 | 1.93 | 2,739 | 11.03 | 488 | 1.97 | 4,535 | 18.41 | 584 | 2.37 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 1,772 | 12.51 | 123 | 0.87 | 1,720 | 12.20 | 125 | 0.89 | 1,801 | 12.85 | 149 | 1.06 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 159 | 3.05 | 13 | 0.25 | 158 | 3.06 | 13 | 0.25 | 200 | 3.89 | 12 | 0.23 |
| **ՏԱՎՈՒՇ** | 1,593 | 12.42 | 139 | 1.08 | 1,539 | 12.06 | 131 | 1.03 | 1,711 | 13.50 | 171 | 1.35 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

## 2.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

128. **Տնային տնտեսությունների** թիվը ՀՀ մարզերում կազմում է 603 445, որոնց 56.86%-ը գյուղական բնակավայրերում և 43.14%-ը՝ քաղաքային բնակավայրերում: Ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունների քանակը 19 902 է կամ ՀՀ մարզերի ընդհանուր տնային տնտեսությունների 3,30%-ը: Կիսակառույց տներում բնակվող տնային տնտեսությունների քանակը 8 809 է կամ ՀՀ մարզերի ընդհանուր տնային տնտեսությունների 1.46%-ը: Վերոնշյալ բաշխվածքը հավասարաչափ չէ ՀՀ մարզերով, մասնավորապես Լոռու մարզում ժամանակավոր կացարաններում են բնակվում տնային տնտեսությունների շուրջ 10%, իսկ Վայոց Ձորի մարզում շուրջ 0,32%:

ԱՂՅՈՒՍԱԿ 469. ՀՀ ՄԱՐԶԱՅԻՆ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, 2016Թ.

| | **տնային տնտեսություններ, մշտական** | **Ժամանակավոր կացարաններում բնակվող** | | **Կիսակառույց տներում բնակվող** | |
|---|---|---|---|---|---|
| | Տնային տնտեսություններ | Տնային տնտեսություններ | % ընդհանուրի նկատմամբ | Տնային տնտեսություններ | % ընդհանուրի նկատմամբ |
| **Ընդհամենը ՀՀ մարզեր** | 603,445 | 19,902 | 3.30% | 8,809 | 1.46% |
| **Արագածոտն** | 43,833 | 604 | 1.38% | 2,278 | 5.20% |
| **Արարատ** | 75,738 | 1,438 | 1.90% | 1,604 | 2.12% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Արմավիր** | 83,115 | 2,390 | 2.88% | 955 | 1.15% |
| **Գեղարքունիք** | 78,786 | 395 | 0.50% | 1,335 | 1.69% |
| **Լոռի** | 84,644 | 8,629 | 10.19% | 708 | 0.84% |
| **Կոտայք** | 66,150 | 1,145 | 1.73% | 841 | 1.27% |
| **Շիրակ** | 73,122 | 4,090 | 5.59% | 132 | 0.18% |
| **Սյունիք** | 39,745 | 678 | 1.71% | 235 | 0.59% |
| **Վայոց Ձոր** | 17,998 | 58 | 0.32% | 123 | 0.68% |
| **Տավուշ** | 40,314 | 475 | 1.18% | 598 | 1.48% |

Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալների համաձայն կատարված վերլուծություն

129. **Բնակարանային պայմաններ և կենսապայմաններ.** ՀՀ-ում առկա են 269 557 բնակելի տներ և 24 666 բազմաբնակարան շենքեր՝ 434 995 բնակարաններով: Սակայն բնակելի ֆոնդը հավասարաչափ չէ բաշխված հանրապետությունով: Երևան քաղաքում բնակելի ֆոնդը մեկ բնակչի հաշվով կազմում է 22.42, միևնույն ժամանակ Արագածոտնի մարզում այդ ցուցանիշը ավելի քան կրկնակի մեծ է և կազմում է 46.96 մ2 մեկ բնակչի հաշվով:

130. Հանրապետությունում 2013-2015 թթ. նկատվել է բնակֆոնդի ընդհանուր աճ, որը 80% ՀՀ մարզերի հաշվին է, որտեղ ավելացել է 1 282 993 **մ**$^2$ բնակմակերես, իսկ Երևան քաղաքում ավելացել է 20% ընդհանուր աճ, կամ 328 857 **մ**$^2$: Աճը հիմնականում տեղի է ունեցել Արմավիրի մարզում, մարզի քաղաքային բնակավայրերում (շուրջ 653 013 **մ**$^2$):

ԱՂՅՈՒՍԱԿ 5047. ՄԵԿ ԲՆԱԿՉԻ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

| | **Ընդամենը, մ$^2$** | | | **այդ թվում՝ բնակավայրերում** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | քաղաքային | | | գյուղական | | |
| | **2013** | **2014** | **2015** | **2013** | **2014** | **2015** | **2013** | **2014** | **2015** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | 30.96 | 31.44 | 31.69 | 26.20 | 26.71 | 26.94 | 39.22 | 39.68 | 39.98 |
| **Ք. ԵՐԵՎԱՆ** | 22.22 | 22.36 | 22.42 | 22.22 | 22.36 | 22.42 | | | |
| **ՀՀ մարզեր** | 35.75 | 36.45 | 36.86 | 31.22 | 32.25 | 32.78 | 39.22 | 39.68 | 39.98 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 45.46 | 46.32 | 46.96 | 42.27 | 43.14 | 44.46 | 46.41 | 47.26 | 47.68 |
| **ԱՐԱՐԱՏ** | 32.50 | 32.59 | 32.87 | 22.19 | 22.54 | 22.95 | 36.61 | 36.58 | 36.77 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 39.91 | 42.40 | 42.52 | 31.93 | 39.70 | 39.92 | 43.65 | 43.66 | 43.73 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 30.99 | 31.31 | 31.61 | 38.10 | 38.91 | 39.59 | 27.90 | 28.04 | 28.21 |
| **ԼՈՌԻ** | 39.07 | 40.22 | 40.71 | 37.66 | 38.80 | 39.27 | 41.06 | 42.26 | 42.79 |
| **ԿՈՏԱՅՔ** | 27.81 | 28.00 | 28.26 | 26.29 | 26.37 | 26.65 | 29.61 | 29.93 | 30.17 |
| **ՇԻՐԱԿ** | 40.44 | 40.85 | 41.93 | 34.98 | 34.37 | 35.56 | 48.04 | 49.89 | 50.86 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 29.72 | 30.02 | 30.27 | 22.99 | 23.17 | 23.32 | 43.50 | 44.14 | 44.67 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 44.85 | 45.11 | 45.73 | 30.09 | 30.26 | 31.00 | 52.87 | 53.19 | 53.61 |
| **ՏԱՎՈՒՇ** | 36.10 | 36.39 | 36.75 | 28.57 | 28.83 | 29.19 | 41.61 | 41.91 | 42.27 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 171 (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

131. ՀՀ գազաֆիկացման մակարդակը շատ բարձր է և գերազանցում է 90%, սակայն որոշ մարզերում, մասնավորապես Սյունիքի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերում գազաֆիկացման մակարդակը գրեթե կրկնակի կերպով զիջում է հանրապետության միջին ցուցանիշին՝ Վայոց Ձորի և Արագածոտնի մարզում փոքր և կտրված բնակավայրերի գազաֆիկացման տնտեսապես ոչ արդյունավետ լինելու պատճառով, իսկ Սյունիքի մարզում Մեղրու տարածաշրջանի դեռևս գազաֆիկացման աշխատանքների ավարտված չլինելու պատճառով: Այն դեպքում, երբ Մեղրու տարածաշրջանի գազաֆիկացման խնդիրը ներկայումս միայն ժամանակի խնդիր է, Արագածոտնի մարզի և Վայոց Ձորի մարզի փոքրաթիվ և կտրված բնակավայրերի գազաֆիկացման խնդիրը դեռևս իր լուծումը չի գտել:

132. ՀՀ մարզերում վթարային շենքերում ապրող բնակիչների թիվը 2016թ.-ի վերջի դրությամբ կազմում է 33207 մարդ կամ բնակչության 1.73%-ը, սակայն վթարային շենքերում բնակվողների թիվը քաղաքային բնակավայրերում հասնում է բնակչության ընդհանուր թվի 2.9%-ը իսկ գյուղական բնակավայրերում 0.83%-ը: Ամենավատ վիճակը Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում է, իսկ գյուղական բնակավայրերում Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 481. ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 2016Թ.

| | **Վթարային շենքերում բնակվող, այդ թվում** | | **Քաղաքային բնակավայրերում** | | **Գյուղական բնակավայրերում** | |
|---|---|---|---|---|---|---|
| | բնակիչ | % բնակչության նկատմամբ | բնակիչ | % բնակչության նկատմամբ | բնակիչ | % բնակչության նկատմամբ |
| **ՀՀ մարզեր** | 33207 | 1.73% | 24200 | 2.90% | 9007 | 0.83% |
| **Արագածոտն** | 4432 | 3.41% | 1200 | 4.12% | 3232 | 3.21% |
| **Արարատ** | 419 | 0.16% | 0 | 0.00% | 419 | 0.23% |
| **Արմավիր** | 3157 | 1.18% | 1670 | 1.97% | 1487 | 0.82% |
| **Գեղարքունիք** | 1705 | 0.74% | 1330 | 1.92% | 375 | 0.23% |
| **Լոռի** | 7606 | 3.38% | 7256 | 5.46% | 350 | 0.38% |
| **Կոտայք** | 1153 | 0.45% | 637 | 0.46% | 516 | 0.44% |
| **Շիրակ** | 8903 | 3.66% | 7700 | 5.42% | 1203 | 1.19% |
| **Սյունիք** | 1479 | 1.06% | 1128 | 1.20% | 351 | 0.77% |
| **Վայոց Ձոր** | 897 | 1.77% | 135 | 0.76% | 762 | 2.30% |
| **Տավուշ** | 3456 | 2.75% | 3144 | 5.94% | 312 | 0.43% |

Աղբյուրը՝ ՀՀ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալների վրա կատարված վերլուծություն

133. Աղքատության մակարդակը ՀՀ ում 2015թ-ին 2012թ-ի համեմատ նվազել է շուրջ 2.6%-ով, որը հիմնականում կատարվել է հանրապետության մարզերի շնորհիվ: Անկախ գրանցված արդյունքի, հանրապետության մարզերում աղքատության մակարդակը ավելի բարձր է, քան ՀՀ մայրաքաղաքում: 2015թ.-ին Երևանում այն կազմում է 25.0%., իսկ մարզերի միջին ցուցանիշը կազմում է 32.5%:

134. Աղքատության մակարդակի տեսանկյունից առկա են տարբերություններ նաև մազերի միջև, այսպես առավել աղքատ է համարվում Շիրակի մարզը, որտեղ 2012-2015թթ. Աղքատության մակարդակը նվազել է 0.7%, հանրապետության մարզերի 3.6% նվազման դեպքում: Առավել արագ է նվազել աղքատության մակարդակը Արարատի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 492. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ (%)

| | **2012** | | | **2013** | | | **2014** | | | **2015** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **աղքատ** | | **ոչ աղքատ** | **աղքատ** | | **ոչ աղքատ** | **աղքատ** | | **ոչ աղքատ** | **աղքատ** | | **ոչ աղքատ** |
| | **Ընդ.** | ***որից՝* ծայրահեղ աղքատ** | | **Ընդ.** | ***որից՝* ծայրահեղ աղքատ** | | **Ընդ.** | ***որից՝* ծայրահեղ աղքատ** | | **Ընդ.** | ***որից՝* ծայրահեղ աղքատ** | |
| ***Հանրապետական միջին*** | 32.4 | 2.8 | 67.6 | 32.0 | 2.7 | 68.0 | 30.0 | 2.3 | 70.0 | 29.8 | 2.0 | 70.2 |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 25.6 | 2.2 | 74.4 | 25.5 | 2.1 | 74.5 | 25.2 | 2.0 | 74.8 | 25.0 | 2.0 | 75.0 |
| **ՀՀ մարզեր** | 36.1 | 3.1 | 63.9 | 35.5 | 3.0 | 64.5 | 32.6 | 2.5 | 67.4 | 32.5 | 2.0 | 67.5 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 21.2 | 0.9 | 78.8 | 22.7 | 1.1 | 77.3 | 18.7 | 0.5 | 81.3 | 16.1 | 0.4 | 83.9 |
| **ԱՐԱՐԱՏ** | 34.6 | 2.1 | 65.4 | 32.4 | 1.7 | 67.6 | 28.5 | 1.6 | 71.5 | 27.3 | 1.3 | 72.7 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 34.3 | 3.4 | 65.7 | 31.3 | 3.3 | 68.7 | 29.0 | 2.9 | 71.0 | 29.6 | 2.1 | 70.4 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 35.5 | 1.4 | 64.5 | 35.8 | 2.4 | 64.2 | 32.3 | 2.1 | 67.7 | 32.1 | 1.3 | 67.9 |
| **ԼՈՌԻ** | 38.7 | 3.4 | 61.3 | 38.6 | 2.6 | 61.4 | 36.4 | 3.0 | 63.6 | 36.2 | 2.8 | 63.8 |
| **ԿՈՏԱՅՔ** | 42.5 | 5.7 | 57.5 | 42.5 | 5.1 | 57.5 | 37.2 | 2.9 | 62.8 | 35.9 | 2.3 | 64.1 |
| **ՇԻՐԱԿ** | 46.0 | 5.5 | 54 | 45.9 | 4.0 | 54.1 | 44.2 | 3.8 | 55.8 | 45.3 | 3.9 | 54.7 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 25.6 | 0.7 | 74.4 | 25.2 | 1.8 | 74.8 | 24.2 | 1.0 | 75.8 | 24.5 | 0.7 | 75.5 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 20.7 | 0.5 | 79.3 | 21.0 | 0.7 | 79.0 | 18.2 | 0.6 | 81.8 | 16.9 | 1.0 | 83.1 |
| **ՏԱՎՈՒՇ** | 27.5 | 1.9 | 72.5 | 27.7 | 2.5 | 72.3 | 30.6 | 2.7 | 69.4 | 35.3 | 2.0 | 64.7 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 215 (http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf )

135. **Սոցիալական պաշտպանություն և աջակցություն.** Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների քանակը 2011-2015թթ. ընթացքում աճել է շուրջ 27%-ով, այդ աճի հիմնական աղբյուրները եղել են ՀՀ մարզերը, որտեղ բնակվում են նպաստի ցանկում հավելյալ ներգրավված թվով 22 374 ընտանիքներից միայն  թվով19 183 ընտանիք: Հիմնականում աճը տեղի է ունեցել Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում: Տոկոսային առումով ամենամեծ աճը արձանագրվել է Տավուշի և Կոտայքի մարզերում՝ 34% 2011թ.-ի համեմատ:

136. Եռամսյակային հրատապ օգնություն ստացող ընտանիքների քանակը՝ հակառակը, նվազել է ամբողջ հանրապետությունով շուրջ 15%-ով: Այս նվազումը նույնպես տեղի է ունեցել հիմնականում ՀՀ մարզերի հաշվին, որտեղ բնակվում են ցանկից դուրս եկած թվով 1849 ընտանիքից 1403 ընտանիքը, կամ նվազած թվի շուրջ 76%-ը: Ամենաարագ նվազումը տեղի է ունեցել Շիրակի մարզում՝ 28%, իսկ միակ մարզը, որտեղ եղել է աճ՝ դա Լոռու մարզն է:

ԱՂՅՈՒՍԱԿ 503. ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

| | Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների քանակը | | | | | Եռամսյակային հրատապ օգնություն ստացող ընտանիքների քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **2011** | **2012** | **2013** | **2014** | **2015** | **2011** | **2012** | **2013** | **2014** | **2015** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **83,997** | **100,879** | **103,130** | **105,176** | **106,371** | **12,361** | **10,533** | **9,666** | **9,859** | **10,512** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 13,893 | 16,331 | 16,807 | 17,025 | 17,084 | 2,058 | 1,560 | 1,067 | 1,403 | 1,612 |
| **ՀՀ մարզեր** | 70,104 | 84,548 | 86,323 | 88,151 | 89,287 | 10,303 | 8,973 | 8,599 | 8,456 | 8,900 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 4,298 | 5,037 | 5,263 | 5,691 | 5,730 | 629 | 547 | 532 | 568 | 527 |
| **ԱՐԱՐԱՏ** | 6,506 | 7,981 | 8,015 | 8,205 | 8,312 | 1,048 | 849 | 859 | 871 | 847 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 4,510 | 5,343 | 5,543 | 5,759 | 5,872 | 710 | 630 | 449 | 597 | 603 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 10,618 | 12,912 | 13,179 | 13,242 | 13,559 | 1,752 | 1,570 | 1,526 | 1,297 | 1,417 |
| **ԼՈՌԻ** | 15,933 | 19,018 | 19,471 | 19,869 | 20,319 | 1,891 | 1,815 | 1,811 | 1,760 | 2,045 |
| **ԿՈՏԱՅՔ** | 6,964 | 8,529 | 8,870 | 9,154 | 9,318 | 1,021 | 932 | 803 | 872 | 965 |
| **ՇԻՐԱԿ** | 12,696 | 15,091 | 15,150 | 15,409 | 15,258 | 1,965 | 1,588 | 1,504 | 1,445 | 1,406 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 2,914 | 3,664 | 3,739 | 3,645 | 3,641 | 469 | 326 | 392 | 336 | 369 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 1,725 | 2,074 | 2,033 | 2,071 | 2,012 | 250 | 183 | 224 | 196 | 205 |
| **ՏԱՎՈՒՇ** | 3,940 | 4,899 | 5,060 | 5,106 | 5,266 | 568 | 533 | 499 | 514 | 516 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

137. Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների բաշխվածքը, ըստ բնակչության քանակի ցույց է տալիս, որ առավել մեծ է նպաստառու ընտանիքների թիվը Լոռու և Շիրակի մարզերում և նվազագույնն է Երևան քաղաքում: Այսպիսով՝ 2011թ.-ին Երևան քաղաքում նպաստառու են յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով 13.09 ընտանիք., իսկ 2015թ.-ին արդեն 15.91, միևնույն ժամանակ ՀՀ մարզերում միջին գործակիցը կազմել է համապատասխանաբար 35.76՝ 2011թ.-ին և 46.39՝ 2015թ.-ին:

ԱՂՅՈՒՍԱԿ 514. ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ 1000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ

| | Ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների քանակը | | | | | Եռամսյակային հրատապ օգնություն ստացող ընտանիքների քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **2011** | **2012** | **2013** | **2014** | **2015** | **2011** | **2012** | **2013** | **2014** | **2015** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **27.80** | **33.33** | **34.18** | **34.94** | **35.47** | **4.09** | **3.48** | **3.20** | **3.27** | **3.51** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 13.09 | 15.32 | 15.73 | 15.89 | 15.91 | 1.94 | 1.46 | 1.00 | 1.31 | 1.50 |
| **ՀՀ մարզեր** | 35.76 | 43.12 | 44.30 | 45.46 | 46.39 | 5.26 | 4.58 | 4.41 | 4.36 | 4.62 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 32.32 | 37.87 | 39.78 | 43.34 | 44.14 | 4.73 | 4.11 | 4.02 | 4.33 | 4.06 |
| **ԱՐԱՐԱՏ** | 24.96 | 30.53 | 30.73 | 31.55 | 32.11 | 4.02 | 3.25 | 3.29 | 3.35 | 3.27 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 16.94 | 20.00 | 20.74 | 21.57 | 22.03 | 2.67 | 2.36 | 1.68 | 2.24 | 2.26 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 45.11 | 54.80 | 56.30 | 56.83 | 58.49 | 7.44 | 6.66 | 6.52 | 5.57 | 6.11 |
| **ԼՈՌԻ** | 67.63 | 81.03 | 84.36 | 87.14 | 90.31 | 8.03 | 7.73 | 7.85 | 7.72 | 9.09 |
| **ԿՈՏԱՅՔ** | 27.35 | 33.41 | 34.78 | 35.90 | 36.70 | 4.01 | 3.65 | 3.15 | 3.42 | 3.80 |
| **ՇԻՐԱԿ** | 50.36 | 60.05 | 61.01 | 62.54 | 62.74 | 7.79 | 6.32 | 6.06 | 5.86 | 5.78 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 20.55 | 25.86 | 26.52 | 26.00 | 26.12 | 3.31 | 2.30 | 2.78 | 2.40 | 2.65 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 32.92 | 39.73 | 39.32 | 40.29 | 39.61 | 4.77 | 3.51 | 4.33 | 3.81 | 4.04 |
| **ՏԱՎՈՒՇ** | 30.64 | 38.18 | 39.66 | 40.30 | 41.96 | 4.42 | 4.15 | 3.91 | 4.06 | 4.11 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf )

138. ՀՀ-ում կենսաթոշակառուների թիվը 2015թ.-ին կազմել է 465 802, իսկ միջին կենսաթոշակի մեծությունը կազմել է 40 441 ՀՀ դրամ, 1000 բնակչին ընկնող կենսաթոշակառուների թիվը կազմում է 155,

որը սակայն հաստատուն չէ հանրապետության ողջ տարածքով: Եթե Երևան քաղաքի և Հանրապետության միջին ցուցանիշը համընկնում է, ապա ՀՀ մարզերի միջև առկա են մեծ տարբերություններ:Այսպես՝ Լոռու, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում 1000 բնակչին ընկնող կենսաթոշակառուների թիվը 2015թ. կազմում էր համապատասխանաբար 202, 187 և 173 մարդ: Միևնույն ժամանակ Արմավիրի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում այս թիվը 2015թ.-ին կազմում էր համապատասխանաբար 127, 136 և 140 մարդ:

139. Կենսաթոշակառուների թիվը ՀՀ տարածքում 2012-2015թթ. նվազել է շուրջ 8.32%, հիմնականում պայմանավորված ՀՀ մարզերի կենսաթոշակառուների նվազմամբ, մասնավորապես՝ Շիրակի և Լոռու մարզերում, համապատասխանաբար 12.43% և 10.29%, կամ համապատասխանաբար 5844 և 5204 կենսաթոշակառու: Առավել արագ նվազման տեմպեր են արձանագրվել նաև Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում՝ համապատասխանաբար 12.22% և 11.17%: Երևան քաղաքի կենսաթոշակառուների թիվը նվազել է 4.57%-ով:

ԱՂՅՈՒՍԱԿ 525. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ

| | Կենսաթոշակառուների թվաքանակը, տարեվերջ | | | | Կենսաթոշակառուների թիվը 1000 բնակչի հաշվով | | | | կենսաթոշակի միջին չափը, ՀՀ դրամ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
| ՀԱՅԱՍՏԱՆ | 508,071 | 515,340 | 463,145 | 465,802 | 168 | 171 | 154 | 155 | 29,696 | 29,122 | 35,813 | 40,441 |
| Ք. ԵՐԵՎԱՆ | 176,782 | 179,759 | 166,920 | 168,699 | 166 | 168 | 156 | 157 | 31,936 | 31,460 | 37,865 | 42,761 |
| ՀՀ մարզեր | 331,289 | 335,581 | 296,225 | 297,103 | 169 | 171 | 152 | 153 | 28,501 | 27,870 | 34,657 | 39,124 |
| ԱՐԱԳԱԾՈՏՆ | 20,953 | 21,249 | 18,552 | 18,613 | 158 | 161 | 141 | 143 | 28,011 | 27,337 | 34,301 | 38,760 |
| ԱՐԱՐԱՏ | 40,875 | 41,656 | 36,252 | 36,726 | 156 | 160 | 139 | 142 | 27,179 | 26,590 | 33,567 | 37,827 |
| ԱՐՄԱՎԻՐ | 37,716 | 38,547 | 33,273 | 33,715 | 141 | 144 | 125 | 127 | 27,359 | 26,777 | 33,823 | 38,158 |
| ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ | 35,862 | 36,267 | 31,477 | 31,478 | 152 | 155 | 135 | 136 | 27,466 | 26,811 | 33,812 | 38,272 |
| ԼՈՌԻ | 50,588 | 51,130 | 45,395 | 45,384 | 216 | 222 | 199 | 202 | 28,704 | 28,032 | 34,665 | 39,079 |
| ԿՈՏԱՅՔ | 38,292 | 39,228 | 35,117 | 35,550 | 150 | 154 | 138 | 140 | 28,181 | 27,632 | 34,457 | 39,011 |
| ՇԻՐԱԿ | 47,011 | 47,071 | 41,300 | 41,167 | 187 | 190 | 168 | 169 | 28,338 | 27,728 | 34,544 | 38,999 |
| ՍՅՈՒՆԻՔ | 25,373 | 25,618 | 23,385 | 23,341 | 179 | 182 | 167 | 167 | 32,158 | 31,484 | 37,777 | 42,712 |
| ՎԱՅՈՑ ՁՈՐ | 10,306 | 10,371 | 9,497 | 9,476 | 197 | 201 | 185 | 187 | 29,742 | 29,209 | 35,473 | 40,026 |
| ՏԱՎՈՒՇ | 24,313 | 24,444 | 21,977 | 21,653 | 190 | 192 | 174 | 173 | 30,493 | 29,767 | 36,064 | 40,637 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ.,(http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

140. Կենսաթոշակների մեծությունը 2012-2015թթ. աճել է շուրջ 36%-ով, որը հարաբերականորեն հավասարաչափ է բաշխվել ՀՀ ողջ տարածքով, նվազագույն աճը կազմել է Սյունիքի մարզում 32.82%, իսկ առավելագույնը կազմել է Արմավիրի մարզում 39.47%:

ԱՂՅՈՒՍԱԿ 56. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ Տ/ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ, ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ (ԴՐԱՄ)

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|
| ***Հանրապետական միջին*** | **32,585** | **34,832** | **36,787** | **40,770** | **42,867** |
| **ք. Երևան** | 42,189 | 41,041 | 42,736 | 53,922 | 56,684 |
| **ՀՀ մարզեր** | 27,387 | 31,455 | 33,526 | 33,503 | 35,160 |
| **Արագածոտն** | 27,460 | 34 298 | 31,540 | 31,004 | 34,821 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Արարատ** | 29,330 | 35,807 | 37,139 | 41,342 | 43,397 |
| **Արմավիր** | 25,173 | 30,396 | 35,118 | 31,094 | 32,472 |
| **Գեղարքունիք** | 27,039 | 26,182 | 31,180 | 29,197 | 31,688 |
| **Լոռի** | 27,436 | 32,687 | 34,359 | 36,245 | 38,256 |
| **Կոտայք** | 22,689 | 25,844 | 32,279 | 37,360 | 38,695 |
| **Շիրակ** | 29,596 | 34,386 | 32,775 | 33,824 | 32,091 |
| **Սյունիք** | 31,531 | 34,900 | 35,274 | 34,721 | 36,008 |
| **Վայոց ձոր** | 33,627 | 41,970 | 40,992 | 43,133 | 45,766 |
| **Տավուշ** | 32,022 | 33,648 | 31,713 | 28,247 | 30,374 |
| ***Բնակավայրի տեսակը*** | | | | | |
| **Քաղաք** | 35,041 | 36,489 | 38,541 | 44,708 | 47,161 |
| **Գյուղ** | 28,059 | 32,094 | 33,747 | 33,885 | 35,786 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., (http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf )

141. Երևան քաղաքի տնային տնտեսությունները մեկ շնչի հաշվով 2015 թ.-ին միջին հաշվով ծախսում էին շուրջ 32% ավել, քան հանրապետության միջին ցուցանիշը, կամ 1.6 անգամ ավել քան միջին մարզային ցուցանիշը: Մարզերի միջև ամենամեծ ծախսումները իրականացվում էին Վայոց Ձորի և Արարատի մարզերում, որոնք մոտ են Հանրապետության միջին ցուցանիշներին: 2015թ.-ին նվազագույն ծախսումներ են իրականացվել Տավուշի և Գեղարքունիքի մարզերում, որտեղ տնային տնտեսությունները մեկ անդամի հաշվով ծախսել են շուրջ 1.85 անգամ պակաս քան Երևան քաղաքում:

142. Տնային տնտեսությունների ծախսումները 2011-2015թթ. միջինում ավելացել են շուրջ 32%-ով, Երևան քաղաքում այս ավելացումը կազմել է շուրջ 34%: Ավելացման ամենամեծ տեմպերը արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 71% և Արարատի մարզում՝ 48%: Տնային տնտեսությունների ծախսումների նվազում է արձանագրվել Տավուշի մարզում -5%: Գյուղական բնակավայրերում ծախսումները շուրջ 31%-ով ավելի քիչ են, քան քաղաքային բնակավայրերում:

143. **Մարզա-մշակութային մատչելիություն.** ՀՀ ում գործում են 28 թատրոն, որոնց հիմնական մասը կենտրոնացված է Երևանում: Այսպես՝ թատրոնների քանակով 100 000 բնակչի հաշվով մազերում կազմում է ավելի քան կրկնակի ավելի պակաս, քան Երևանում: Թատրոնների թիվը 2011-2015թթ.ընկած ժամանակահատվածում չի փոփոխվել:

ԱՂՅՈՒՍԱԿ 537. ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀՀ-ՈՒՄ

| | ***Թատրոնների քանակը*** | | | | | ***Թատրոնների քանակը 100 000 բնակչի հաշվով*** | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **2011** | **2012** | **2013** | **2014** | **2015** | **2011** | **2012** | **2013** | **2014** | **2015** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **28** | **28** | **28** | **28** | **28** | **0.93** | **0.93** | **0.93** | **0.93** | **0.93** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 18 | 18 | 18 | 18 | 18 | 1.70 | 1.69 | 1.68 | 1.68 | 1.68 |
| **ՀՀ ՄԱՐԶԵՐ** | 10 | 10 | 10 | 10 | 10 | **0.72** | **0.72** | **0.72** | **0.73** | **0.73** |
| **ԱՐԱՐԱՏ** | 1 | 1 | 1 | 1 | 1 | 0.75 | 0.75 | 0.76 | 0.76 | 0.77 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 1 | 1 | 1 | 1 | 1 | 0.38 | 0.38 | 0.38 | 0.38 | 0.39 |
| **ԼՈՌԻ** | 3 | 3 | 3 | 3 | 3 | 1.13 | 1.12 | 1.12 | 1.12 | 1.13 |
| **ԿՈՏԱՅՔ** | 1 | 1 | 1 | 1 | 1 | 0.42 | 0.42 | 0.43 | 0.43 | 0.43 |
| **ՇԻՐԱԿ** | 2 | 2 | 2 | 2 | 2 | 0.85 | 0.85 | 0.87 | 0.88 | 0.89 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 2 | 2 | 2 | 2 | 2 | 0.79 | 0.78 | 0.78 | 0.78 | 0.79 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf )

144. Մարզային թատրոնների այցելությունները գրեթե կրկնակի ավելի քիչ են, քան Երևանի թատրոնների այցելությունները, իսկ 100 000 բնակչի հաշվով հանդիսատեսի քանակը շուրջ 4 անգամ ավելի քիչ է մարզերում, քան Երևանում: Երևանյան և մարզային թատրոնների այցելությունների քանակը 2011-2015 թթ. ավելացել է շուրջ 10%-ով, ընդ որում ավելացման հիմնական մասնաբաժինը Երևան քաղաքի թատրոնների հանդիսատեսի ավելացումն է:

ԱՂՅՈՒՍԱԿ 548. ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՔԱՆԱԿԸ ՀՀ-ՈՒՄ

| | Հանդիսատեսների թվաքանակը, հազ.մարդ | | | | | Հանդիսատեսների թվաքանակը, հազ.մարդ / 100 000 բնակչի հաշվով | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **458.9** | **440.5** | **444.4** | **480.3** | **512.7** | **15.19** | **14.55** | **14.73** | **15.95** | **17.10** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 359.3 | 330.7 | 355.3 | 382.2 | 400.8 | 33.86 | 31.01 | 33.26 | 35.67 | 37.33 |
| **ՀՀ ՄԱՐԶԵՐ** | 99.6 | 109.8 | 89.1 | 98.1 | 111.9 | 7.19 | 7.92 | 6.46 | 7.14 | 8.19 |
| **ԱՐԱՐԱՏ** | 14.5 | 15 | 16.2 | 15.3 | 16.9 | 10.90 | 11.28 | 12.24 | 11.65 | 13.02 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 2.4 | 3.2 | 1.6 | 2.1 | 2.2 | 0.92 | 1.22 | 0.61 | 0.81 | 0.85 |
| **ԼՈՌԻ** | 26.7 | 31.1 | 24.5 | 33.1 | 28.6 | 10.03 | 11.64 | 9.17 | 12.40 | 10.73 |
| **ԿՈՏԱՅՔ** | 0.3 | - | - | - | 0.3 | 0.13 | - | - | - | 0.13 |
| **ՇԻՐԱԿ** | 34.3 | 39.2 | 26.6 | 28.5 | 33.3 | 14.56 | 16.70 | 11.53 | 12.50 | 14.80 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 21.4 | 21.3 | 20.2 | 19.1 | 30.6 | 8.41 | 8.34 | 7.92 | 7.49 | 12.05 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf )

145. Ինչպես երևում է վերլուծությունից, ՀՀ-ում հիմնական թանգարանները կենտրոնացված են Երևան քաղաքում, որտեղ և տեղի է ունենում թանգարանների այցելությունների շուրջ 90%-ը: Գրադարանների տեսանկյունից Երևան քաղաքը զիջում է մարզերին, Երևանում են գտնվում ՀՀ գրադարանների շուրջ 4%-ը, իսկ մարզերում 96%-ը: Ընթերցողների շուրջ 75%-ը գտնվում է մարզերում, որտեղ և ընթերցվում է գրականության շուրջ 68%-ը:

ԱՂՅՈՒՍԱԿ 559. ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ և ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

| | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|
| | **Թանգարանների քանակը, հատ** | | | |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **99** | **104** | **105** | **106** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 61 | 65 | 66 | 68 |
| **ՀՀ ՄԱՐԶԵՐ** | 38 | 39 | 39 | 38 |
| | **Թանգարանների այցելուներ, հազ մարդ** | | | |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | 1,949.4 | 2,127.4 | 2,091.4 | 2,261.4 |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 1,776.4 | 1,942.9 | 1,882.6 | 2, 043.7 |
| **ՀՀ ՄԱՐԶԵՐ** | 173.0 | 184.5 | 208.8 | 217.7 |
| | **Գրադարանների քանակ, հատ** | | | |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | 913 | 900 | 868 | 830 |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 34 | 35 | 35 | 34 |
| **ՀՀ ՄԱՐԶԵՐ** | 879 | 865 | 833 | 796 |
| | **Ընթերցողների քանակ, մարդ** | | | |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | 574,687 | 544,977 | 515,191 | 507,000 |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 145,697 | 137,916 | 131,921 | 127,488 |
| **ՀՀ ՄԱՐԶԵՐ** | 428,990 | 407,061 | 383,270 | 379,512 |
| | **Սպասարկած գրականության քանակը, հազ. օրինակ** | | | |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | 11,037 | 10,602 | 9,903 | 9,713.4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 3,403 | 3,426 | 3,278 | 3,136.9 |
| **ՀՀ ՄԱՐԶԵՐ** | 7,634 | 7,176 | 6,625 | 6,576.5 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf )

146. 2015 թ-ի. դրությամբ ՀՀ-ում գործում է 175 մարզական կազմակերպություն, որոնցից 60-ը կամ 34.3%-ը գործում է Երևանում, մնացած 65.7%-ը ՀՀ մարզերում: Մարզական խմբերի քանակությամբ Երևանում գործում ՀՀ տարածքում առկա խմբերի շուրջ 41.3%-ը: Որպես և գրեթե բոլոր հիմնական ոլորտներում, սպորտը նույնպես կենտրոնացված է ՀՀ մայրաքաղաք Երևանում: Միևնույն ժամանակ գյուղական վայրերում սպորտի հասանելիությունը գտնվում է ծայրահեղ վատ վիճակում, մեկ բնակչի հաշվով լինելով շուրջ 10 անգամ ավելի քիչ՝ քան քաղաքային վայրերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 6056. ՍՊՈՐՏԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

| | **2013** | | | **2014** | | | **2015** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Հայաստան** | Երևան | ՀՀ մարզեր | **Հայաստան** | Երևան | ՀՀ մարզեր | **Հայաստան** | Երևան | ՀՀ մարզեր |
| **Մարզական կազմակերպություններ** | **169** | 55 | 114 | **170** | 55 | 115 | **175** | 60 | 115 |
| **Խմբերի քանակը** | | | | | | | | | |
| **Օլիմպիական մարզաձև** | **3,074** | 1,255 | 1,819 | **2,987** | 1,185 | 1,802 | **2,989** | 1,235 | 1,754 |
| **այդ թվում գյուղական վայրերում** | **260** | 0 | 260 | **261** | 0 | 261 | **267** | 0 | 267 |
| **Ոչ օլիմպիական մարզաձև** | **560** | 227 | 333 | **583** | 211 | 372 | **645** | 304 | 341 |
| **այդ թվում գյուղական վայրերում** | **43** | 0 | 43 | **45** | 0 | 45 | **42** | 0 | 42 |
| **Մարզիկների թվաքանակը, մարդ** | **42,897** | 17,399 | 25,498 | **40,504** | 15,850 | 24,654 | **41,090** | 17,946 | 23,144 |
| **այդ թվում կանայք** | **6,256** | 3,037 | 3,219 | **6,333** | 3,061 | 3,272 | **6,425** | 3,423 | 3,002 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf )

147. **Առողջապահական ծառայությունների մատչելիություն.** ՀՀ-ում առողջապահական ծառայությունների մատուցումը կենտրոնացված է մայրաքաղաք Երևանում, այստեղ 10.000 բնակչի հաշվով բժիշկների թիվը 2015թ-ին կազմել է 84.6, որը ավելի քան կրկնակի անգամ գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը և ավելի քան 4 անգամ ՀՀ մարզերի ցուցանիշը: Միջին բուժանձնակազմի տեսանկյունից իրավիճակը ավելի բարվոք է, այստեղ տարբերությունը Երևանի և մարզերի միջև շուրջ կրկնակի է: Մահճակալների քանակով մայրաքաղաքում են գտնվում մահճակալների շուրջ 63%-ը, և այս ցուցանիշի մայրաքաղաքի 10. 000 բնակչի հաշվով ՀՀ մարզերի ցուցանիշը գերազանցում է շուրջ 3 անգամ:

ԱՂՅՈՒՍԱԿ 571. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| | **Բժիշկների թվաքանակը, մարդ** | | | | **Միջին բուժանձնակազմ** | | | | **Հիվանդանոցային մահճակալների քանակը, հատ** | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը** | | **10 000 բնակչի հաշվով** | | **Ընդամենը** | | **10 000 բնակչի հաշվով** | | **Ընդամենը** | | **10 000 բնակչի հաշվով** | |
| | **2014** | **2015** | **2014** | **2015** | **2014** | **2015** | **2014** | **2015** | **2014** | **2015** | **2014** | **2015** |
| ***ՀԱՅԱՍՏԱՆ** | **12,896** | **13 117** | **42.8** | **43.7** | **18,053** | **17 632** | **60** | **58.8** | **12,514** | **12,532** | **42** | **42** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 8,917 | 9,084 | 83.2 | 84.6 | 8,778 | 8,577 | 82 | 80 | 7,835 | 7,880 | 73 | 73 |
| **ՀՀ ՄԱՐԶԵՐ** | 3,562 | 3,650 | 18.4 | 19.0 | 8,994 | 8,819 | 46.4 | 45.8 | 4,679 | 4,652 | 24.1 | 24.2 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 221 | 232 | 16.8 | 17.9 | 652 | 620 | 49.7 | 47.8 | 210 | 210 | 16 | 16.2 |
| **ԱՐԱՐԱՏ** | 468 | 460 | 18 | 17.8 | 1,032 | 1,018 | 40 | 39 | 538 | 538 | 20.7 | 20.8 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 387 | 385 | 14.5 | 14.4 | 1,044 | 1,029 | 39 | 39 | 377 | 355 | 14.1 | 13.3 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 326 | 321 | 14 | 13.8 | 957 | 951 | 41.1 | 41 | 750 | 750 | 32.2 | 32.4 |
| **ԼՈՌԻ** | 498 | 509 | 21.8 | 22.6 | 1,178 | 1,157 | 52 | 51 | 486 | 486 | 21.3 | 21.6 |
| **ԿՈՏԱՅՔ** | 500 | 525 | 19.6 | 20.7 | 1,083 | 1,090 | 43 | 43 | 658 | 688 | 25.8 | 27.1 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ՇԻՐԱԿ** | 545 | 570 | 22.1 | 23.4 | 1,429 | 1,395 | 58 | 57 | 878 | 878 | 35.6 | 36.1 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 281 | 288 | 20 | 20.7 | 787 | 780 | 56.1 | 56 | 429 | 409 | 30.6 | 29.3 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 110 | 114 | 21.4 | 22.4 | 258 | 238 | 50.2 | 46.9 | 80 | 80 | 15.6 | 15.7 |
| **ՏԱՎՈՒՇ** | 226 | 246 | 17.8 | 19.6 | 574 | 541 | 45.3 | 43.1 | 273 | 258 | 21.5 | 20.6 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf )

*Հայաստանում այդ թվում ՀՀ առողջապահության նախարարության համակարգ:

148. Ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկների տեսանկյունից, ՀՀ մարզերում, 10 000 բնակչի հաշվով ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկների թիվը ավելին է՝ քան Երևանում, սակայն այցելությունների տեսանկյունից Երևան քաղաքում 10 000 բնակչի հաշվով այցելուների թիվը ավելին է, քան ՀՀ միջին ցուցանիշը՝ շուրջ՝ 21 % -ով:

ԱՂՅՈՒՍԱԿ 582. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| | **Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների** | | | | **Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում** | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ընդհամենը, հատ | | 10 000 բնակչի հաշվով | | ընդհամենը, այցելու | | 10 000 բնակչի հաշվով | |
| | **2014** | **2015** | **2014** | **2015** | **2014** | **2015** | **2014** | **2015** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **509** | **504** | 1.69 | 1.68 | **11,676.5** | **12,002.8** | 38.78 | 40.03 |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 150 | 145 | 1.40 | 1.35 | 5,076.4 | 5,179.0 | 47.38 | 48.24 |
| **ՀՀ ՄԱՐԶԵՐ** | 359 | 359 | 1.85 | 1.87 | 6600.1 | 6823.8 | 34.04 | 35.45 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 24 | 24 | 1.83 | 1.85 | 334.8 | 363.3 | 25.50 | 27.99 |
| **ԱՐԱՐԱՏ** | 59 | 59 | 2.27 | 2.28 | 878.1 | 901.6 | 33.76 | 34.82 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 61 | 61 | 2.28 | 2.29 | 888.6 | 948.2 | 33.28 | 35.57 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 40 | 40 | 1.72 | 1.73 | 752.1 | 792.0 | 32.28 | 34.17 |
| **ԼՈՌԻ** | 45 | 45 | 1.97 | 2.00 | 863.4 | 890.4 | 37.87 | 39.57 |
| **ԿՈՏԱՅՔ** | 45 | 46 | 1.76 | 1.81 | 854.0 | 890.3 | 33.49 | 35.06 |
| **ՇԻՐԱԿ** | 33 | 32 | 1.34 | 1.32 | 843.6 | 870.6 | 34.24 | 35.80 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 18 | 18 | 1.28 | 1.29 | 634.0 | 591.5 | 45.22 | 42.43 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 8 | 8 | 1.56 | 1.57 | 182.7 | 188.9 | 35.54 | 37.19 |
| **ՏԱՎՈՒՇ** | 26 | 26 | 2.05 | 2.07 | 368.8 | 387.0 | 29.11 | 30.84 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf )

## 2.11. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

149. **ՀՀ օդային ավազանի աղտոտման** աստիճանը շատ տարբեր է ՀՀ մարզից մարզ: Օդային ավազանը ամենաաղտոտվածն է Երևան քաղաքում, որտեղ 1 քառ. կմ հաշվով օդի աղտոտվածությունը գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը շուրջ 17 անգամ: Մթնոլորտային ավազանի աղտոտման աստիճանը բարձր է նաև Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզերում, որտեղ այն գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը համապատասխանաբար 2.7, 2.6 և 1.62 անգամ:

150. Մեկ բնակչի հաշվով մթնոլորտային տեսակարար արտանետումները 2015թ.-ին ամենաբարձրն են գրանցվել Լոռու և Տավուշի մարզերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 593. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ

| | **1 բնակչի հաշվով, կգ** | | | **1 քառ. կմ-ի հաշվով, կգ [1]** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2013** | **2014** | **2015** | **2013** | **2014** | **2015** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **39.6** | **42.6** | **42.9** | **4204.6** | **4510.5** | **4528.7** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 13.6 | 16.2 | 16.1 | 65195.1 | 77680.4 | 77301.8 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 4.2 | 7.6 | 4.5 | 200.5 | 362.5 | 212.7 |
| **ԱՐԱՐԱՏ** | 7.2 | 15.3 | 11.4 | 895.3 | 1908.5 | 1414.4 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 10.9 | 12.2 | 12.7 | 2338.1 | 2631.9 | 2728.3 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 10.8 | 25.3 | 12.5 | 625.5 | 1448.6 | 713.2 |
| **ԼՈՌԻ** | 183.4 | 191.5 | 206.9 | 11232.5 | 11564.2 | 12336.2 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ԿՈՏԱՅՔ** | 86.0 | 86.0 | 96.9 | 10514.1 | 10508.1 | 11821.5 |
| **ՇԻՐԱԿ** | 17.5 | 7.3 | 5.1 | 1632.3 | 671.1 | 466.9 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 57.2 | 63.7 | 63.5 | 1793.7 | 1988.3 | 1970.1 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 61.3 | 8.2 | 6.3 | 1379.8 | 182.9 | 140.5 |
| **ՏԱՎՈՒՇ** | 133.1 | 156.5 | 157.5 | 6299.5 | 7355.1 | 7346.3 |

1 Առանց Սևանա լճի հայելու մակերեսի:
Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 161 (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf )

151. **Ջրային ավազանի աղտոտում.** Ջրային ավազանի աղտոտման մակարդակը բավականին տարբերվում է մարզից մարզ: Այսպես, Արարատի և Արմավիրի մարզերում հեռացված կեղտաջրերի հիմնական մասը մաքրվում է մինչև չափորոշիչային մաքուր մակարդակի, իսկ Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում բոլոր հեռացված կեղտաջրերը կամ չեն մաքրվում ընդհանրապես կամ ենթարկվում են միայն մեխանիկական մաքրման:

152. Դիտարկելով հեռացվող կեղտաջրերի մաքրման դինամիկան, պարզ է դառնում, որ չափորոշիչային մաքուր գնահատված հեռացվող ջրի ծավալները նվազել են 2013 թ.-ին 85%-ով ընդհանուր հեռացված ջրի ծավալից՝ հասնելով 2015թ.ին՝ 69%-ի: Վերոնշյալը բացատրվում է հիմնականում առկա մաքրման կայանների մաշվածության բարձր աստիճանով, որի պատճառով այդ կայանները գործում են մասնակիորեն, կամ չեն գործում և կեղտաջրերը առանց մաքրման հեռացվում են:

153. Կեղտաջրերի մաքրման տեսանկյունից վատագույն վիճակը Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Շիրակի մարզերում է, որտեղ ավելի քան 73% կեղտաջրերը հեռացվում են ընդհանրապես առանց մաքրման:

ԱՂՅՈՒՍԱԿ 604. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄ

| | Ընդամենը մլն.մ³ | այդ թվում | | | Ընդամենը մլն.մ³ | այդ թվում | | | Ընդամենը մլն.մ³ | այդ թվում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առանց մաքրման | չափորոշիչային մաքուր | ոչ բավարար մաքրված | | առանց մաքրման | չափորոշիչային մաքուր | ոչ բավարար մաքրված | | առանց մաքրման | չափորոշիչային մաքուր | ոչ բավարար մաքրված |
| | **2013** | | | | **2014** | | | | **2015** | | | |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **937.7** | **65.0** | **798.9** | **73.8** | **846.5** | **106.4** | **611.3** | **128.8** | **810.8** | **132.2** | **559.8** | **118.7** |
| **Ք.ԵՐԵՎԱՆ** | 57.2 | 5.2 | 24.0 | 28.0 | 98.8 | 14.0 | 13.4 | 71.4 | 99.6 | 11.8 | 18.9 | 68.9 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ** | 6.5 | 3.7 | 2.8 | 0.0 | 1.4 | 0.9 | 0.5 | 0.0 | 1.2 | 1.2 | 0.0 | 0.0 |
| **ԱՐԱՐԱՏ** | 503.9 | 27.6 | 476.1 | 0.2 | 488.7 | 46.1 | 434.9 | 7.7 | 513.1 | 76.3 | 436.8 | 0.0 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | 273.6 | 5.7 | 255.5 | 12.4 | 134.4 | 1.6 | 132.5 | 0.3 | 98.1 | 3.4 | 94.4 | 0.3 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ** | 7.9 | 0.5 | 5.7 | 1.7 | 4.2 | 1.4 | 1.3 | 1.5 | 5.3 | 4.2 | 0.0 | 1.0 |
| **ԼՈՌԻ** | 10.0 | 0.9 | 8.9 | 0.2 | 13.2 | 4.7 | 7.0 | 1.5 | 8.2 | 3.5 | 2.4 | 2.3 |
| **ԿՈՏԱՅՔ** | 19.2 | 4.6 | 14.3 | 0.3 | 15.4 | 14.1 | 0.9 | 0.4 | 6.2 | 5.9 | 0.0 | 0.3 |
| **ՇԻՐԱԿ** | 13.2 | 12.2 | 1.0 | 0.0 | 10.0 | 9.2 | 0.7 | 0.1 | 17.7 | 12.3 | 5.3 | 0.1 |
| **ՍՅՈՒՆԻՔ** | 35.6 | 2.9 | 1.7 | 31.0 | 69.7 | 10.9 | 13.0 | 45.8 | 50.7 | 5.6 | 0.0 | 45.1 |
| **ՎԱՅՈՑ ՁՈՐ** | 8.5 | 0.2 | 8.3 | 0.0 | 9.3 | 2.1 | 7.1 | 0.1 | 9.2 | 6.9 | 2.0 | 0.3 |
| **ՏԱՎՈՒՇ** | 2.1 | 1.5 | 0.6 | 0.0 | 1.4 | 1.4 | 0.0 | 0.0 | 1.5 | 1.1 | 0.0 | 0.4 |

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. էջ 165 (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf )

154. **Էներգախնայողություն.** ՀՀ կառավարությունը մի շարք միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ համատեղ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (ՀՎԷԷՀ) միջոցով իրականացնում է հանրային նշանակության օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր, որոնց արդյունքում նախատեսվում է էապես կրճատել վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ:

155. Շինարարության ոլորտում լայն կիրառություն են ստանում էներգաարդյունավետ նյութերի օգտագործումը և նոր ստանդարտների ներդրումը, որոնք թույլ կտան կրճատել էներգետիկ ծախսերը:

156. **Կլիմայի փոփոխության հարմարվողականություն.** ՀՀ-ում կլիման գնալով ավելի անկանխատեսելի է դառնում, որի պատճառով վնասվում է գյուղատնտեսական բարձրարժեք բերքը (ցրտահարություն, կարկտահարություն և այլն): Որպեսզի հնարավոր լինի կրճատել կլիմայի փոփոխության և անկանխատեսելիության վնասները, ներդրվում են պաշտպանիչ ցանցեր, կաթիլային ոռոգման համակարգեր, հակակարկտային կայաններ և այլն: Մինչև այժմ այս ուղղությամբ իրականացված ներդրումներն անհրաժեշտ ծավալներով չեն կատարվել, սակայն ՀՀ 2018-2020թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսությունում կաթիլային ոռոգման համակարգերի, հակակարկտային ցանցերի ներդրման համար իրականացնել պետական աջակցության ծրագրեր՝ մասնակի սուբսիդավորելով նշված համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Հակակարկտային պաշտպանության համակարգերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերում 2017թ. իրականացվում է հակակարկտային պաշտպանության նոր՝ հրթիռային եղանակի ներդրման պիլոտային ծրագիր:

157. ՀՀ բնապահպանական հիմնախնդիրներից են՝ հանրապետությունում անտառային տարածքների ոչ համաչափ բաշխվածությունը, ՀԱԷԿ-ի հնարավոր աղետների ռիսկը, Արարատյան դաշտավայրի ստորգետնյա ջրային պաշարների անխնա շահագործումը, աղակալած, դեգրադացված, էռոզացված հողերի առկայությունը, հանքարդյունաբերական ձեռնարկություններում հնարավոր վթարները, կեղտաջրերի առանց մաքրման արտանետումը, մաքրման կայանների անմխիթար վիճակը, մաքրման կայանների բացակայությունը, օգտակար հանածոների հանքավայրերի անխնա շահագործումը:

158. **Աղետների ռիսկի կառավարում.** Հանրապետության տարածքի մեկ երրորդը գտնվում է սողանքավտանգ գոտում: Սողանքավտանգ տարածքները հիմնականում լեռների ստորոտներում և լեռնային տարածքներում են: Մոտ 470000 մարդ կամ երկրի ողջ ազգաբնակչության 15%-ը ենթակա է այս վտանգին, իսկ պատճառած միջին տարեկան վնասը կազմում է մոտ 10 մլն ԱՄՆ դոլար:

159. Տարերային աղետների շարքում Հայաստանը զգալի ազդեցություն է կրում երաշտներից, վաղ գարնանային ցրտահարություններից, կարկտահարություններից, սելավներից, ջրհեղեղներից, ուժեղ քամիներից և անտառային հրդեհներից: Հայաստանի ազգաբնակչությունը, տնտեսությունը և շրջակա միջավայրը մեծապես խոցելի են բնական երևույթների հետևանքով առաջացող աղետների նկատմամբ:

160. Տեխնածին աղետները նույնպես ռիսկի աղբյուր են հանդիսանում: Հայաստանում կան 20-ից ավելի քիմիական գործարաններ, որոնք օգտագործում են ամոնիակ, քլոր, քլորաթթու, ազոտաթթու և այլ վտանգավոր քիմիական նյութեր: Հանրապետության տարածքում 1500-ից ավելի կազմակերպություններ հատկանշվում են բարձր պայթյունավտանգությամբ և հրդեհավտանգությամբ: Հանրապետությունում շահագործվող օգտակար հանածոների հանքավայրերով պայմանավորված առկա են գործող և կոնսերվացված պոչամբարներ: Հայկական ատոմային էլեկտրակայանը գտնվում է սեյսմաակտիվ գոտում:

## 2.12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

161. ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը մարզերում իրագործում է մարզպետը՝ համակարգելով գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: ՀՀ մարզպետարանները կազմված են մարզպետի և մարզպետարանի աշխատակազմերից: ՀՀ մարզպետարանների աշխատակազմերը հիմնականում համալրված են բարձրագույն կրթություն ունեցող աշխատակիցներով (ավելի քան 90%), որոնց գերակշռող մեծամասնությունը հանդիսանում են քաղաքացիական ծառայող:

162. ՀՀ մարզային և տեղական կարողությունների զարգացվածության աստիճանը ծայրահեղ տարբեր է համայնքից համայնք: Որպես կանոն, բոլոր խոշոր համայնքներում տեղական կարողությունները բավականին բարձր են, որը սակայն հաճախ չի հանդիպում փոքր համայնքներում: Վերոնշյալի արդյունքում համայնքներում բարձրագույն կրթություն ունեցող աշխատակիցների միջին թիվը կազմում է շուրջ 50%:

163. Փոքր համայնքների վարչական բյուջեների գերակշռող մասը օգտագործվում է աշխատակազմի աշխատավարձի, որի արդյունքում համայնքների դրված պարտադիր լիազորությունների լիարժեք իրականացման ռիսկեր են առաջանում:

164. Վերոնշյալ ռիսկերը նվազեցնելու համար ՀՀ-ում իրականացվում է համայնքների խոշորացում, որի արդյունքում խոշոր բնակավայրը իր հետ հարակից փոքր բնակավայրերի հետ կկազմեն մեկ համայնք:

# III. ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)

165. Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹԿՀՎ) վերլուծությունն ապահովում է ՀՀ մարզերի ներկա իրավիճակի ամփոփ նկարագիրը:

ԱՂՅՈՒՍԱԿ 615. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)

| ***Բնական պայմաններ, ժողովրդագրություն և քաղաքային զարգացում / Ուժեղ կողմեր*** | ***Բնական պայմաններ, ժողովրդագրություն և քաղաքային զարգացում / Թույլ կողմեր*** |
|---|---|
| – Կրթված և աշխատունակ բնակչության մեծ տեսակարար կշիռ<br>– Զարգացող գյուղատնտեսություն<br>– Զարգացող զբոսաշրջություն<br>– Ջրային ռեսուրսների մեծ պաշարների առկայություն (հանքային և քաղցրահամ),<br>– Լեռնարդյունաբերությունը՝ մարզերում որպես աճի բևեռ<br>– Քաղաքներում զարգացող ՏՏ ոլորտ<br>– Գյուղատնտեսական հողերի մեծ ծավալներ<br>– Ուրբանիզացիայի բարձր մակարդակ<br>– Օգտակար հանածոների արդյունահանման մեծ փորձ | – Բնակչության մեծածավալ արտագաղթ, հիմնականում՝ մարզային քաղաքներից<br>– Մրցունակ մասնագիտական գիտելիք ունեցողների արտագաղթ<br>– Բնակչության ծերացում<br>– Բնական ռեսուրսների կառավարման անբավարար մակարդակ<br>– Չօգտագործվող, քայքայված նախկին ինդուստրիալ տարածքների առկայություն<br>– Քաղաքներում կանաչապատ տարածքների (անտառապատ տարածքներ, պուրակներ, այգիներ) սակավություն կամ բացակայություն<br>– Բազմաբնակարան շենքերի պահպանման ֆինանսական ռեսուրսների անբավարարություն<br>– Բնակչության ոչ համաչափ բաշխում<br>– Հայաստանի զբոսաշրջության պոտենցիալի օգտագործման ոչ բավարար մակարդակ<br>– Կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանների վատ վիճակ, բացակայություն<br>– Անտառային պաշարների գերօգտագործում վառելիքի համար |
| ***Տրանսպորտ, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ / Ուժեղ կողմեր*** | ***Տրանսպորտ, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ / Թույլ կողմեր*** |
| – Ֆիքսված և բջջային հեռախոսակապի, ինտերնետ ծածկույթի բավարար ապահովվածություն<br>– Հանրապետական և մարզային հեռուստատեսության հասանելիություն ողջ հանրապետության տարածքում<br>– Ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի առկայություն | – Տրանսպորտային միջոցների մաշվածություն<br>– Հեռավոր բնակավայրերի տրասնպորտային հասանելիության ոչ բավարար մակարդակ<br>– Ուղևորների և բեռնափոխադրումների կախվածությունը հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտից<br>– Ոչ բավարար զարգացած հանրային տրանսպորտային ծառայություններ<br>– Երկաթուղային տրանսպորտայի օգտագործման ժամանակ լաստանավերի օգտագործման անհրաժեշտություն<br>– Իրանով անցնող բեռների համար ավտոմոբիլային տրանսպորտի այլընտրանքի բացակայություն |
| ***Հանրային ենթակառուցվածքներ / Ուժեղ կողմեր*** | ***Հանրային ենթակառուցվածքներ / Թույլ կողմեր*** |
| – Գազաֆիկացված համայնքների մեծ թիվ<br>– Ջրամատակարարման որակի | – Ճանապարհային ենթակառուցվածքների մաշվածության բարձր աստիճանը |

| | |
|---|---|
| բարելավում, ցանցի շարունակական թարմացում<br>– Էլեկտրաէներգիայի մատակարարման ենթակառուցվածքների առկայություն<br>– Միջպետական ճանապարհների բավարար վիճակը<br>– Զարգացած ավտոճանապարհային ցանց<br>– Ոռոգման ջրի հասանելիության բարձր աստիճանը,<br>– Քաղաքային ենթակառուցվածքների առկայություն | – ջրահեռացման համակարգերի մաշվածության բարձր աստիճան<br>– Կոշտ կենցաղային թափոնների կառավարման անբավարար մակարդակ<br>– Հատուկ կարիքներով և սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով մարդկանց համար հարմարեցված ենթակառուցվածքների բացակայություն<br>– ոռոգման ջրի ջրագծերի մաշվածության բարձր աստիճան<br>– փողոցային լուսավորության ոչ բավարար մակարդակ<br>– Մարզային և համայնքային ճանապարհների ոչ բավարար վիճակ<br>– Կոյուղաջրերի մաքրման կայանների կամ բացակայություն, կամ առկա կայանների թերի շահագործում<br>– Աղբավայրերի ոչ ճիշտ տեղակայում և շահագործում<br>– բնակֆոնդի մաշվածություն, 4-րդ կարգի վնասվածություն ունեցող շենքերի մեծ քանակ,<br>– Տուրիստական ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակ, այդ թվում՝ հյուրատների, հյուրանոցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների ոչ բավարար քանակություն<br>– միջպետական ճանապարհների ցածր տարողունակություն և ձմռանը դժվար անցանելիություն<br>– Ոռոգման ներտնտեսային ցանցերի անբավարար վիճակ<br>– Ենթակառուցվածքներում ներդրումների համար ֆինանսական միջոցների անբավարարություն |
| **Ներքին արտադրանք և եկամուտներ/ Ուժեղ կողմեր** | **Ներքին արտադրանք և եկամուտներ/ Թույլ կողմեր** |
| – Հայաստանում արտադրված և վերամշակված գյուղատնտեսական մթերքների ճանաչման բարձր աստիճան<br>– Մշակող արդյունաբերության արտադրանքի կտրուկ աճ, որի արդյունքում ավելացել է ոչ հանքանյութային արտահանման ծավալները<br>– Ինտենսիվ գյուղատնտեսության ծավալների աճ<br>– Զարգացած հանքարդյունաբերություն<br>– Զարգացած էներգետիկա | – Մարզերի ՀՆԱ կախվածության բարձր աստիճան գյուղատնտեսությունից<br>– Գյուղատնտեսական արտադրանքի բարձր ինքնարժեք ցածր արդյունավետության պատճառով<br>– Վերամշակող արտադրության մրցունակության ցածր մակարդակ՝ պայմանավորված հարաբերականորեն բարձր ինքնարժեքով (այդ թվում՝ գյուղատնտեսական մթերքների բարձր ինքնարժեքով)<br>– Գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման անբավարար մակարդակ<br>– Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության ցածր մակարդակ,<br>– Առկա տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածություն,<br>– Տրանսֆերտներից կախվածության բարձր աստիճան<br>– Ներքին և արտաքին սպառման շուկայի նվազում<br>– Գյուղատնտեսության վարում հիմնականում ավանդական եղանակով<br>– Զբոսաշրջության ներուժի թերի օգտագործում |

| | |
|---|---|
| | – Մարզերի և Երևան քաղաքի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ների կտրուկ տարբերություն<br>– ՀՆԱ զգալի կախվածություն լեռնահանքային արդյունաբերությունից<br>– Գյուղատնտեսական հողերի թերի օգտագործում<br>– Գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածություն<br>– Շուկայի պահանջարկի կանխատեսման համակարգի բացակայություն |
| **Զբաղվածություն / Ուժեղ կողմեր** | **Զբաղվածություն / Թույլ կողմեր** |
| – Զարգացող զբոսաշրջություն, որը ստեղծում է սեզոնային բազմաթիվ աշխատատեղեր<br>– աշխատաշուկայում բարձրագույն կրթություն ունեցող անձանց մեծ թիվ,<br>– ՏՏ ոլորտի աճ, ՏՏ ոլորտում բարձր վարձատրվող աշխատուժի պահանջարկ<br>– գյուղատնտեսությունում աշխատուժի առկայություն, որը ապահովում է զբաղվածության բարձր մակարդակ | – Գործազրկության բարձր մակարդակ, մասնավորապես՝ քաղաքային բնակչության շրջանում<br>– Ցածր վարձատրվող գյուղատնտեսական աշխատանքներում զբաղվածների մեծ թիվ<br>– Ոչ գյուղատնտեսական կամ հանքարդյունաբերական աշխատատեղերի անհրաժեշտություն<br>– Սահմանափակ կարողություններ ունեցող անձանց գործազրկության ավելի բարձր հավանականություն<br>– Արտադրական փորձ ունեցող մասնագետների մեծ տարիք,<br>– Գործազրկության մակարդակի անհավասարաչափ բաշխվածություն մարզերում<br>– Արդի գյուղատնտեսության մասնագետների պակաս |
| **Տարածաշրջանային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ / Ուժեղ կողմեր** | **Տարածաշրջանային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ / Թույլ կողմեր** |
| – ՀԱԷԿ-ի առկայությունը՝ էլեկտրաէներգիայի արտադրման մեծ քանակության տեսանկյունից<br>– Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացում<br>– Գյուղատնտեսության զարգացման կայուն միտումներ<br>– Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալների աճ<br>– Զարգացած հանքարդյունաբերություն<br>– Գյուղատնտեսական մթերքների վերամշակման կազմակերպությունների բավարար քանակություն,<br>– Տնտեսության մեջ արտահանող ճյուղերի զարգացում<br>– Տուրիստական կլաստերների ձևավորում /Տաթև, Ծաղկաձոր, Ջերմուկ, Սևան և այլն/ | – Ավանդական / ոչ արդյունավետ գյուղատնտեսության դեռևս դոմինանտ լինելը, գյուղատնտեսական արտադրանքի բարձր ինքնարժեք<br>– Գյուղ նշանակության հողերի մասնատվածությունը, մեքենայացման, արտադրողականության ցածր մակարդակ<br>– Մարզերի չդիվերսիֆիկացված տնտեսական կառուցվածքը<br>– Արտահանման պոտենցիալի թերի օգտագործում<br>– Գյուղատնտեսական մեքենատրանսպորտային պարկերի բացակայությունը, գյուղտեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր աստիճան<br>– Գյուղատնտեսության վարման արդիական եղանակների հետ ծանոթության ցածր մակարդակ<br>– Թեթև արդյունաբերության ոլորտների ոչ բավարար զարգացված լինելը,<br>– Ոչ դիվերսիֆիկացված տնտեսության զարգացում<br>– Գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմի բացակայություն,<br>– Տնտեսության աճի դանդաղ տեմպեր |
| **Կրթություն, հետազոտում, մարդկային կապիտալ / Ուժեղ կողմեր** | **Կրթություն, հետազոտում, մարդկային կապիտալ / Թույլ կողմեր** |

| | |
|---|---|
| – Կրթության մատչելիություն՝ դպրոցական, նախադպրոցական ուսումնական հաստատությունների, նախակրթարանների առկայություն,<br>– բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետների մեծ տեսակարար կշիռ,<br>– Բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն<br>– Երիտասարդ, կրթություն ունեցող անձանց մեծ թիվ,<br>– ՏՏ ոլորտի հմտությունների զարգացում դպրոցական տարիքից | – Մարզից դուրս բարձրագույն կրթություն ստացածների՝ մարզ վերադառնալու ցածր աստիճան<br>– Կրթություն ստացած երիտասարդների գործնական հմտությունների և կարողությունների ցածր մակարդակ<br>– Մասնագիտական կրթության անհամապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին,<br>– Սահմանամերձ, բարձր լեռնային դպրոցներում մանկավարժների պակաս<br>– Դպրոցների լաբորատորիաների տեխնիկական զինվածության ցածր մակարդակ |
| **Սոցիալական ոլորտ / Ուժեղ կողմեր** | **Սոցիալական ոլորտ / թույլ կողմեր** |
| – Բնակարանային ապահովվածության բարձր մակարդակ<br>– Բժշկական կազմակերպությունների հասանելիություն<br>– Մարզամշակութային հաստատությունների հասանելիություն մարզերի քաղաքներում<br>– Բնակարանների գազաֆիկացման բարձր մակարդակ<br>– Երաժշտական և արվեստի դպրոցների, այլ մշակութային օջախների ու սպորտային կազմակերպությունների առկայություն, | – Աղքատության բարձր մակարդակ<br>– Գյուղական ամբուլատորիաների ոչ բավարար պայմաններ<br>– Գյուղական բնակավայրերում մարզամշակութային և ժամանցի վայրերի բացակայություն<br>– Մարզերում բժիշկների անբավարար թվաքանակ և պատրաստվածության ցածր մակարդակ<br>– Տարեց մարդկանց առողջապահության մասնագետների պակաս<br>– Մայրաքաղաքի բժշկական ծառայությունների սահմանափակ հասանելիություն հեռավորության և արժեքի պատճառով |
| **Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխություն / Ուժեղ կողմեր** | **Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխություն / Թույլ կողմեր** |
| – Օդային ավազան արտանետումների ցածր մակարդակ<br>– Անտառների, բնության հատուկ պահպանվող տարածքների առկայություն:<br>– Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ էլեկտրաէներգիայի արտադրություն<br>– Կոշտ թափոնների, կեղտաջրերի կառավարման հանրային ենթակառուցվածքի բարելավում<br>– Հարուստ բուսական և կենդանական աշխարհ<br>– Էներգախնայողության դրական փորձ | – Մարզերում աղբի կառավարման համակարգերի թերի աշխատանք<br>– Կոշտ թափոնների վերամշակման անբավարար աստիճան<br>– Կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանի բացակայության/ վատ վիճակի պատճառով շրջակա միջավայրի աղտոտվածություն<br>– Բնակչության իրազեկվածության ցածր մակարդակ բնապահպանական խնդիրների հետ կապված<br>– Էներգախնայողության և էներգաարդյունավետության ցածր մակարդակ<br>– արևային և հողմային էներգիայի օգտագործման ցածր մակարդակ<br>– լքված, դադարեցված հանքավայրերի և դրանց տարածքներում խախտված հողատարածքների առկայություն<br>– Գետային համակարգերի աղտոտվածություն՝ կապված գյուղատնտեսական գործունեության և լեռնահանքային արդյունաբերության հետ<br>– Ընդերքօգտագործման թափոնների մեծ տեսակարար կշիռ, վերամշակման բացակայություն |
| **Տարածաշրջանային և տեղական զարգացման կարողություններ / Ուժեղ** | **Տարածաշրջանային և տեղական զարգացման կարողություններ / Թույլ կողմեր** |

| կողմեր | |
|---|---|
| – Մարզային վարչակազմում բարձրագույն կրթության ունեցողների մեծ տեսակարար կշիռ,<br>– Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում մարզային և տեղական կառավարման գործընթացներում<br>– Վարչակազմի վերապատրաստումների պարբերաբար կազմակերպում և անցկացում<br>– Խոշորացման գործընթացի առաջընթաց | – Տեղական մակարդակում ֆինանսական ռեսուրսների սահմանափակություն՝ հատկապես ներդրումների համար<br>– Համայնքների կարողությունների միջև առկա խիստ տարբերություն<br>– ՏԻՄ –երում բարձրագույն կրթություն ունեցողների ցածր մակարդակ<br>– Տեղական հարկերի ու վճարների հավաքագրման դժվարություններ<br>– Հասարակական կազմակերպությունների ցածր մասնակցություն |
| **Այլ հարցեր / Ուժեղ կողմեր** | **Այլ հարցեր / Թույլ կողմեր** |
| – Բազմաթիվ հուշակոթողների առկայություն<br>– Հարուստ սպորտային ավանդույթներ<br>– Հյուրանոցային տնտեսություններում ներդրումների իրականացում<br>– Հարկային արտոնություններ սահմանամերձ համայնքներին | – Ներմարզային զարգացման անհամաչափություններ<br>– Զբոսաշրջության կենտրոնացում միջպետական ճանապարհների երկայնքով<br>– Հեռավոր և սահմանամերձ համայնքների թերի զարգացվածություն այլ տարածքների հետ անհամաչափություններ<br>– Ադրբեջանի հետ սահմանի հետ անկայուն վիճակ<br>– Բարձր լեռնային համայնքներում հիմնական ենթակառուցվածքների բացակայություն<br>– 3-րդ և 4-րդ կարգի վթարայնություն ունեցող, անավարտ մնացած, տարբեր աստիճանի պատրաստվածության և վերանորոգման ենթակա բնակելի շենքերի առկայություն |
| – Հնարավորություններ | – Սպառնալիքներ |
| **Բնական պայմաններ, ժողովրդագրություն և քաղաքային զարգացում / Հնարավորություններ** | **Բնական պայմաններ, ժողովրդագրություն և քաղաքային զարգացում / Սպառնալիքներ** |
| – Գյուղատնտեսության համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ<br>– մարզերում թերի ծանրաբեռնված արտադրական տարածքների առկայություն<br>– մեծ հանքային պաշարների առկայություն<br>– ջրային ռեսուրսների մեծ պաշարներ<br>– Ամենամեծ քաղցրահամ ջրի պաշար Կովկասում (Սևանա լճի առկայություն)<br>– Զբոսաշրջության համար գրավչություն ունեցող բնական լանդշաֆտների առկայություն, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների<br>– Մեծաքանակ հուշարձանների ու կոթողների առկայություն, այդ թվում ընդգրկված ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:<br>– Բազմաբնույթ կլիմայական զոնաների առկայություն<br>– Արևային օրերի քանակ, արևային էներգիայի օգտագործման հնարավորություններ | – Կլիմայական ռիսկեր (կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ, երաշտ)<br>– Հայաստանի ռելիեֆի կտրվածություն<br>– Բարձր լեռնային բնական պայմաններ<br>– Սողանքների առկայություն<br>– Սեյսմիկ գոտում գտնվելը<br>– Մեծ քանակի արտագաղթի շարունակում, ինչպես նաև բնակչության ծերացման հետագա միտումների շարունակում<br>– Շրջակա միջավայրի աղտոտվածության աճ<br>– Վթարային շենքերի առկայություն<br>– Պատերազմական գործողությունների վերսկսման վտանգ |

| | |
|---|---|
| – չօգտագործվող արդյունաբերական տարածքների առկայություն,<br>– Հիդրոէներգետիկ հարուստ պաշարներ<br>– Հանրային և բնակելի սեկտորում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների հնարավորություն | |
| **Տրանսպորտ, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ / Հնարավորություններ** | **Տրանսպորտ, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ / Սպառնալիքներ** |
| – Ներհանրապետական ուղևորների և բեռնափոխադրման նպատակով երկաթգծի առկայություն<br>– Միջազգային չափանիշներին համապատասխանող օդանավակայանի և երկաթգծի առկայություն, ինչպես նաև հյուսիս-հարավ միջպետական ճանապարհի կառուցում<br>– Կապանի օդանավակայանի վերագործարկման հնարավորություն | – Մեծ կախվածություն ավտոճանապարհներից<br>– Տրասնպորտային ծախսերի մեծ լինելը<br>– Ներհանրապետական երկաթուղու թերի գործելը, Սյունիքի և Վայոց ձորի կտրվածությունը երկաթուղուց<br>– Ձմեռային ամիսներին ավտոճանապարհների դժվարանցանելիություն<br>– Հասարակական տրանսպորտի թույլ զարգացվածություն ոչ բավարար ներդրումների արդյունքում<br>– Ավտովթարների և պատահարների աճի միտում,<br>– Սողանքային վտանգներ ճանապարհների համար |
| **Հանրային ենթակառուցվածքներ / Հնարավորություններ** | **Հանրային ենթակառուցվածքներ / Սպառնալիքներ** |
| – Այլընտրանքային ճանապարհների կառուցում<br>– Բարելավող տրանսպորտային և տնտեսական կապեր Արցախի հետ<br>– Երկաթուղային ենթակառուցվածքի առկայություն<br>– Հողմային և հիդրո էներգետիկայի զարգացման մեծ ներուժը<br>– Նախկինում կառուցված կեղտաջրերի մաքրման կայանների վերագործարքման հնարավորություն<br>– Հանրապետության գազի սնուցման երկու աղբյուրներ | – Որոշ մարզերի ջրամատակարարման համակարգի կախվածությունը էլեկտրաէներգիայից<br>– Երկարատև ձմեռ, որի պատճառով քայքայվում են ճանապարհները<br>– ճանապարհների որոշ մասի ռիսկային և դժվարանցանելի վայրերով անցնելը, ձմեռային ամիսներին փակվելու վտանգի առկայությունը<br>– Հանրային ենթակառուցվածքի հետագա անկում ոչ բավարար ֆինանսավորման պատճառով,<br>– Համայնքներում կոյուղաջրերի մաքրման կայանների չթողարկում ոչ բավարար ներդրումների պատճառով<br>– Միջհամայնքային տրանսպորտի թույլ զարգացվածություն ոչ բավարար ներդրումների պատճառով<br>– ճանապարհներին սողանքներ և քարաթափումներ ռիսկ |
| **Ներքին արտադրանք և եկամուտներ / Հնարավորություններ** | **Ներքին արտադրանք և եկամուտներ / Սպառնալիքներ** |
| – Գյուղատնտեսության վրա հիմնված այլ արտադրությունների զարգացման ներուժ<br>– Ռուսաստանյան շուկայի հասանելիություն<br>– Գյուղատնտեսության մեջ մշակովի տարածքների ավելացման հնարավորություն<br>– Գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հնարավորություն<br>– Գյուղատնտեսական մթերքի վերամշակման ընդլայնման հնարավորություն | – Գյուղատնտեսական ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման համար ոլորտում տնտեսավարողների կողմից ներդրումների սուղ հնարավորությունների պահպանում<br>– Գյուղատնտեսական եկամուտների մեծ կախվածություն եղանակային պայմաններից<br>– Շարունակական կախվածություն ավանդական գյուղատնտեսությունից<br>– Լեռնահանքային արդյունաբերական արտադրանքի միջազգային գների անկայուն դինամիկա և նվազման միտումներ<br>– Զբոսաշրջության կենտրոնացում միջպետական ճանապարհի երկայնքով |

| | |
|---|---|
| – Տնտեսական աճի կենտրոնների ձևավորում<br>– Ինքնահոս տարբերակով ոռոգելի տարածքների ընդարձակման հնարավորություն<br>– Թեթև արդյունաբերության զարգացման համար մեծ ներուժի առկայություն և նախադրյալների առկայություն<br>– Անասնապահության զարգացման համար ներուժ | – Որոշ մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի ցածր օգտագործում գնդակոծման տակ գտնվելու պատճառով |
| **Զբաղվածություն / Հնարավորություններ** | **Զբաղվածություն/ Սպառնալիքներ** |
| – Զբաղվածությունը խթանող պետական քաղաքականության առկայություն<br>– Արտոնությունների օգտագործման դեպքում աշխատատեղերի ստեղծում սահմանամերձ բնակավայրերում<br>– Զբաղվածության ընդլայնում պետական աջակցությամբ<br>– Ինտենսիվ գյուղատնտեսության, ՏՏ ոլորտի, տուրիզմի, թեթև արդյունաբերության և հանքարդյունաբերության ու վերամշակման արդյունաբերության մասնագետների պահանջարկ | – Մրցունակ մասնագետների շարունակական արտագաղթը<br>– Գյուղատնտեսական զբաղվածության ցածր արդյունավետության պահպանում, նոր մեթոդների ներդրման ձգձգում<br>– Կրթական համակարգի և աշխատաշուկայի անհամապատասխան մնալը<br>– Աշխատանքային միգրացիայի տեմպերի պահպանությունը<br>– Հանքարդյունաբերության ոլորտի անկայունության պահպանումը |
| **Տարածաշրջանային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ / Հնարավորություններ** | **Տարածաշրջանային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ / Սպառնալիքներ** |
| – Ինտենսիվ գյուղատնտեսության մեջ ներդրումներ<br>– Տուրիզմի զարգացման համար նախադրյալների ստեղծում (մատչելի օդային տրանսպորտ, ներդրումներ տուրիստական ենթակառուցվածքներում և այլն)<br>– Կառավարության աջակցություն ներդրումների ներգրավման համար<br>– Բնական պաշարների շահագործման տեմպերի ավելացում<br>– Առկա չմշակվող կամ ցածր արդյունավետությամբ մշակվող գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների մշակման ինտենսիվության բարձրացում<br>– Էկոլոգիական գյուղատնտեսություն վարելու պայմանների առկայություն<br>– զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացման համար բարենպաստ բնակլիմայական պայմանների առկայություն<br>– Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետագա զարգացում<br>– վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ կայանների կառուցման համար բնակլիմայական բարենպաստ պայմանների առկայություն | – Պաթոգենների ընդլայնումը, որը բացասական ազդեցություն է ունենում գյուղատնտեսության զարգացման վրա<br>– Անասունների և բույսերի հիվանդությունների ներթափանցման վտանգ<br>– Հանքարդյունաբերության արտադրանքի գների նվազում<br>– Ներդրումների կրճատում ինտենսիվ գյուղատնտեսության մեջ<br>– Բնակլիմայական պայմանների բացասական ազդեցություն գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների վրա<br>– Պատերազմի վերսկսման դեպքում օտարերկրյա ներդրումների ներհոսքի կտրուկ նվազում<br>– Ռիսկային գոտում գյուղատնտեսության ծավալում<br>– Տուրիզմի, ինտենսիվ գյուղատնտեսության և հանքարդյունաբերության համատեղ զարգացման ռիսկեր |
| **Կրթություն, հետազոտում, մարդկային** | **Կրթություն, հետազոտում, մարդկային** |

| կապիտալ / Հնարավորություններ | կապիտալ / Սպառնալիքներ |
|---|---|
| – Մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատությունների հասանելիություն բնակչության համար<br>– Երիտասարդ կադրերի ինքնաիրացման հաստատությունների ստեղծում (ստեղծարար, ինովացիոն, ռեսուրսային, ՏՏ կենտրոններ) ժամանակակից կրթության պահանջներին համապատասխան<br>– ՏՏ ոլորտի խթանման ազգային կրթական քաղաքականության առկայություն | – Կրթության բարեփոխումների ուշացում, նոր ծրագրերի ներդրման ուշացում<br>– Մրցունակ կրթությամբ կադրերի արտագաղթ<br>– Գյուղական համայնքներում անհրաժեշտ կադրերի անբավարար թվաքանակ<br>– Կրթության արդիականացմանը ուղղված ներդրումների պակաս,<br>– Բարձր տեխնոլոգիաների ոլորտում որակավորում ունեցող մասնագետների մեծ պահանջարկ տարածաշրջանից դուրս՝ ուղեղների արտահոսք |
| **Սոցիալական ոլորտ / Հնարավորություններ** | **Սոցիալական ոլորտ / Սպառնալիքներ** |
| – Սոցիալական աջակցության և պաշտպանության հասցեականության մեծացում<br>– Պատմամշակութային կոթողների, տեսարժան վայրերի և թանգարանների առկայություն<br>– Սահմանափակ կարողություններով անձանց նկատմամբ պետական քաղաքականության առկայություն | – Մարզերի և տարածաշրջանների միջև զարգացման անհամաչափությունների խորացում<br>– Առողջապահության և կրթության կենտրոնացման ավելացումը Երևան քաղաքում<br>– Մշակույթի և ֆիզիկական կուլտուրայի նկատմամբ բնակչության հետաքրքրվածության նվազում<br>– Տարեցտարի բժշկական սպասարկման արդի տեխնոլոգիաներով իրականացման համար պահանջվող կապիտալ ներդրումների ավելացում, որը հագեցնում է նաև ծառայության վճարների ավելացմանը |
| **Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխություն / Հնարավորություններ** | **Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխություն / Սպառնալիքներ** |
| – Էներգիայի էժան արտադրության հնարավորություն,<br>– Լավ հնարավորություններ վերականգնող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրության համար (արևային, երկրաջերմային, կենսազանգվածի էներգիա)<br>– Հանրային և բնակելի հատվածում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների հնարավորություն<br>– Մարզերում աղբավայրերի կառուցում,<br>– Էկոտուրիզմի զարգացման հնարավորություն | – Ստորերկրյա ջրային պաշարների նվազման միտում<br>– Կլիմայի փոփոխությունները՝ շոգ ամառների և խստաշունչ ձմեռների տևողության ավելացում, տեղումների քանակի նվազում, երաշտների առաջացման հնարավորությունների մեծացումՀԷԿ-երի աշխատանքային թույլատրված ռեժիմի խախտման ավելացումներ<br>– Հանքարդյունաբերություն ինտենսիվացման դեպքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության աճ<br>– Անտառային տարածքների սակավության պատճառով չորային կլիմա,<br>– Լքված, դադարեցված հանքավայրերի և դրանց տարածքներում խախտված հողերի ծավալների ավելացում<br>– Երկրաշարժերի դեպքում պոչամբարներից և արտադրություններից թունավոր նյութերի շրջակա միջավայր թափանցելու վտանգ |
| **Տարածաշրջանային և տեղական զարգացման կարողություններ/ Հնարավորություններ** | **Տարածաշրջանային և տեղական զարգացման կարողություններ / Սպառնալիքներ** |
| – Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի շարունակական աճ<br>– Համայնքների խոշորացումը՝ որպես | – Փոքր համայնքների ֆինանսական հնարավորությունների նվազելը / անփոփոխ մնալը<br>– Բնակչության արտագաղթի աճ<br>– Համայնքների խոշորացման ծրագրի՝ |

| | |
|---|---|
| հնարավորություն առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար | փորձարկված չլինելը<br>– |
| **Այլ հարցեր / Հնարավորություններ** | **Այլ հարցեր / Սպառնալիքներ** |
| – Սահմանամերձ համայնքներում արտոնությունների շնորհիվ կարող են առաջանալ զարգացման նոր հնարավորություններ<br>– Բնության հատուկ պահպանվող տարածքների համապատասխան ՊՈԱԿ-ների և հարակից համայնքների միջև սերտ համագործակցություն՝ գյուղական մթերքները պահպանվող տարածքներ այցելող զբոսաշրջիկների շրջանում սպառելու և եկամուտներ ստանալու ուղղությամբ | – Սահմանային հակամարտություն Ադրբեջանի հետ |

# IV. ՄԱՐԶԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

166. Մարզային զարգացման ռազմավարության ներքոհիշյալ գերակայությունները նպաստում են ռազմավարական նպատակների իրականացմանը: Կարևորության առումով դրանք հաջորդում են ավելի վաղ ներկայացված գերակայություններին (գերակա խնդիրներ):

ԱՂՅՈՒՍԱԿ 626. ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| Բնական պայմաններ | «- Բնական աղետներից շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պաշտպանություն<br>- Բնության և շրջակա միջավայրի վրա արդյունաբերության վնասակար ազդեցության մեղմում և էկոհամակարգերի պահպանություն<br>– Բնական ռեսուրսների արդյունավետ ու կայուն օգտագործում և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմի ապահովմանն աջակցություն |
| Ժողովրդագրություն | – Բնական աճի խթանում<br>– Արտագաղթի տեմպերի մեղմում |
| Քաղաքային զարգացում | – Արդյունաբերության զարգացում (մասնավորապես՝ թեթև արդյունաբերություն, ՏՏ ոլորտ)<br>– Քաղաքային ենթակառուցվածքների զարգացում, այդ թվում՝ տուրիստական ենթակառուցվածքների<br>– Բնակֆոնդի արդյունավետ կառավարում |
| Տրանսպորտ, հաղորդակցում և տեղեկատվական տեխնոլոգիաներ | – Տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացում, դիվերսիֆիկացում, այդ թվում՝ հասարակական տրանսպորտի զարգացում, առանձնակի ուշադրություն դարձնելով զբոսաշրջության համար օգտագործվող տրանսպորտային ենթակառուցվածքների վրա |
| Հանրային ենթակառուցվածքներ | – Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի և դրանց կառավարման վիճակի բարելավում, այդ թվում՝ քաղաքների կոյուղիների կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում/վիճակի բարելավում<br>– Գազիֆիկացման մակարդակի բարձրացում<br>– Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավում<br>– Միջմարզային, միջհամայնքային ճանապարհների բարեկարգում<br>– Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելմանը կամ նվազեցմանն ուղղված միջոցառումներ և մոնիթորինգի համակարգի բարելավում, ներառյալ՝ հողերի աղտոտվածության մոնիթորինգի համակարգի ներդրում |
| Ներքին արտադրանք և եկամուտներ | – Փոքր և միջին արդյունաբերական կազմակերպությունների գործունեության խրախուսում և աջակցություն, զբոսաշրջության զարգացում |
| Զբաղվածություն | – Նոր աշխատատեղերի ստեղծում ոչ գյուղատնտեսական ոլորտում, մասնավորապես՝ թեթև արդյունաբերությունում և ՏՏ ոլորտում,<br>– Գործազրկության կրճատում, մասնավորապես կանանց և երիտասարդության զբաղվածության աճ<br>– Աջակցություն ՓՄՁ-ներին և ինքնազբաղվածներին |

| | |
|---|---|
| Մարզային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ | – Գյուղատնտեսության արդյունավետության և մեքենայացման մակարդակի բարձրացում, գյուղատնտեսության տեխնիկական վերազինում (արդիականացում)<br>– Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում<br>– Օրգանական գյուղատնտեսության զարգացում,<br>– Դիվերսիֆիկացված արդյունաբերության զարգացում, տուրիզմի զարգացում և երկրի ճանաչելիության աճ<br>– Նորարարությունների, ՏՏ ներդրում և խթանում |
| Կրթություն, մարդկային կապիտալ | – Մարզի շուկայի կարիքները բավարարող միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստում<br>– Ժամանակակից տեխնոլոգիաների, մասնավորապես՝ ՏՏ ոլորտի մասնագիտական կրթության խթանում |
| Սոցիալական ոլորտ | – Մարզում ծայրահեղ աղքատության մեղմում / հաղթահարում<br>– Որակյալ առողջապահության հասանելիության ապահովում<br>– Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավում |
| Բնապահպանական հարցեր, Էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխության հարմարվողականություն | – Էներգախնայող և վերականգնվող Էներգետիկայի ոլորտներին վերաբերող համակարգերի ներդրում<br>– Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավում<br>– Բնության վրա արդյունաբերության ազդեցության մեղմացում, Էկոհամակարգերի պահպանում մասնավորապես՝ ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների, լքված, դադարեցված հանքավայրերի և դրանց տարածքներում խախտված հողերի ռեկուլտիվացիա, օդային և ջրային ավազանների աղտոտման դեմ ուղղված համապատասխան միջոցառումների իրականացում, հողի աղտոտվածության ուսումնասիրություն և մոնիթորինգի իրականացում,<br>– Աղետների ռիսկի կառավարմանն ուղղված միջոցառումների իրականացում: |
| Մարզային և տեղական զարգացման կարողություններ | – Մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների կարողությունների զարգացում<br>– Համայնքների խոշորացման միջոցով համայնքային կարողությունների զարգացում<br>– Համայնքներում, այդ թվում՝ հեռավոր, ավելի կրթված աշխատակազմերի ձևավորում<br>– Մարզային և տեղական շահագրգիռ կողմերի համակարգում |
| Այլ հարցեր | – Սահմանամերձ և հեռավոր համայնքների պաշտպանվածության և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում<br>– Բարձր լեռնային և սահմանամերձ տարածքների համաչափ զարգացում<br>– Սպորտի մասսայականացում երիտասարդության շրջանում |

# V. ՏԶԳԾ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

167. 2018-2020թթ. Տարածքային զարգացման ծրագիրը Հայաստանի տարածքային զարգացման առաջին համախմբված ծրագիրն է:

168. Այն բնութագրվում է հետևյալ կերպ՝

1) Արտացոլում և նպաստում է Հայաստանի 2016-2025թթ. Տարածքային զարգացման ռազմավարության նպատակների իրագործմանը (ընդունվել է 2016 թ. հուլիսին), և ընդգրկում է 2017-2025 թթ. տաս մարզերի զարգացման ռազմավարությունները (ընդունվել է 2017 թվականի հուլիսին):
2) Համախմբում է ծրագրերը, նախագծերը և դրանց հետ կապված ֆինանսավորումը, ստեղծում ռազմավարական նպատակների վրա կենտրոնանալու համար անհրաժեշտ համագործակցություն:
3) Անցում է կատարվում դեպի տարածքային զարգացման ընդունված սկզբունքներ՝
   ա. Ընտրված ուղղությունները հավասարակշռված են և նպաստում են համախմբման ու տարածքների մրցունակության աճին:
   բ. Ծրագրերի ընտրությունը հիմնված է օբյեկտիվ չափորոշիչների վրա, իսկ միջոցները բաշխվում են՝ հիմնված մրցակցության վրա:
   գ. Ուշադրության կենտրոնում են տեղական ինքնակառավարման մարմինները՝ որպես տարածքային զարգացման առանցքային դերակատարներ, որոնք պետք է զարգացնեն իրենց գիտելիքները ծրագրերի մշակման, նախապատրաստման և իրականացման գործընթացներում:

169. **ՏԶԳԾ նպատակները** ամբողջապես սահմանվել են Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարության նպատակների հետ համահունչ (ՀՏԶՌ 2016-2025):

| ՏԶԳԾ նպատակներ | ՀՏԶՌ նպատակներ |
|---|---|
| 1. Բոլոր մարզերում զբաղվածության և մրցունակության խթանում՝ նոր աշխատատեղերի ստեղծման, ՓՄՁ-ների աջակցության և բիզնես ենթակառուցվածքների զարգացման միջոցով: | 1. Բոլոր մարզերի մրցունակության բարձրացում՝ հիմնվելով նրանց ներուժի վրա, ինչը թույլ է տալիս ավելի արդյունավետ ինտեգրվել ազգային և միջազգային տնտեսություններին: |
| 2. Հանրային ենթակառուցվածքների արդիականացում՝ ապահովելով սոցիալական համախմբում և բնապահպանական կայունություն: | 2. Ապահովել բարձր մակարդակի տարածքային համախմբում՝ հատուկ ուշադրություն դարձնելով քիչ զարգացած տարածքներին և սահմանամերձ վայրերին, ինչպես նաև զարգացման ներուժի կայուն օգտագործմանը: |
| 3. Տարածքային զարգացման կառավարման բարելավում: | 3. Տարածքային զարգացման քաղաքականության և փորձի բարելավում՝ պլանավորման և իրականացման գործընթացում տարածքային և տեղական դերակատարների ավելի մեծ մասնակցությամբ: |

170. **ՏԶ հիմնական կատարողական ցուցանիշները,** որոնք չափում են քաղաքականության հաջողությունը, ազդեցությունը և արդյունքը, նույնպես սահմանվել են Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարության ցուցանիշների հետ համահունչ (ՀՏԶՌ 2016-2025):

| ՏԶ հիմնական կատարողական ցուցանիշներ | ՀՏԶՌ ռազմավարական ցուցանիշներ |
|---|---|

| | |
|---|---|
| 1. 2020թ.-ին մարզերում ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի թիվը կլինի առնվազն 460,000, որը 60,000- ով ավել է (15%), քան 2015 թվականին:<br>2. Մարզերում ակտիվ ձեռնարկությունների թիվը 2020 թ.-ին կլինի առնվազն 40,000, որը 1200 (3%) ավել է, քան 2015 թ.-ին:<br>3. 2020թ.-ի մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող անձանց տեսակարար կշիռը կլինի 36 %՝ 5 %-ով ավելի բարձր, քան 2015 թ.-ին: | 1. 2025թ.-ի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թվաքանակը կաճի առնվազն 10 տոկոսով՝ 2014թ.-ի համեմատ: |
| 4. Ութ մարզեր (բոլորը՝ բացառությամբ Շիրակի և Տավուշի) համապատասխան ցուցանիշով գերազանցում են մեկ շնչի հաշվով ազգային ՀՆԱ-ի 60%-ը՝ պահպանելով 2014 և 2015 թվականների ձեռքբերումները:<br>5. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավել, քան 40%-ը | 2. 2025թ.-ի դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 %-ը, իսկ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 70%-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավել, քան 30%-ը: |
| 6. 2018-2020թթ. բոլոր տարածքային և տեղական զարգացման ծրագրերը համախմբված կլինեն ՏԶԳԾ 2018-2020թթ. ծրագրի ներքո: ՏԶԳԾ-ն լիովին կինտեգրվի միջնաժամկետ ծախսային ծրագրի շրջանակներում: | 3. 2017թ.-ին ՀՀ-ն կունենա տարածքային զարգացման քաղաքականության իրականացման մեկ ընդհանուր Տարածքային զարգացման գործառնական ծրագիր (ՏԶԳԾ), որը հիմք կհանդիսանա ՏԿԶՆ բյուջետային ծրագրերի նախապատրաստման և տարածքային զարգացման ծրագրերի բյուջետային աջակցության համար: |

171. Քանի որ ՏԶ հիմնական կատարողական ցուցանիշների որոշ մասը այլ գերատեսչությունների ազդեցության ոլորտում է՝ ՏԶԳԾ-ն չի կարող ուղղակիորեն ապահովել դրանք, բայց այն կնպաստի դրանց իրականացմանը կառավարության այլ քաղաքականությունների և ծրագրերի շրջանակում՝ տնտեսական զարգացում, մասնավոր հատված զարգացում, գյուղատնտեսություն և գյուղական զարգացում, և այլն:

172. Սահմանվել են **Ծրագրի արդյունքների** հետևյալ հիմնական **ցուցանիշները,** որոնք ուղղակիորեն արտացոլված են նաև մարզային զարգացման ռազմավարություններում.

1) Ստեղծված ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի քանակ- **5,000**
2) Հիմնված ձեռնարկությունների քանակ- **2,000**
3) Մրցունակության զգալիորեն աճ արձանագրած ձեռնարկությունների քանակ (> 10% եկամուտ,> 5% զբաղվածություն) - **4,000**
4) Մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրերին մասնակցող անձանց թվաքանակի ավելացում– **5%**
5) Նոր կամ բարելավված հանրային ենթակառուցվածքներ և ծառայություններ օգտագործող անձանց քանակ–**75,000**

**6)** Շրջակա միջավայրի պաշտպանության և վերականգնվող / արդյունավետ էներգիայի համար նոր կամ բարելավված ենթակառուցվածքներ օգտագործող անձանց թիվ–**20,000**

173. Տարածքային զարգացման համար միջամտությունների և գործիքների **համախմբումն ու փոփոխությունը** ՏԶԳԾ-ի ներքո կապահովվի՝

1) Առկա տարածքային զարգացման համապատասխան միջամտությունների ոլորտների վերանայումը և դրանց հաստատումը (որքան հնարավոր է) ըստ ՏԶԳԾ գերակայությունների, միջոցառումների և ծրագրերի մրցակցային ընտրության մեխանիզմի չափանիշների:
2) Ենթակառուցվածքների և ծառայությունների վերաբերյալ ծրագրերի իրականացում՝ կենտրոնանալով տնտեսական զարգացմանը նպաստող ինտեգրված ծրագրերի վրա:
3) Ուշադրության կենտրոնում պահել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ որպես զարգացման առանցքային դերակատարների:
4) ՏԶԳԾ ավելի ընդարձակ ենթածրագրերի ներկայացում, հատկապես հիմք ընդունելով ընթացիկ պիլոտային տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագիրը, որը իրականացվում է ԵՄ-ի կողմից և համաֆինանսավորվում է ՀՀ կառավարության կողմից:

174. **ՏԶԳԾ-ն ունի հետևյալ կառուցվածքը.**

1) **Առանցքային գերակայություններ՝** կազմված առաջնահերթություններից,
2) **Գերակայություններ՝** կազմված միջոցառումներից,
3) **Միջոցառումներ՝** կազմված գործողություններից, որոնք պարունակում են.
   ա. Գործողությունների տեսակ
   բ. Շահառուների տեսակներ (ծրագրի իրականացնողներ)
   գ. Կիրառվող ֆինանսական գործիքներ
   դ. Ծրագրերի պլանավորված չափեր
   ե. Ծրագրի ընտրության հիմնական չափորոշիչներ
   զ. Ծրագրի հիմնական արդյունքային ցուցիչներ:

175. Ստորև ներկայացված է ՏԶԳԾ հիմնական կառուցվածքը.

<table>
<tr>
<td>**1-ին առանցքային գերակայություն**<br>**Տարածքային համախմբում**<br>**Հանրային ենթակառուցվածքների արդիականացում՝ ապահովելով սոցիալական համախմբվածություն և բնապահպանական կայունություն**<br>*Միջոցների բաշխում մարզերի միջև՝ հիմնականում հիմք ընդունելով բնակչության թվաքանակի չափորոշիչը, կարգավորված սոցիալ-տնտեսական ցուցանիշներով՝ ՀՆԱ մեկ շնչի հաշվով, աղքատության մակարդակ և այլն (բոլոր համայնքները և այլ իրավասու կազմակերպությունները մրցակցում են յուրաքանչյուր մարզի մակարդակում առկա միջոցների համար)*<br>*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների 35%-ը (նախնական)*<br><br>1-ին գերակայություն՝մարզային և տեղական ենթակառուցվածքների բարելավում<br>(տրանսպորտ, ջուր, գազ, էներգիա, և այլն)<br><br>*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների առնվազն 10%-ը (նախնական, տեղափոխելի 1-3 գերակայությունների միջև)*<br><br>2-րդ գերակայություն՝ սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավում<br>(կրթություն, առողջապահություն, սոցիալական աջակցություն, սպորտ և ժամանց, մշակույթ)<br><br>*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների առնվազն 10%-ը (նախնական, տեղափոխելի 1-3 գերակայությունների միջև)*<br><br>3-րդ գերակայություն՝ բնապահպանություն, էներգաարդյունավետություն, և կլիմայի փոփոխություն<br>(պահպանվող տարածքներ, կոշտ թափոններ և կեղտաջրերի կառավարում, էներգաարդյունավետություն և վերականգնվող էներգիա, և այլն)<br><br>*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների առնվազն 10%-ը (նախնական, տեղափոխելի 1-3 գերակայությունների միջև)*</td>
<td>**2-րդ առանցքային գերակայություն**<br>**Տարածքային մրցունակություն**<br>**Մարզային զբաղվածության և մրցունակության խթանում**<br>*Միջոցների բաշխում ազգային մակարդակում՝ հիմնականում հիմք ընդունելով մրցող հայտերի չափորոշիչները, ինչպիսիք են՝ ազդեցություն տնտեսական աճի և զբաղվածության վրա, ռազմավարական համապատասխանությունը ՏԶ նպատակներին և մարզային գերակայություններին, իրագործելիությունը, ծախսերի արդյունավետությունը:*<br>*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների 60%-ը (նախնական)*<br><br>4-րդ գերակայություն՝ գործարարության ենթակառուցվածքների զարգացում<br>(արդյունաբերական պարկեր, գյուղմեխանիզացիայի պարկեր, ոռոգման ցանցեր, ճանապարհներ դեպի գյուղ. նշանակության հողեր, գյուղ. տնտեսություններ և բիզնես միավորներ)<br>*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների 20%-ը (նախնական, տեղափոխելի 4-6 գերակայությունների միջև)*<br><br>5-րդ գերակայություն՝մարզային զբաղվածության, ձեռնարկատիրության խթանում (գերակա ուղղություններ՝ գյուղ. մթերքների վերամշակում, տուրիզմ, ՏՏ, հետազոտում, զարգացում, նորարարություններ)<br>*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների 30%-ը (նախնական, տեղափոխելի 4-6 գերակայությունների միջև)*<br><br>6-րդ գերակայություն՝ քաղաքային աճի բևեռների զարգացում<br>(ընդարձակ քաղաք / տեղական տնտեսական զարգացման միջամտություններ՝ տարածքային աճի բևեռների համար)<br>*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների 10%-ը (նախնական, տեղափոխելի 4-6 գերակայությունների միջև)*</td>
</tr>
<tr>
<td colspan="2">**3-րդ առանցքային գերակայություն**<br>**Տարածքային զարգացման կառավարման բարելավում**<br>*միջոցների բաժանում՝ հիմնվելով հատուկ չափորոշիչների վրա*<br>*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների 5%-ը*<br>7 –րդ գերակայություն՝ տեխնիկական աջակցություն<br>(Ծրագրի իրականացման աջակցություն և կարողությունների զարգացում)<br>*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների 1%-ը*<br>*(ակնկալվում է, որ ծախսերը տրամադրվելու են ԵՄ առկա միջոցներից)*<br><br>8 –րդ գերակայություն՝ խթաններ և հատուկ միջոցառումներ</td>
</tr>
</table>

(ֆինանսական խթաններ ամենալավ կատարողական ունեցող մարզերին և համայնքներին՝ հատուկ միջոցառումներ, ինչպիսիք են ճանաչողական այցեր, և այլն)
*Ընդհանուր ՏԶԳԾ միջոցների 4%-ը (նախնական՝ 2% ֆինանսական խթանների, և 2%՝ հատուկ միջոցառումների համար)*

176. ՏԶԳԾ գերակայությունների և միջոցառումների ցանկը ներկայացվում է ստորև:

**1) 1-ին առանցքային գերակայություն՝ Տարածքային համախմբում, Հանրային ենթակառուցվածքների արդիականացում՝ ապահովելով սոցիալական համախմբվածություն և բնապահպանական կայունություն**

ա. 1-ին գերակայություն՝ մարզային և տեղական ենթակառուցվածքների ցանցերի բարելավում (տրանսպորտ, ջուր, գազ, էներգիա, ՏՏ և այլն)

Միջոցառում 1.1 – տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացում

Միջոցառում 1.2 – Խմելու ջրի ենթակառուցվածքի զարգացում

Միջոցառում 1.3 – Գազամատակարարման ենթակառուցվածքների զարգացում

Միջոցառում 1.4 – Էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման զարգացման

Միջոցառում 1.5 – Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացում

բ. **2-րդ գերակայություն՝** սոցիալական ենթակառուցվածքի և ծառայությունների բարելավում (կրթություն, առողջապահություն, սոցիալական աջակցություն, սպորտ և ժամանց, մշակույթ):

Միջոցառում 2.1 – Կրթության զարգացում

Միջոցառում 2.2 – Առողջապահական ենթակառուցվածքների զարգացում

Միջոցառում 2.3 – Սոցիալական աջակցության ենթակառուցվածքների և ծառայությունների զարգացում

Միջոցառում 2.4 – Սպորտի, հանգստի և մշակույթի զարգացում:

գ**. 3-րդ գերակայություն՝** բնապահպանություն, էներգաարդյունավետություն և կլիմայի փոփոխություն (պահպանվող տարածքներ, կոշտ թափոններ և կեղտաջրերի կառավարում, էներգաարդյունավետություն և վերականգնվող էներգիա, և այլն):

Միջոցառում 3.1 – Շրջակա միջավայրի պահպանություն

Միջոցառում3.2 – Էներգաարդյունավետություն և կլիմայի փոփոխություն:

**2) 2-րդ առանցքային գերակայություն՝ տարածքային մրցունակություն - Մարզային զբաղվածության և մրցունակության խթանում**

ա. 4-րդ գերակայություն՝ գործարարության ենթակառուցվածքների զարգացում (արդյունաբերական պարկեր, գյուղմեխանիզացիայի պարկեր, ոռոգման ցանցեր, ճանապարհներ դեպի գյուղ. նշանակության հողեր, գյուղատնտեսական տնտեսություններ և բիզնես միավորներ):

Միջոցառում 4.1 – Արդյունաբերական պարկերի և նմանատիպ ենթակառուցվածքների զարգացում

Միջոցառում 4.2 – Գյուղմեխանիզացիայի պարկերի զարգացում

Միջոցառում 4.3 – Ոռոգման ցանցերի զարգացում

Միջոցառում 4.4 – Ճանապարհներ դեպի գյուղ. նշանակության հողեր, գյուղ. տնտեսություններ և բիզնես միավորներ

բ) 5-րդ գերակայություն՝մարզային զբաղվածության, բիզնես և ձեռնարկատիրության խթանում (գերակա ուղղություններ՝ գյուղատնտեսական մթերքի վերամշակում, տուրիզմ, ՏՏ, հետազոտում, զարգացում, նորարարություն)

Միջոցառում 5.1 – ինտեգրված տարածքայինտարածքային զբաղվածություն, ձեռնարկատիրության և ձեռներեցության զարգացում

Միջոցառում 5.2 – Անահատական աջակցություն միկրո ձեռնարկություններին

գ)6-րդ գերակայություն՝ քաղաքային աճի բևեռների զարգացում (ընդարձակ քաղաք / տեղական տնտեսական զարգացման միջամտություններ՝ տարածքային աճի բևեռների համար)

Միջոցառում 6.1 – Քաղաքային կենտրոնների զարգացում

**3)3-րդ առանցքային գերակայություն՝ տարածքային զարգացման կառավարման բարելավում**

7 –րդ գերակայություն՝ տեխնիկական աջակցություն (ծրագրի իրականացման աջակցություն և կարողությունների զարգացում)

Միջոցառում 7.1 – Տեխնիկական աջակցություն

ա. 8 –րդ գերակայություն՝ խթաններ և հատուկ միջոցառումներ (ֆինանսական խթաններ ամենալավ կատարողական ունեցող մարզերին և համայնքներին՝ հատուկ միջոցառումներ, և այլն)

Միջոցառում 8.1 – Ֆինանսական խթաններ

Միջոցառում 8.2 – Հատուկ աջակցության միջոցառումներ

## 1–ԻՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ

# ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ և ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

177. 1 – ին առանցքային գերակայությունը՝ տարածքայինտարածքային համախմբումը, առնչվում է՝

1) Հիմնական տարածքային և տեղական ենթակառուցվածքների զարգացմանը (Գերակայություն 1)
2) Սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավմանը (Գերակայություն 2)
3) Մարզերի կողմից բնապահպանական խնդիրների վերաբերյալ գործողությունների, Էներգաարդյունավետության, կլիմայի փոփոխության հաստատմանը (Գերակայություն 3):

178. Այս առաջնահերթությունը օգնում է նվազեցնելու կամ փակելու ամենակարևոր բացթողումները մարզերի ներսում և մարզերի միջև՝ տրամադրելով անհրաժեշտ ենթակառուցվածքներ հետ մնացող տարածքներին: Չնայած բազմաթիվ ենթակառուցվածքներ և ծառայություններ տրամադրվում են պետական հաստատությունների կողմից, տեղական հանրային մարմինները կարող են տրամադրել գաղափարներ, բարելավել ռեսուրսները և հաջողությամբ իրականացնել այնպիսի փոփոխություններ, որոնք նման ենթակառուցվածքները և ծառայությունները կդարձնեն ավելի մատչելի և արդյունավետ: Օրինակ՝ երկու կամ երեք համայնքապետարաններ կարող են որոշում կայացնել հիմնելու մեկ միասնական նախակրթարան, որը ավելի կծառայի տեղի բնակչությանը, կունենա լավ շինություն (ներ), սարքավորումներ, տրանսպորտային միջոց (դպրոցական ավտոբուս): Նման քայլը բարելավում է կրթական պայմանները (կրթության որակի բարձրացում), և ապահովում է արդյունավետության բարձրացում:

179. Ծրագրի արդյունքի ցուցանիշները՝ կապված I –ին առանցքային գերակայությանը, հետևյալ են՝

| | |
|---|---|
| **ՏԶԳԾ Արդյունքի ցուցանիշներ** | Մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրերին մասնակցող անձանց թվաքանակի ավելացում – **5%** |
